ԱՐԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 3

7.925)
-31

ԱՌԵՏԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ 1997

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1997 թ. հունվարին երկու հատորով հրատարակեցինք 1994-96 թթ. Լոս Անջելեսի հայկական մամուլում լույս տեսած մեր գիտական հոդվածները ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ խորագրով:

ՆՈՐ ՕՐ Եռօրեայի խմբագրությանը ուղված մեր նամակում ի լուր հանրության հայտնեցինք նաև մեր բուռն ցանկությունը, որ նման խորագրի տակ, բայց պաշտոնական տարազով լույս տեսնի մի մատենաշար և պարբերաբար հրատարակվի տարին մեկ կամ երկու անգամ:

Ցավոք, մեր այս առաջարկը դեռևս արձականգ չգտավ որևէ կազմակերպության կողմից:

Լիահույս ենք, որ այն ապագային կարժանանա հատուկ ուշադրության:(Այս մասին տե՛ս սույն հատորի էջ 80):

Այնուհանդերձ, մենք շարունակում ենք մեր համեստ ուժերով հրատարակել այս մատենաշարի երրորդ հատորը[1], ուր հիմնականում ընդգրկված են վերջերս հայկական մամուլում լույս տեսած մեր գիտական հոդվածները, վավերագրական նյութերը, նամակները և գրախոսականները:

---

1. Առաջին և երկրորդ հատորի բովանդակությունը տե՛ս էջ 82-83:

ԱՏՈՐՈՒՄՆԵՐ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 82-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ

1915 թ. Երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութիւնը կանգնեց ի սպառ ոչնչացման վտանգի առջեւ: Նիւթական հսկայական կորստի հետ մէկտեղ հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից՝ Արեւմտեան Հայաստանից, տալով մէկուկէս միլիոնից աւելի անմեղ զոհեր:

Այսօր 1997 թուականն է եւ Ապրիլի 24-ին լրանում է հայ ժողովրդի նկատմամբ գործադրուած այդ մեծ ողբերգութեան 82-րդ տարելիցը:

Երախտագիտութեամբ պիտի նշենք, որ առ այսօր աշխարհի մի շարք երկրների կառավարութիւնների կողմից Ապրիլի 24-ը պաշտօնապէս յայտարարուած է որպէս հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր:

Այո՛, Սուլթան Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում հայերի բնաջնջման վերաբերող նենգ արարքները նոյնութեամբ որդեգրեցին նաեւ 1908 թ. իշխանութեան գլուխ եկած երիտթուրքական կառավարութիւնն ու «Իթթիհատ վէ Թերաքի» (Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխները: Նրանք իրենց հայաջինջ ծրագրերը իրագործեցին Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Եւ սկսեցին կանխամտածուած ծրագրով եւ այդ նպատակի համար ստեղծուած «Թէշքիլաթ-ը Մահսուսէ»-ի (յատուկ կազմակերպութեան) արիւնարբու հրոսակախմբերի միջոցով կոտորել հայերին:

Եւ այդպէս հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրեցին արեւմտահայութեանը ի սպառ բնաջնջելու ճանապարհը:

1915 թ. Եղեռնով հայ ժողովրդի համար սկսուեց տառապանքներով լի դաժան մի շրջան: Մի կողմից հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը իր բնիկ ժողովրդից, իսկ միւս կողմից ողջ մնացածները անտուն – անհայրենիք ցրուեցին աշխարհով մէկ, մի մասն էլ գաղթեց դէպի Արեւելեան Հայաստան:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Անդրկովկասում իրավիճակը կտրուկ փոխուեց այն բանից յետոյ, երբ Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում ընդունեց ցարական զօրքերը դուրս բերել Թուրքահայաստանից: Թուրքական կառավարութիւնը ձգտեց անմիջապէս օգտուել ստեղծուած այդ իրադրութիւնից եւ տիրանալ ամբողջ Հայաստանին եւ ընդհանրապէս Կովկասին: Եւ այդպէս, 1918 թ. Փետրուարի կէսերին Թուրքական բանակը յարձակման անցաւ ամբողջ Կովկասեան ռազմաճակատով:

Բարեբախտաբար, ամբողջ Հայաստանը գրաւելու Թուրք նուաճողների ծրագրին խանգարեցին Սարտարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի համաժողովրդական հերոսամարտերը, որոնց հետեւանքով Թուրքական զօրքերը ետ շպրտուեցին:

Իրօք, որ այդ հերոսամարտերը իրենց բնոյթով ազգային-ազատագրական համաժողովրդական պայքար էին եւ դրանց արգասիքը եղաւ այն, որ վերականգնուեց հայ ժողովրդի դարերից ի վեր երազած ազգային պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Թւում էր թէ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութիւնը աստիճանաբար պիտի յաղթահարէր առկայ քաղաքական եւ տնտեսական դժուարութիւնները բայց արտաքին ուժերի դաւադիր գործարքների հետեւանքով այլ ճակատագիր ունեցաւ:

Չնայած 1918 թ. Հոկտեմբերի 30-ին Մուտրոսում զինադադարի պայմանագիրը ստորագրուեց եւ Առաջին համաշխարհային պատերազմում պարտութիւն կրած Թուրքական բանակը հեռացաւ Հայաստանի մի շարք նահանգներից, այնուհանդերձ քեմալականների նուաճողական քաղաքականութեան հետեւանքով, Քէազիմ Քարաբեքիրի բանակը 1920 թ. Սեպտեմբերի 23-ին ներխուժեց Հայաստանի սահմաններից ներս, գրաւելով նոյնիսկ Ալեքսանդրապոլը:

Ե՛ւ այդպէս, Թուրքական եւ յետագայում էլ Խորհրդային Ռուսաստանի զօրքերի կողմից Հայաստանի Հանրապետութեանը հասցուած հարուածների հետեւանքով այնքան էր թուլացել, որ Հայաստանի կառավարութիւնը ստիպուած եղաւ ընդունել Ռուսաստանի վերջնագիրը եւ Դեկտեմբերի 2-ին համաձայնագիր ստորագրուեց, իշխանութիւնը պոլշեւիկներին յանձնելու մասին:

Հարց է առաջանում, թէ ի՞նչ արեցին դաշնակիցները: Սիրիայում եւ Միջագետքում իրենց շահերը ապահովելուց յետոյ, Հայաստանը թողեցին բախտի քմահաճոյքին:

Անհետեւանք մնաց նաեւ 1920 թ. Օգոստոսի 10-ի Սեւրի պայմանագիրը, որի հետ մեծ յոյսեր էր կապում հայ ժողովուրդը: Ըստ Սեւրի պայմանագրի 88-93 յօդուածների Թուրքիան ճանաչում էր Հայաստանը, որպէս ազատ եւ անկախ պետութիւն: Սակայն, ինչպէս յայտնի է, այն չվաւերացուեց Քեմալական շարժման եւ դաշնակից պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող սուր հակասութիւնների հետեւանքով:

Սեւրի պայմանագրի չիրագործուելու հիմնական պատճառներից մէկն էլ Խորհրդային Ռուսաստանի բացասական դիրքորոշումն էր պայմանագրի նկատմամբ եւ Քեմալական շարժմանը նրա ցոյց տուած օգնութիւնը: Եւ այս բոլորի վերջնական արդիւնքը եղաւ այն, որ Մոսկուայում 1921 թ. Մարտի 16-ին առանց հայկական պատուիրակութեան մասնակցութեան կնքուեց «բարեկամութեան եւ եղբայրութեան» թալանչիական-հակահայկական պայմանագիրը: Թուրքիայի կողմն անցան ոչ միայն Կարսի մարզը, այլեւ Սուրմալուի գաւառը: (Այս մասին մանրամասն տե՛ս Երուանդ Սարգսեան, Դաւադիր Գործարք, Հայաստան - Ռուսաստան - Թուրքիա, Երեւան, 1995):

Խափանուեց նաեւ ԱՄՆ-ի նախագահ Վուտրո Ուիլսոնի Հայաստանի մանտատը ստանձնելու նախաձեռնութիւնը: Հետագայում 1923 թ. տեղի ունեցած Լոզանի հաշտութեան պայմանագրում նոյնիսկ չյիշատակուեց Հայաստանի եւ հայերի անունը, քանի որ հայ գաղթականների հարցը փոխանցուեց Ազգերի Լիկայի քննարկմանը: Եւ այդպէս Թուրքիան տէր դարձաւ ամբողջապէս Արեւմտեան Հայաստանին եւ Կիլիկիային:

Այնուհետեւ 40 երկար տարիներ լռութեան մատնուեց Հայկական հարցն ու Մեծ Եղեռնը:

Եւ ահա երկրորդ Համաշխարհային պատերազմի աւարտին սփիւռքահայութեան ներդրած գործունեայ ջանքերի շնորհիւ կրկին օրակարգի նիւթ դարձաւ Արեւմտեան Հայաստանը Խորհրդային Հայաստանին միացնելու հարցը եւ աշխարհով մէկ ցրուած հայութեան մէկտեղումը իրենց բնօրրանում:

Այս առթիւ սփիւռքահայ տարբեր կազմակերպութիւններ դիմեցին յաղթական պետութիւնների ղեկավարներին, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգների կազմակերպութեան առաջին խորհրդաժողովներին (Ապրիլ 1945 թ. Սան - Ֆրանսիսկո, Յունուար 1946 թ. - Լոնտոն):

1945 թ. Նոյեմբերի 29-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ 6-րդ դիմեց ԱՄՆ-ի ՍՍՀՄ-ի եւ Անգլիայի կառավարութիւններին, որպէսզի Թուրքիայի հայկական նահանգները միացուն Խորհրդային Հայաստանին: 1945 թ. Յունիսին Մոսկուայում տեղի ունեցած ռուս-թուրքական բանակցութիւններում արծարծուեց Կարսի, Արտահանի, Արտուինի Հայաստանին միացնելու հարցը, բայց այն մնաց անհետեւանք:

1915 թ. Մեծ Եղեռնի ճանաչման եւ դատապարտման հարցը միջազգային չափանիշներով լայն ծաւալ ստացաւ 1960-ական թուականներին՝ օրակարգի հարց դառնալով ոչ միայն հասարակական - քաղաքական, այլեւ պետական պաշտօնական շրջանակներում եւ միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններում: Այն սկսուեց պետական մակարդակով դատապարտուել Ամերիկայի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի մի շարք երկրներում, հայերի մոռացած ցեղասպանութիւնը բնութագրելով, որպէս ահաւոր յանցագործութիւն ուղղուած աշխարհի մարդկութեան դէմ:

Իսկ 1995 թ. հայոց Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախաշեմին եւ յետոյ աշխարհի մի շարք երկրների խորհրդարաններում, կրկին բուռն, թափ է ստանում հայերի ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հարցը: Հայերի ցեղասպանութիւնը դատապարտուեց Հայաստանի, Պուլկարիայի, Ուրուկուէի, Արժանթինի, Գանատայի, Յունաստանի, ինչպէս նաեւ Հոլանդիայում կազմաւորուած քրդական խորհրդարանների կողմից: Իսկ այս վերջին օրերին Լիբանանի խորհրդարանում եւս:

Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախօրէին կարեւորագոյն նուաճումներից մէկն էր Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տումայի (Խորհրդարան) ընդունած որոշումը հայերի ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին, որը ըստ արժանւոյն մեծ արձագանգ գտաւ ամբողջ աշխարհում:

Այսպէս, 1995 թ. Ապրիլի 14-ին Ռուսաստանի Տուման իր լիագումար նիստում քննարկելով 1915-1922 թթ. հայերի ցեղասպանութեան դատապարտումին վերաբերող բանաձեւը, պատգամաւորների լիակատար միաձայնութեամբ ընդունեց խիստ կարեւոր որոշում, յայտարարելով, որ «Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տուման՝ դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին: Արտայայտում է իր խոր կարեկցանքը հայ ժողովրդին եւ Ապրիլ 24-ը դիտում է որպէս ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»:

Յայտնի է, որ ԱՄՆ-ի ծերակոյտն ու ներկայացուցիչների պալատը բազմիցս անդրադարձել են հայերի ցեղասպանութեան քննարկման եւ տեւապէս ձգտում է եղել ցեղասպանութիւնը դատապարտելու եւ հայանպաստ բանաձեւ ընդունելու: Բայց եւ այնպէս այն դեռեւս իր վերջնական լուծումը չի գտել: Եւ ահա 1995 թ. Ապրիլի 22-ին ԱՄՆ-ի նախագահ՝ Պիլ Քլինթընը հրապարակեց հայանպաստ մի յայտարարութիւն: Այնուհանդերձ նախագահը զգուշացաւ ցեղասպանութիւն բառը օգտագործելու միտումից: Եթէ նախագահ Պիլ Քլինթընն քաղաքական նկատառումներով զգուշացաւ ցեղասպանութիւն բառը օգտագործելուց, այնուհանդերձ, ԱՄՆ-ի 50 ծերակուտականներ խստագոյն կերպով դատապարտեցին հայերի ցեղասպանութիւնը եւ բանաձեւի նախագիծ առաջադրեցին ներկայացուցիչների պալատ:

Այնուհետեւ եղան այլ զօրակցութիւններ եւս, որոնք շարունակւում են մինչեւ այսօր: Այսպէս, ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան նորեկ հանրապետական, գոնկրէսմէնների խմբաւորումի նախագահ՝ Ճորճ Ռատանովիչը, Մարտ 7, 1996 թուակիր նամակով կոչ արեց իր պաշտօնակիցներին, որպէսզի աջակցին հայերի ցեղասպանութեան բանաձեւի (H. Con, Kes, 47) վաւերացմանը: Իսկ Յունիսի 6-ին, 1996 թ. ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տունը, ձայների մեծամասնութեամբ բանաձեւ ընդունեց, կրճատել Թուրքիային տրուող տարեկան օժանդակութիւնը, մինչեւ որ Թուրքիան ճանաչի իր մեղսակցութիւնը հայերի ցեղասպանութեան խնդրում եւ վերջ տայ Հայաստանի շրջափակումին:

Իսկ վերջերս 1997 թ. Մարտի 21-ին Ճորճ Ռատանովիչը եւ գոնկրէսական Տէվիտ Պանիերը հայերի ցեղասպանութեան վերաբերող կրկին մի բանաձեւ ներկայացրին գոնկրէսի ներկայացուցիչների Տուն, որպէսզի ճանաչուի եւ ոգեկոչուի հայերի ցեղասպանութիւնը եւ Թուրքիան ճանաչի 1915-23 թուականներին Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան նկատմամբ գործադրած բռնութիւնները: Իսկ Ապրիլի 2-ին Ճորճ Ռատանովիչը Երեւանում Միծեռնակաբերդի ցեղասպանութեան թանգարանին մէջ տուած ամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ «բոլոր պետութիւնները, ներառեալ Թուրքիան, պէտք է ճանաչեն հայերի, ցեղասպանութիւնը, որպէսզի թոյլ չտրուի նմանօրինակ մի նոր ոճիր:

Եւ ահա վերադառնալով ԱՄՆ Ճորճ Ռատանովիչը, ներկայացուցիչների Տան Միջազգային յարաբերութիւնների յանձնաժողովի

նախագահ՝ Պենճընին Կլլմընին Ապրիլ 8 թուագրեալ նամակով առաջարկեց անյապաղ օրակարգի հարց դարձնել հայերի ցեղասպանութեան բանաձեւը (H. Con. Kcs. 55), մատնանշելով, որ «Այս պատմական ողբերգութեան դիմաց մեր աչքերը փակելը ոչ միայն անպատուութիւն պիտի ըլլայ մահացած միլիոնաւոր հայորդիներուն համար, այլ նաեւ ամօթ մը անցեալին զոհուած բոլոր անմեղներուն համար»: (Տես՝ «Ասպարէզ» Ապրիլ 10, 1997, էջ 1):

Եւ ի զուր չէ, որ ՃՈՐՃ Ռատանովիչը սոյն թուականի Մարտի 9-ին Ֆրէզնոյում կազմակերպուած հայահոծ հանդիսութեան ընթացքում Հ.Յ. Դաշնակցութեան Գալիֆորնիայի Հայ դատի Յանձնախումբի կողմից հռչակուեց «Տարուան Մարդ»ը: Բնականաբար մեր պահանջատիրութեան յաջողութեան գործում մեծ նպաստ են բերում նման ուղղամիտ պետական գործիչներ, որոնց թիւը գնալով չատանում է թէ ԱՄՆ-ում եւ թէ աշխարհի այլ երկրներում:

Զնայած 1915 թ. հայերի ցեղասպանութեան հետ անմիջական առնչութիւն չունի, բայց վերջերս թերթելով հայ մամուլի էջերը նկատեցինք, որ առանձին ռուս պետական գործիչների մօտ արդարութիւնը բացայայտելու տրամադրութիւնները առաւել ակնյայտ են դառնում: Առաջին հերթին ես նկատի ունեմ խորհրդային Ռուսաստանի նախկին վարչապետ եւ այսօր Տումայի անդամ Նիքոլայ Ռիժքովի օրերս Երեւան կատարած այցելութիւնը, ուր նա կատարեց մի չարք կտրուկ յայտարարութիւններ եւ քննադատութիւններ: Խօսենք փաստերով:

Օրինակ. - Նա յայտարարեց, որ «Նախկին Խորհրդային դեկավարութեան եւ անձամբ Կորպաչովի վերաբերմունքը Սումգայիթի դէպ-քերի նկատմամբ սխալ էր, քանի որ անհրաժեշտ էր այդ իրադարձու-թիւններին ճիշդ գնահատական տալ: Ռիժքովը Պաքուի եւ Սումգայիթի հայերի ցեղասպանութեան կապակցութեամբ կատարեց նաեւ հետեւեալ քննադատութիւնը.

«Ամէն տարի Յունուարին նշում է 1990 թ. Պաքուի իրադարձութիւնների զոհերի յիշատակը, յիշում են սոսկ զոհուած ատրպէյճանցիներին եւ ոչ ոք, ոչ Պաքուում, ոչ Մոսկուայում, մի բառով անգամ չի յիշատակւում այդ օրերին գազանաբար սպաննուած հայերին, որոնց ծանակումները շարունակում էին մէկ շաբաթուայ ընթացքում»:

«Ես եմ ցուցում տուել զօրքեր մտցնել Պաքու 1990 թ. Յունուարին: Եւ չեմ ափսոսում, քանի որ մէկ շաբաթ շարունակ այդ քաղաքում սպաննում եւ բռնի տեղահանում էին հայերին: Այն պայմաններում, երբ Կորպաչովը, ինչպէս միշտ այդպիսի իրավիճակներում, վախից թաքնւում էր:

Յիշատակութեան արժանի է նաեւ վերջերս նոյնպէս Երեւան այցելած Տումայի պատուիրակութեան անդամ Եուրի Նեստերովի այն յայտարարութիւնը, որը առնչւում էր Տումայի պաշտպանութեան յանձնախումբի նախագահ զօր. Լեւ Ռոխլինի հակահայկական այն ակնարկին, որ Հայաստան պէտք է ճանչնայ Ատրպէյճանի հողային ամբողջականութիւնը եւ հեռանայ իր բռնագրաւած հողատարածքից, քանի որ այդ կապակցութեամբ Մոսկուայի եւ Ատրպէյճանի յարաբերութիւնները օրստօրէ վատանալու վրայ են:

Իսկ Եուրի Նեստերովը հարցը դնում էր այսպէս. «Ռուսաստանում անհնար է անցկացնել որեւէ հակահայկական գիծ, քանի որ ռուսական հասարակական կարծիքը վաղուց եւ աւանդաբար հայամէտ է եւ այդպէս, կը լինի միշտ: Մենք Հայաստանի հետ ենք եւ Հայաստանը մեզ հետ»:

Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման հինգերորդ տարեդարձի առթիւ, նոյն միտքը արտայայտեց նաեւ Հայաստանի Հանրապետութիւնում Ռուսաստանի Արտակարգ եւ լիազոր դեսպան՝ Անտրէյ Ուռնովը, որ «Ռուս-հայկական յարաբերութիւնները լաւ հեռանկարներ ունեն: Մենք եղել ենք եւ կը լինենք միասին»: (տե՛ս «Նոր Հայաստան) Ապրիլ 4, 1997, էջ 1):

Երբեմն շատ է խօսւում հայերի ցեղասպանութեան նկատմամբ Հայաստանի Հանրապետութեան ներկայ կառավարութեան դիրքորոշման կամ մօտեցման ձեւերի մասին: Բոլոր դէպքերում պաշտօնական շրջանակներում կատարուած յայտարարութիւնները ճիշդ են եւ դրական: Օրինակ, սոյն թուականի Մարտի 19-ին Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի փոխ նախարար Վարդան Օսկանեանը ՄԱԿ-ի մարդկային իրաւունքների յանձնախումբի ժողովում, իր ելոյթում, յատուկ նշեց, որ 1915 թ. Օսմանեան Թուրքիայի կողմից հայերի ջարդը դրօշմուած կը մնայ հայ ժողովրդի հաւաքական յիշողութեան մէջ, որ այդ ոճիրը տակաւին չի ճանաչուած համաշխարհային հանրութեան կողմից: Ինչպէս Արցախի ինքնորոշման



ԽԱՉՔԱՐ՝ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ՝ ՄՈՄԻԿ, 1308 թ., ՆՈՐԱՎԱՆՔ՝ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆ:

իրաւունքի հարցը, այնպէս եւ ցեղասպանութեան կանխարգիլման եւ ճանաչման հարցը կը մնայ Հայաստանի օրակարգի վրայ»:

Յիշեցման կարգով նշենք նաեւ, որ 1995 թ. Ապրիլի 21-ին Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի արտահերթ նիստում 171 պատգամաւորների միաձայնութեամբ ընդունուեց բանաձեւ, որտեղ խիստ դատապարտելով հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, իր հաստատակամութիւնը յայտնեց հասնելու 1915 թ. հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը:

Կասկած չկայ, որ հայ ժողովրդի պահանջատիրութեան խնդրում Հայաստանն ու Սփիւռքը պէտք է լինեն միասնական, համագործակցեն ամենայն խորութեամբ եւ մշակեն մի ընդհանուր ծրագիր:

Բոլոր դէպքերում ներկայ իրավիճակում եւ ընդհանրապէս մենք՝ սփիւռքահայերս առաւելագոյն ջանքերով պէտք է սատար կանգնենք եւ հետապնդենք մեր արդար դատը: Իսկ եթէ նկատի ունենանք, որ աշխարհով մէկ սփռուած հայութիւնը ժառանգորդն է Մեծ Եղեռնից մազապուրծ ազատուած վերապրողների եւ կանգնած է ձուլման ենթարկուելու անդունդի եզրին, առ աւելի իրաւունք ունի իր ձայնը բարձրացնելու եւ կազմակերպուած ձեւով տէր կանգնելու իր արդար դատին, իր հողին:

Այդ տեսակէտից անհրաժեշտ է ըստ արժանւոյն բարձր գնահատել ՀՅԴ-ի Հայ Դատի Յանձնախումբի, Հայկական Համագումարի, ՌԱԿ-ի, Հայ Դատի Խորհրդի, Հնչակեան Կուսակցութեան եւ ընդհանրապէս բոլոր կազմակերպութիւնների եւ միութիւնների ներդրած ջանքերն ու գործունէութիւնները այդ ուղղութեամբ: Այդ բոլորը այսուհետեւ եւս, թող որ նոյն եռանդով եւ ոգով շարունակեն իրենց հայրենանուէր առաքելութիւնը:

Բայց միւս կողմից կարծում ենք, որ ժամանակն է Սփիւռքում ստեղծելու միասնական մի մարմին կամ յանձնախումբ, որը կ'ունենայ իր ներքին կանոնադրութիւնը բոլոր անհրաժեշտ պարագաներով, եւ մասնաճիւղերը հայաշատ բոլոր վայրերում:

Նշենք, որ անցեալում նման առաջարկութիւններ եւ փորձեր եղել են սփիւռքահայ մի շարք մտաւորականների կողմից: Այնպէս, որ մենք պաշտպանում ենք նրանց այդ խիստ կարեւոր տեսակէտը: Այդ յանձնախմբի անհրաժեշտութիւնն ու հրատապ լինելը փաստելու համար այստեղ բերում եմ հալէպահայ իրաւաբան՝ Ռուբէն Պողոսեանի այդ առթիւ լոյս տեսած մի յօդուածի հետեւեալ տողերը.

«Եթէ սփիւռքը կ'ուզէ շարժիլ որպէս պահանջատէր, հարկաւոր է նա'խ եւ առաջ ստեղծել «հայկական մնայուն մարմին» մը, որուն շուրջ հաւաքուին սփիւռքի բոլոր քաղաքական ուժերը: Եթէ այսպիսի նուաճում մը ձեռք չանցնենք՝ աւելորդ է այլեւս խօսիլ պահանջատիրութեան մասին, երբ չկայ միջազգայինօրէն ճանչցուած էութիւն մը, որ մարմնաւորէ եւ ներկայացնէ զմեզ յաչս միջազգային հաւաքականութեան»: (Տե՛ս «Անկախութիւն» երկշաբաթաթերթ, 21 Դեկտեմբեր 1995, էջ 5–6):

Հարկ է նշել, որ իր ժամանակին «Նոր Օր» թերթի նախկին խմբագիր՝ Յակոբ Պօղոսեանը առաջնորդող մի յօդուածում հանգամանալից անդրադարձել էր հրեական ողջակիզման հետեւանքով զուիցերիական դրամատուների մէջ զոհերի կողմից պահ դրուած գումարների եւ ոսկեղէնի խնդրի շուրջ, որի խորագիրն էր «Ողջակիզման զոհերու գումարներ եւ Զուիցերիական դրամատուներ...» (Տե՛ս «Նոր Օր» Հոկտեմբեր 30, 1996, էջ 2):

Այս յօդուածում խօսւում էր, թէ ինչպէս այսօր, հրէական կազմակերպութիւնները ողջակիզման վերապրողների ու ժառանգորդների համար 7-ից մինչեւ 20 միլիառ տոլարի հասնող վնասուց հատուցում էին պահանջում: Այնուհետեւ Յակոբ Պօղոսեանը, անդրադառնալով հայերի ցեղասպանութեան զոհերի թուրքական եւ օտար դրամատուներու մօտ պահ դրուած գումարների մասին, ցաւով նշում է, որ «Հայկական իրականութեան մէջ համապատասխան մարմին մը չէ ստեղծուած մեր խնդիրները ըստ արժանւոյն հետապնդելու համար: Մենք ոչ մէկ մարմին ունինք: Չենք ստեղծած: Չենք մտածած»:

Այո՛, հայ դատի, հայոց պահանջատիրութեան հետ առնչուող շատ հարցեր կան, որոնք պէտք է, որ տեւական ուշադրութեան կենդրոնում լինեն, յատուկ մի մարմնի կամ յանձնախմբի կողմից:

Իմ մասնագիտութեան բնոյթի բերումով թէ Երեւանում եւ թէ այստեղ եղել են դէպքեր, երբ առանձին մարդիկ եկել են ինձ մօտ, ձեռքերնին ունենալով դեղնած, խունացած փաթեթներ եւ մատնանշել, որ դրանք իրենց պապերից մնացած թղթեր են եւ ցանկանում են իմանալ դրանց բովանդակութիւնը: Ծանօթանալով այդ թղթերին բացատրել եմ նրանց, որ դրանք օսմաներէն՝ արաբատառ թուրքերէնով շարադրուած եւ կնքուած պաշտօնական փաստաթղթեր են, այդ թւում՝

կալուածագրեր, մուրհակներ, դրամատների ստացականներ, պայմանագրեր, անձնագրեր եւայլն: Եւ խորհուրդ էի տալիս, որպէս իրենց պապերից մնացած մասունք-յիշատակ պահել, մինչեւ որ պատեհ առիթը ներկայանայ այդ փաստաթղթերը հաւաքելու, ցուցակագրելու, ուսումնասիրելու եւ իրաւաբանի աչքով ընդհանուր յայտարարի բերելու:

Ի միջի այլոց, օսմաներէն նման փաստաթղթեր եւ ընդհանրապէս արխիւային այլ բազմաթիւ նիւթերը նկատի ունենալով էր, որ 1993 թ. հանդէս եկայ մի յօդուածով օսմաներէն լեզուի աղբիւրագէտ-մասնագէտ պատրաստելու նախաձեռնութեամբ, բայց ցաւոք սրտի ոչ մի արձականգ չգտայ: (Տե՛ս «Ե՞րբ ունենալու ենք մեր Օթթօ Ուուլֆէրը», «Ասպարէզ», Դեկտեմբեր 31, 1993):

Ես այն համոզմանն եմ, որ ժամանակի ընթացքում պիտի կորչեն եւ անհետանան այդ բոլոր փաստաթղթերը: Ուղղակի զարմանալի է, որ մինչեւ այսօր ոչ մէ կազմակերպութիւն չի զբաղուել այդ բոլորը հաւաքելու կամ պատճէնահանելու գործով: Բայց հիմա էլ ուշ չէ, ուղղակի պէտք է մտածել այդ մասին: Իր ժամանակին, թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում կազմակերպուել է Եղեռնից վերապրողների կենդանի խօսքն ու վկայութիւնները ձայնագրելու գործը: Հաւաքուել եւ հրատարակուել է աքսորից գրուած նրանց աղիողորմ նամակները, բայց վերոյիշեալ փաստաթղթերի հաւաքման կարեւոր գործը մնացել է անկատար:

Կրկին առաջ է գալիս միասնականութեան, մի ընդհանուր մարմնի, մի յանձնաժողովի ստեղծման կարեւոր հարցը, որպէսզի ուշադրութիւն դարձնի այս եւ այլ կարեւոր գործօնների վրայ:

Վերջերս «Հայկական Հարց» հանրագիտարանը գրախօսելու ընթացքում, 424–425 էջերում մեր ուշադրութիւնը գրաւեց մեր միասնականութեան վերաբերող հետեւեալ տողերը, որը բերում եմ ստորեւ նոյնութեամբ, եզրակացութիւնը թողնելով ընթերցողներին:

«1974-ին Հայ քաղաքական կուսակցութիւնները՝ առաջին անգամ կազմաւորեցին համազգային կենդրոնական մարմին՝ 1915-ի ցեղասպանութեան 60-ամեակի կապակցութեամբ գործողութիւնների միասնական ծրագիր մշակելու նպատակով: Նորաստեղծ կազմակերպութիւնը մեծ աշխատանք տարաւ համաշխարհային հասարակայնութեանը ծանօթացնելու 1915–23-ին Թուրքիայի վարած յանցաւոր քաղաքակա-նութեանը: Ընդունեց մի շարք պետութիւնների ղեկա-

վարներին, ՄԱԿ-ին, Եւրոխորհրդարանին, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին եւ այլ միջազգային կազմակերպութիւններին ուղղուած դիմում՝ հայկական հարցի բազմակողմանի քննարկման պահանջով, ապահովեց զանգուածային ցոյցեր ու ելոյթներ խրաքանչիւր համայնքում...»:

Ցաւօք, արդէն յաճախակի է դառնում, որ ամէն տարի Ապրիլին, Մեծ Եղեռնի տարելիցները նշենք անջատաբար, բաժան-բաժան: Ինչո՞ւ կուսակցութիւնների միջեւ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները պիտի անդրադառնան Մեծ Եղեռնի տարելիցները միասնաբար նշելու միջոցառումների վրայ: Ոչ միայն Ապրիլի 24-ին, այլեւ տարին 365 օր այդ խնդրում պէտք է յարատեւի միասնութիւնն ու համերաշխութիւնը: Այլապէս մենք չենք հասնի մեր սուրբ նպատակին:

Եզրակացնելով նշենք, որ շուտով իր աւարտին կը մօտենայ հայերի առաջին ցեղասպանութեան 20-րդ դարը եւ կը սկսուի 21-րդը: Բնականաբար նոր դարասկզբին կը լրանայ նաեւ Մեծ Եղեռնի 100-ամեայ տարելիցը: Այնպէս որ հսկայական աշխատանքներ կան կատարելու մեր պահանջատիրութեան խնդիրը իր դրական լուծումին հասցնելու ուղղութեամբ: Այո՛, մենք պէտք է օգտագործենք պատմագիտական, մշակութային, քաղաքական եւ ընդհանրապէս դիւանագիտական բոլոր ճանապարհները: Կազմակերպենք միջազգային գիտաժողովներ, հրապարակային մամուլի ասուլիսներ, հրատարակենք հանրամատչելի լեզուներով գրքեր, յօդուածներ: Յատուկ նամակներ յղել աշխարհի պետութիւնների խորհրդարաններին եւ ղեկավարներին: Կազմակերպել թանգարանային ցուցահանդէսներ, ստեղծել յատուկ կինոժապաւէններ նուիրուած Մեծ Եղեռնին եւ կատարել անհրաժեշտ միջոցառումներ:

Եւ վերջապէս.

Այս տարի լրացաւ հայ մեծանուն գրող՝ Եղիշէ Զարենցի ծննդեան 100-ամեակը: Երեւանում յոբելեանը կազմակերպող կառավարական յանձնաժողովը այդ առթիւ 1997-ը յայտարարեց Զարենցեան տարի:

Իսկ Եղիշէ Զարենցը մեզ պատգամել է «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

Ուրեմն եկէք լուռ խորհրդածենք այդ վեհ պատգամը կեանքի կոչելու ուղիների մասին:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՊՐՆ. ՊԻԼ ՔԼԻՆԹՕՆԻՆ

Մեծարգոյ Նախագահ

Նախ ի սրտէ շնորհաւորում եմ Ձեզ ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւնում ձեռք բերած ձեր փայլուն յաղթանակի եւ նախագահի պաշտօնում կրկին վերընտրուելու առթիւ: Բարեմաղթում եմ քաջառողջութիւն եւ յաջողութիւն Ձեր յետագայ գործընթացին: Թող որ այսուհետեւ եւս յարատեւի դեմոկրատիայի եւ ազատութեան սկզբունքները եւ առաւել բարգաւաճի ամերիկեան ժողովուրդը:

Ձեր նախագահական այս երկրորդ ժամանակաշրջանի պատմական կարեւոր նշանակութիւնը լինելու է այն, որ մեր մոլորակը շուտով թեւակոխելու է 3-րդ հազարամեակ՝ դէպի նոր դարաշրջան: Այդ տեսակէտից, որպէս աշխարհի հզօրագոյն պետութեան ղեկավար Ձեզ վրայ ընկնելու է խիստ կարեւոր եւ պատասխանատու պարտականութիւն աշխարհի ժողովուրդների բարօրութիւնն ու խաղաղութիւնը յարատեւ եւ հաստատուն պահելու սուրբ գործում:

Ինչպէս գիտէք, 20-րդ դարը ապրեց երկու համաշխարհային պատերազմների ծանր արհաւիրքները, որոնք պատճառ հանդիսացան միլիոնաւոր մարդկանց կորստեան, ծանր հոգսեր եւ տառապանքներ պատճառելով համայն աշխարհի ժողովուրդներին: Դժբախտաբար, նրանց թուում անմասն չմնաց նաեւ հայ ժողովուրդը, զոհ գնալով դարասկզբում տեղի ունեցած առաջին վայրագ ցեղասպանութեան:

Այո՛, երիտթուրքերը օգտուելով Առաջին Համաշխարհային Պատերազմի պատեհ առիթից, կանխամտածուած գործադրեցին Արեւմտեան Հայաստանի հայութեան բռնի տեղահանումն ու կոտորածները, որպէսզի մէկընդմիշտ տիրանան նրա պատմական հողային տարածքին:

Եւ այդպէս, տեղի ունեցաւ 20-րդ դարասկզբի մարդկութեան դէմ ուղղուած առաջին ցեղասպանութիւնը, որը սակայն մնալով անպատիժ, յետագայում առիթ տուեց այլ ցեղասպանութիւնների. ինչպէս օրինակ՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում հրեաների Հոլոքոստին, իսկ աւելի ուշ Քամպոճիայում, Ռուանդայում, Հարաւսլաւիայում, Թուրքիայի քրտական բնակավայրերում, ինչպէս նաեւ Արցախի ազատագրութեան պայքարի ընթացքում տեղի ունեցած Սումգայիթի, Պաքուի, Կիրովապատի ցեղասպանական արարքներին:

Բնականաբար, անցած տարիներին աշխարհի մի շարք երկրների խորհրդարանները պաշտօնապէս ճանաչեցին եւ դատապարտեցին հայերի ցեղասպանութեան փաստը: Իսկ վերջին 20 տարիների ընթացքում այն բազմիցս օրակարգի հարց դարձաւ նաեւ ԱՄՆ-ի Քոնկրէսում, եւ մենք յոյսով ենք, որ մօտ ապագայում հայերի ցեղասպանութեան հարցը կը ստանայ իր վերջնական դրական ձեւակերպումը:

Հակառակ այդ բոլորին, Թուրքական պատմագրութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական գործիչները անտեսելով հաւաստի փաստերն ու ականատեսների վկայութիւնները, առ այսօր ուրանում են հայերի ցեղասպանութիւնը, նոյնիսկ ամէն ջանք գործադրում, որպէսզի զոհի վրայ յանցաւորի պիտակ փակցնեն: Որքան էլ տարօրինակ թուայ եւ զարմանալի, նրանք նոյնիսկ անտեսում են Թուրքերէն լեզուով արձանագրուած փաստերն ու վկայութիւնները:

Մինչդեռ Թուրքիայի ներկայ պետութիւնը, որը օրինական ժառանգորդն է Օսմանեան կայսրութեան, պէտք է ոչ միայն ճանաչի հայ ժողովրդի ցեղասպանութիւնը, այլեւ հատուցի բռնագաղթի ընթացքում հայ բնակչութեան շարժական եւ անշարժ գոյքի կորուստի արժէքը եւ ետ վերադարձնի խլուած հողերը իր օրինական տիրոջ:

Մեծարգոյ նախագահ, Ձեր վերընտրութիւնից անմիջապէս յետոյ մամուլն ու հեռուստատեսութիւնը յաճախակի կանգ առան այն փաստի վրայ, որ դուք հանդիսանում էք Դեմոկրատական կուսակցութիւնից երկու նստաշրջան վերընտրուած 7-րդ նախագահը: Այդ տեսակէտից ես ակամայ մտաբերեցի ԱՄՆ-ի նախագահ՝ Ուուտրօ Ուիլսընի (1913-1921 թթ.) նախագահական դժուարին

ժամանակաշրջանը, որովհետեւ նա հանդիսանալով Դեմոկրատական Կուսակցութեան 5-րդ ներկայացուցիչը նոյնպէս նախագահեց երկու նստաշրջան:

Այսօր հայ ժողովուրդը գոհունակութեամբ է յիշում նրան եւ մեծ յարգանք տածում նրա պայծառ յիշատակին:

Բանը նրանումն է, որ Ուուտրօ Ուիլսընը իր ժամանակին դատապարտելով միջազգային այդ ծանրագոյն յանցագործութիւնը, ամէն ջանք գործադրեց, որպէսզի դրական եւ արդարացի լուծում տրուի հայկական հարցին: Յաւօք, գոյութիւն ունեցող քաղաքական տարաձայնութիւնների եւ մի շարք եւրոպական պետութիւնների անբարեացակամ դիրքորոշման հետեւանքով, պատմական Հայաստանի մանտաթը ստանձնելու նախաձեռնութիւնը յաջողութիւն չունեցաւ, որը եւ բացասաբար ազդեց 1920 թ. Սեւրի պայմանագրի վաւերացմանը: Իսկ Սեւրի պայմանագիրը պաշտօնապէս կնքուեց մի կողմից Օսմանեան կայսրութեան կառավարութեան, իսկ միւս կողմից Առաջին Համաշխարհային Պատերազմում յաղթանակած դաշնակից պետութիւնների միջեւ, ուր Թուրքիան 89-րդ յօդուածով ճանաչում եւ ընդունում էր Հայաստանը, որպէս «ազատ եւ անկախ պետութիւն»:

Այո՛, պայմանագրում բերուած 88-93 յօդուածները լիովին հաստատում էին հայ ժողովրդի արդարացի իրաւունքները իր բնօրրանի՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ:

Այս է իրականութիւնը: Դժբախտաբար այսօր աշխարհի մի շարք պետութիւններ դեռեւս լուռ են մնում այս կարեւոր հարցի նկատմամբ:

Մեծարգոյ նախագահ, ԱՄՆ-ի ժողովուրդին ընձեռնուած ամենաառաջնային ազատութիւններից մէկը դա կրօնքի ազատ դաւանանքն է: Եւ դրանից էլ բխում է այն նշանաբանը, որ «Ամերիկան հաւատում է Աստծուն»:

Հպարտութեամբ պիտի նշեմ, որ 2001 թ. լրանալու է Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը, որը պատշաճ մակարդակով նշուելու է ամբողջ աշխարհում: Մի աննախընթաց տօնակատարութիւն, որ ոգեկոչուելու է երրորդ հազարամեակի առաջին դարի առաջին տարում: Դժբախտաբար, պատմական Հայաստանի տարածքում շինարար հայ ժողովրդի դարե-

րի ընթացքում ստեղծած եւ կառուցած եկեղեցիները, վանքերը, մատուռները, խաչքարերը, կոթողային այլ յուշարձաններն ու մշակութային բարձրարժէք գործերը այսօր գտնւում են անտէր, լքուած եւ քարուքանդ վիճակում: Իսկ մեծ թուով հայկական եկեղեցիներ վերածուած են մզկիթի, թանգարանի, բաղնիքի եւ պահեստանոցների: Մի քանի օր առաջ մամուլի էջերից տեղեկացանք, որ Էրզրումի մէջ հայկական մի եկեղեցի նոյնպէս վերածուել է մզկիթի:

Եւ այսպէս աստիճանաբար ձեւափոխելով եւ ոչնչացնելով հայկական սրբավայրերը, ինչպէս նաեւ փոփոխելով հայկական տեղանունների անուանումները, ձգտում են իսպառ ջնջել հայ ժողովրդի պատմութեան բոլոր հետքերը պատմական Հայաստանում:

Մեծարգոյ նախագահ, ես պիտի անդրադառնամ նաեւ հետեւեալ հարցի վրայ: 1915 թուականի ծանրագոյն ողբերգութիւնից յետոյ հայ ժողովրդի բեկորները ցրուեցին աշխարհով մէկ, որոնց գերակշռող մասը այսօր ապրում եւ գոյատեւում է ԱՄՆ-ի հիւրընկալ երկրում: Բնականաբար այստեղ մշտական բնակութիւն հաստատած հայ ժողովրդի զաւակները իրենց աշխատասիրութեամբ եւ ստեղծագործական մտքով գործուն մասնակցութիւն ունեցան երկրի տնտեսական եւ քաղաքական կեանքում եւ շարունակում են ամէն ջանք գործադրել համընդհանուր վերելքի եւ բարգաւաճման համար:

Հարկ է նշել, որ Ձեր նախընտրական պայքարի օրերին ԱՄՆ-ի հայ համայնքը իր կուսակցութիւնների կոչերով եւ յայտարարութիւններով, մեծ մասամբ հանդէս եկաւ Ձեր օգտին քուէարկելու նախաձեռնութեամբ: Անշուշտ այդ խնդրում մեծ դեր խաղաց յատկապէս Ձեր եւ ամբողջ ամերիկեան ժողովրդի ցուցաբերած մարդասիրական, տնտեսական եւ նիւթական զգալի օգնութիւնը ճգնաժամային վիճակում գտնուող այսօրուայ նորանկախ Հայաստանի

Հանրապետութեան, ինչպէս նաեւ Արցախի ժողովրդին:

Հայ ժողովուրդը գոհ է եւ երախտապարտ այս բոլորից, եւ կարծում եմ աւելի երախտապարտ կը լինի Ձեզանից եւ ամերիկեան ժողովրդից եթէ 21-րդ դարաշրջանի նախաշեմին սրբագրուի 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան սխալները: Գործի դնելով դիւանագիտական բոլոր միջոցները, այդ վեհ գործին միասնական ջանքերով պիտի ընդգրկուեն նաեւ աշխարհի առաջադէմ երկրներն ու պետութիւնները:

Նամակիս վերջում ուզում եմ նշել, որ ցեղասպանութեան հետեւանքով այսօր աշխարհով մէկ սփռուած հայ ժողովրդի զաւակները, ուր էլ որ գտնուեն, ինչպիսի բարեկեցիկ պայմաններում էլ լինեն, նրանք տեւապէս հոգեկան ծանր ապրումների եւ մղձաւանջի մէջ են, կարօտալի աչքերը յարած դէպի իրենց բնօրրանը, այն յոյսով եւ երազով, որ ի վերջոյ գալու է արդարութեան ժամը, որպէսզի բոլորը կրկին մէկտեղուեն իրենց հայրենի տարածքում՝ Ամենաբարձրեալն Աստուծոյ կողմից սահմանուած բիբլիական Արարատի փէշերին:

Մենք յոյսով ենք, որ Ձեր այս երկրորդ նախագահական 4 տարիների ընթացքում, դուք հանդէս կը գաք առ աւելի գործնական նախաձեռնութիւններով հայերի ցեղասպանութիւնը դատապարտելու եւ ճանաչելու արդար գործում:

Մեծարգոյ նախագահ, գրեցի այս նամակը Աստուածային ներշնչանքով եւ թելադրութեամբ, եւ այն հաւատքով, որ 21-րդ դարի նախաշեմին իր արդար լուծումն ու հատուցումը ստանայ ոչ միայն 20-րդ դարի հայերի առաջին ցեղասպանութիւնը, այլեւ աշխարհի միւս ժողովուրդների դէմ ուղղուած ամէն տեսակի ցեղասպանական արարքները եւս: Միայն այդ ճանապարհով մարդկութիւնը կը թեւակոխի նոր՝ խաղաղ մի դարաշրջան, զերծ մնալով աղէտներից, պատերազմներից եւ արհաւիրքներից:

Թոյլ տուէք նոր տարուայ եւ Ս. Ծնունդի նախաշեմին շնորհաւորել եւ իմ բարի մաղթանքները յայտնել Ձեզ, Ձեր ընտանիքին, կառավարութեան անձնակազմին եւ ամբողջ ամերիկեան ժողովրդին։

Աստծոյ օրհնութիւնը Ձեզ եւ ամերիկեան ժողովուրդին։

Շնորհակալութիւն։

Խորին յարգանքներով՝
Փրոֆ. Աւետիս Փափազեան
(Հայ-թուրքական յարաբերութիւնների
մասնագէտ-պատմաբան)

Յ.Գ. Զարմանալի գուգադիպութեամբ այս նամակը շարադրելու ընթացքում (Նոյեմբեր 11, 1996), երբ երեկոյեան պատահաբար միացրի հեռուստատեսութիւնը, Լոս Անճելըսի PBS KCET, 28 ալիքով ժամուկէս դիտեցի Առաջին Համաշխարհային Պատերազմի ողբերգական իրադարձութիւններին նուիրուած փաստագրական մի հաղորդում "The Great War" խորագրով, ուր մանրամասն խօսուեց նաեւ 20-րդ դարի սկզբում դաժանօրէն գործադրուած հայերի ցեղասպանութեան *մասին։*

Ուղղակի պահը շատ յուզիչ էր եւ իմաստալից։

Նոյն

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՊՐՆ. ՊՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ

Մոսկուա

Մեծարգոյ նախագահ,

Նախ ի սրտէ շնորհաւորում եմ ձեզ, վերջերս տեղի ունեցած սրտի վիրաբուժական յաջող գործողութեան համար, յայտնում եմ իմ ջերմ մաղթանքները շուտափոյթ ապաքինման եւ ամբողջ պատասխանատուութեամբ կրկին ձեր բարձր պաշտօնին անցնելու կապակցութեամբ։

Դեռ այնքան էլ շատ ժամանակ չի անցել նաեւ Ցուլիս 3-ի նախագահական ձեր վերընտրութեան փայլուն յաղթանակից, ուստի օգտագործելով առիթը լիաթոք ընդունէք նաեւ իմ ամենաբարի մաղթանքները ձեր յառաջիկայ 5 տարիների պաշտօնավարութեան յաջող ընթացքի առիթով։

Այսօր Ռուսաստանը գտնւում է դեմոկրատական վերափոխումների դժուարին ճանապարհին եւ բնականաբար դիմակայում է քաղաքական եւ տնտեսական որոշ դժուարութիւններ։ Սակայն համոզուած ենք, որ այդ բոլորը ժամանակաւոր բնոյթ են կրում եւ ռուս ժողովուրդը աստիճանաբար յաղթահարելով այն, մօտ ապագայում կը հաստատի կայունութիւն եւ երկիրը կ'ընթանայ բարգաւաճման նոր ուղիով։

Մեծարգոյ նախագահ, շատ քիչ ժամանակ է մնացել 20-րդ դարի աւարտին եւ շուտով մարդկութիւնը թեւակոխելու է նոր դարաշրջան՝ երրորդ հազարամեակ։

Եթէ մի կողմից 20-րդ դարը ժողովուրդների պատմութեան մէջ մտնելու է որպէս մարդկային յարաբերութիւնների զարգացման, գիտութեան եւ արդիւնաբերութեան աննախադէպ առաջընթացով եւ մեծագոյն նուաճումներով, միւս կողմից՝ համաշխարհային երկու պատերազմների մարդկութեանը յարուցած ծանր արհաւիրքներով եւ դժբախտութիւնների դառը յիշողութիւններով, որոնց մէջ առանձնանում է յատկապէս դարասկզբին տեղի ունեցած առաջին ցեղասպանութեան ծանր յանցագործութիւնը։ Դժբախտաբար այն անպատիժ մնալու հանգամանքով, առիթ տուեց հրեաների հոլոգոսթին եւ այլ ժողովուրդների շարունակուող ցեղասպանական արարքներին։

Ուստի, որպէս գերհզօր պետութիւն, 21-րդ դարի նախաշեմին Ռուսաստանը եւս մեծ դեր ունի թէ՛ անցեալի սխալները ուղղելու եւ կարգաւորելու բարդ խնդրում, եւ թէ՛ ժողովուրդների բարօրութեան պահպանմանն ու անվտանգութեան ապահովման խիստ կարեւոր գործում։

Ոչ ոք չի կարող ժխտել այն փաստը, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտին, երբ տեղի ունեցաւ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը, սկզբնական շրջանում Ռուսաստանում որոշակի քայլեր կատարուեցին մարդասիրական սկզբունքների կիրառման, ազգերի ինքնորոշման, խաղաղութեան հաստատման եւ այլ կենսական հարցերի նկատմամբ։ Բնականաբար ԽՍՀՄ-ը մեծ ներդրում ունեցաւ նաեւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքում ֆաշիզմի դէմ մարդկութեան տարած դժուարին յաղթանակում։ Անուշտ այդ բոլորի կողքին եղան նաեւ անդարմանելի լուրջ սխալներ, որոնք եւ հասցրին այսօրուայ մեզ յայտնի դժուարին կացութեան եւ պարտադիր վերափոխումներին։

Մեծարգոյ նախագահ, եթէ մի պահ յետադարձ հայեացք գցենք, մեր ուշադրութիւնը պիտի գրաւի առաջին հերթին 1917 թ. Դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանին վերաբերող դեկրետը»։ Խորապէս գիտակցելով եւ ըմբռնելով Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում Արեւմտահայութեան նկատմամբ տեղի ունեցած ահաւոր ցեղասպանութիւնը, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ.Ի. Լենինը ստորագրեց այդ դեկրետը, որի համաձայն Արեւմտեան Հայաստանը պիտի դառնար անկախ պետութիւն։ Այո՛, պիտի վերականգնուէր հայ ժողովրդի իր հայրենի հողի նկատմամբ ունեցած ազատ ինքնորոշման արդար իրաւունքը։ Սակայն, այն չիրագործուեց քաղաքական նենգ խաղերի՝ ներքին եւ արտաքին հակահայ գործօնների ազդեցութեան տակ։

Դեռ աւելին, 1921 թ. Մարտի 16-ին Մոսկուայում կնքուեց սովետա-թուրքական «բարեկամութեան եւ եղբայրութեան» պայմանագիրը, ուր անտեսուեցին Հայաստանի եւ հայ ժողովրդի շահերը, Թուրքային զիջելով հայկական հողային տարածքներ. (Կարսի նահանգը, Սուրմալուի մարզը, Նախիջեւանի մարզը՝ որտեղ յետագայում, Հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով կազմակերպուեց Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւնը Ատրպէյճանի գերիշխանութեան տակ)։

Այնուհետեւ, Յուլիսի 5-ին Ռուսաստանի Խորհրդային Համայնավար Կուսակցութեան Կովկասեան բիւրոն Ստալինի նախաձեռնութեամբ որոշում կայացրեց՝ հայերով բնակեցուած եւ դարերից ի վեր հայերին պատկանող Լեռնային Ղարաբաղի տարածքը Ատրպէյճանին յանձնելու մասին։

Եւ այդպէս, անարդարացի կատարուած քայլերի եզրայանգումը եղաւ այն, որ 1953 թ. Մայիսի 30-ին ԽՍՀՄ-ի կառավարութիւնը պաշտօնապէս հրաժարուեց Հայաստանին վերաբերող հողային պահանջատիրութիւնից։

Այս է դառը իրականութիւնը եւ թուում էր, թէ ամէն ինչ վերջացաւ եւ մատնուեց մոռացութեան...։

Բայց ո՛չ։

1965 թ. Ապրիլի 24-ին, Մեծ Եղեռնի 50-ամեայ տարելիցի առթիւ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երեւանում, հայ ժողովուրդը միանաբար բարձրացրեց իր բուռն բողոքը 1915 թ. անմեղ զոհերի յիշատակին, սթափեցնելով աշխարհի ժողովուրդներին, որ հայերի ցեղասպանութիւնը չի մոռացուել, այն կայ, եղել է եւ ապրում է նոր սերունդի սրտերում։ Եւ այդպէս, Երեւանի Միծեռնակաբերդ կոչուած բարձունքում, Արարատ լերան դիմաց վեր խոյացաւ Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած յուշարձան կոթողը։

Հայ ժողովուրդը երախտագիտութեամբ է յիշում եւ պիտի յիշի ռուս առաջադէմ մտաւորականներին, պատմաբաններին, գիտնականներին, ինչպէս նաեւ հասարակական եւ քաղաքական այն գործիչներին, որոնք բոլոր ժամանակներում, հայ ժողովրդի օրհասական պահերին թեւ ու թիկունք կանգնելով եւ իրենց անկոտրում ձայնը բարձրացնելով, դատապարտեցին այդ ծանրագոյն յանցագործութիւնը։ Նրանց թիւը այսօր էլ քիչ չէ։

Եւ արդարութիւնը պոռթկաց...։

Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախօրէին, 1995 թ. Ապրիլի 14-ին, Ռուսաստանի Դաշնութեան Պետական Դուման, հիմնուելով անժխտելի փաստերի վրայ, միաձայն ընդունեց իր պատմական որոշումը հայերի ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին, եւ յայտարարեց, որ «Դուման՝ դատապարտում է 1915-1922 թթ. հայերի ընաջնջման կազմակերպիչներին։ Արտայայտում է իր խոր կարեկցանքը հայ ժողովրդին եւ Ապրիլ 24-ը դիտում է որպէս ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»։

Արդարութիւնը յաղթեց, կատարելով հաստատուն մի քայլ դէպի հայերի ցեղասպանութեան դատապարտման եւ պատմական ճշմարտութիւնը վերականգնելու ուղղութեամբ։

Մեծարգոյ Նախագահ, մարդկութիւնը 21-րդ դար պէտք է մտնի անցեալի դառը սխալները ուղղելով եւ չսպիացած վէրքերը դարմանելով։ Եւ ցեղասպանութեան հետեւանքով աշխարհով մէկ ցաք ու ցրիւ եղած հայ ժողովրդի բեկորները պիտի հաւաքուեն իրենց հայրենի բնօրրանում։ Այդ վեհ գործը կատարուելու է ձեր պաշտօնավարութեան ընթացքում աշխարհի միւս երկրների ղեկավարների համատեղ ջանքերի շնորհիւ։ Ես այս խնդրի շուրջ յատուկ նամակ եմ յղել նաեւ ԱՄՆ-ի նախագահ Պիլ Քլինթընին)։

Գրեցի այս նամակը Աստուածային ներշնչանքով եւ թելադրութեամբ։ Աստուծոյ պատուիրանը կայանում էր հետեւեալում.

«Ամէն ժողովուրդ, փոքր թէ մեծ, պիտի ապրի Ամենաբարձրեալն Աստուծոյ կողմից սահմանուած տարածքում։ Եթէ 20-րդ դարի աւարտին չվերականգնուի աշխարհի հնագոյն ժողովուրդներից մէկի՝ հայ ժողովրդի հայրենի տարածքային իրաւունքները, ապա աշխարհին սպասւում է անկանխելի աղէտ, արհաւիրքներ եւ դժբախտութիւններ։ Հասարակ թռչունի բոյնը քանդելը մեղք է համարւում, առաւել եւս մի ամբողջ ժողովրդի բնօրրանը քանդելը։ Փրկեցէ՛ք մարդկութիւնը

2969

Աստծոյ ահեղ դատաստանից եւ դուք կարող էք անել այդ, քանի որ հաւատում էք Աստուն: Այս պիտի կատարուի, ոչ թէ բռնի ուժով, այլ խաղաղ, երկխօսութեամբ: Բացատրական աշխատանքի եւ այն միջոցներով, որոնք կը նպաստեն հարցի լուծման: Թուրք ժողովուրդը մեղաւոր չէ նախորդների կատարած յանցագործութեան համար, բայց նրանք պարտաւոր են յանուն Աստծոյ ուղղել կատարուած սխալը: Հարցի խաղաղ լուծումը թուրք ժողովրդին եւս պիտի բերի խաղաղութիւն, զարգացման բնականոն ընթացք եւ բարգաւաճում»:

Այժմ իմ խիղճը հանգիստ է, քանի որ ես կատարեցի Բարձրեալն Աստուծոյ պատուիրանները ամենայն ճշմարտութեամբ:

Մեծարգոյ Նախագահ՝ նամակի վերջում ուզում եմ անդրադառնալ նաեւ հետեւեալ հրատապ հարցի շուրջ:

Վերջերս խորը մտահոգութեան առիթ տուեց նաեւ Լիզբոնի ԵԱՀԿ-ի գագաթաժողովի քննարկումների արդիւնքները:

Այնուհանդերձ գոհունակութեամբ պէտք է նշել, որ լիովին ճիշդ դիրքորոշում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանը այդ գագաթաժողովում, երբ իր ելոյթում յենուելով ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրայ, յայտարարեց, որ Ղարաբաղը Ատրպէյճանի կազմի մէջ «ամենաբարձր» կարգավիճակով պահելու դէպքում «Լեռնային Ղարաբաղի բնակչութեան վրայ կախուած կը լինի ցեղասպանութեան կամ բռնի տեղահանութեան մշտական սպառնալիքը»:

Բնականաբար, Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը, որպէս ապացոյց ակնարկեց 1988 թուականից յետոյ Ատրպէյճանի տարածքի մի շարք քաղաքներում եւ գիւղերում տեղի ունեցած հակահայկական ջարդերն ու տեղահանութիւնը:

Այդ տեսակէտից, որպէս պատմաբան եւ անցեալի դասը փորձութիւնից ելնելով ուզում եմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել նաեւ հետեւեալ փաստի վրայ: Եթէ մի փոքր յետադարձ հայեացք գցենք ոչ շատ հեռու անցեալում կատարուած իրադարձութիւնների վրայ, կը նկատենք, որ համանման գործարքներ եւ «կարգավիճակի» նախաձեռնութիւններ եղել են Օսմանեան կայսրութեան եւ մեծ տէրութիւնների միջեւ, սակայն արդիւնքում միշտ էլ տուժել է տարաբախտ հայ ժողովուրդը:

Այսպէս՝ 1895 թ. Մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կ. Պոլսի դեսպանները, Օսմանեան կայսրութեան տարածքում գտնուող հայկական 6 նահանգների համար (Էրզրում, Պիթլիս, Վան, Սեբաստիա, Խարբերդ, Տիարպէքիր), բարենորոգումներին վերաբերող ծրագիր ներկայացրին, որը պաշտօնապէս ստորագրուեց բարձրագոյն դրան կողմից նոյն թուականի Հոկտեմբերի 8-ին: Սակայն այդ բարենորոգումները ոչ միայն չկիրառուեցին, այլ սուլթան Ապտուլ Համիտի կարգադրութեամբ հայաբնակ այդ նահանգներում եւ կ. Պոլսում տեղի ունեցան դաժան կոտորածներ, որոնց զոհ գնացին 300,000 անմեղ հայեր:

Իսկ 1914 թ. Փետրուարի 8-ին, մեծ տէրութիւնների եւ Թուրքիայի կողմից կրկին ստորագրուեց հայկական բարենորոգումների վերաբերող մի նոր ծրագիր եւս եւ արդիւնքում, ինչպէս գիտենք, տեղի ունեցաւ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը, որին զոհ գնացին 1.500.000 անմեղ հայեր եւ ամբողջապէս հայաթափուեց պատմական Հայաստանը:

Արդեո՞ք մեր օրերում, մեր աչքի առաջ չհայաթափուե՞ց նաեւ Նախիջեւանը:

Այս բոլորը աչքի առաջ ունենալով ինչպէ՞ս կարող է Արցախի ժողովուրդը, եւ ընդհանրապէս հայ ժողովուրդը հաւատք ընծայել Ատրպէյճանի ղեկավարներին եւ նրանց ձայնակցող մի շարք տէրութիւնների հաւաստիացումներին:

Եզրակացութիւնը միանշանակ է՝ միայն ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի հիման վրայ, անկախ եւ ինքնավար Ղարաբաղը կարող է ապահովել իր բնիկ ժողովրդի անվտանգութիւնը:

Վերջացնելով նամակս թոյլ տուէք Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի նախաշեմին ջերմօրէն շնորհաւորել անձամբ ձեզ, ձեր ընտանիքին, կառավարական անձնակազմի եւ Տումայի բոլոր յարգարժան անդամներին, բարեմաղթելով քաջառողջութիւն, յաջողութիւն եւ բարի իղձերի իրականացում:

Աստուծոյ օրհնութիւնը ձեզ, Ռուսաստանին եւ ռուս ժողովուրդին:

Շնորհակալութիւն:

Խորին յարգանքներով՝

Պրոֆ. Աւետիս Փափազեան

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1996թ. Թեքեյան Մշակութային Միության Լոս Անջելեսի մասնաճյուղի նախաձեռնությամբ լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» խորագրով մեր աշխատությունը, որի 5-րդ գլխում (էջ 63) բերված էր համաշխարհային առաջադեմ մտավորականության տեսակետները ու գնահատականները հայերի բռնագաղթների և կոտորածների մասին։

Սույն հոդվածով կրկին անդրադառնում ենք այդ նյութին, քանի որ մեր օրերում տարբեր ազգությունների պատկանող պետական բարձրաստիճան գործիչներ, հրապարակախոսներ, պատմաբաններ, լրագրողներ իրենց ելույթներում և աշխատություններում շարունակում են ցասումով դատապարտել Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ կատարված երիտթուրքերի հրեշավոր չարագործությունները։

Ուշադրության արժանի փաստ է նաև, որ հակառակ թուրք պետական գործիչների և պատմաբանների այսօրվա ուրացումներին, վերջին տարիներին առանձին թուրք մտավորականներ համարձակորեն հանդես են գալիս ճշմարտությունը բացահայտելու և հայերի ցեղասպանությունը դատապարտելու գրություններով և ելույթներով։ Ընդհանրապես ծրագրել ենք տեսադաշտից դուրս մնացած այլ նյութերով աստիճանաբար ամբողջացնել այս թեման։

Ստորև բերված վկայությունները հաստատում են 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ տեղի ունեցած ցեղասպանությունը։

ՑՑՑ

Պապ Տոլ, ԱՄՆ-ի Ծերակույտի հանրապետական մեծամասնության ղեկավար։ - Ցեղասպանության ընթացքին չուրջ 1,5 միլիոն հայեր կանոնաւոր բնաջնջումի ենթարկուեցան՝ տեղահանութեամբ, չարչարանքով, սովամահութեամբ եւ ջարդերով։

Կը միանամ ամերիկահայութեան, սգալու համար մահացողները եւ լիշելով զոհերուն տանջանքները։

Հպարտ եմ ընդգծելով անյողդողդ զորակցութիւնս 1915-1923 տարիներու հայկական ցեղասպանութեան իբրեւ պատմական փաստ ճանաչումին ի խնդիր։ Ի հակադրութիւն նախագահ Քլինթոնի, տարիներով ձգտած եմ արդի օրերու Առաջին Ցեղասպանութեան ճանաչումին։ Մինչեւ հայկական ցեղասպանութեան համաշխարհային ճանաչումի արժանանալը, ես ձեր կողքին կը կանգնիմ, պատմական իրողութիւնը իր ճշգրիտ հունին մէջ դնելու ձեր ճիգերուն գծով։ (Ասպարէզ, ապրիլ 27, 1996)

Քաթերին Գամերոն Փորթը, Մարդկային Իրավունքների Միութեան հիմնադիր եւ նախագահ, ԱՄՆ. –... *Քանի որ հայերի ցեղասպանութիւնը դեռեւս չի ճանաչուած, ուստի անարգել շարունակվում է տեւական ագրեսիան Ցունաստանի դեմ, տեւական ագրեսիան Կիպրոսի մէջ եւ ցեղասպանութիւն գործադրուել քրդերի դէմ։ Ահա թե ինչո՞ւ ես ակնարկում եմ հայերի ցեղասպանութիւնը։*

Եվ երբ ես տեսնում եմ, թէ ի՞նչ է կատարվում քրդերի հետ, ես սկսում եմ հասկանալ, թէ որտեղից է դրա ելակետը։ Այդ բոլորը սկիզբ են առնում հայերի ցեղասպանութիւնից։ Ես կարծում եմ, որ դրա շարունակելիութեանը պետք է վերջ դնել եւ կանգնեցնել։ Այս երկուսը առնչվում են իրար եւ մեկը միւսի շարունակութիւնն է։

Փաստ է, որ այսօր, այս վայրկեանիս Թուրքական զորքերը այնտեղ են, իսկ կատաղի կռիվները հարաւ-արեւելեան մասում ուղակի կապուած են նախորդ տարիների հայերի սպանութիւնների հետ։ (*Ասպարէզ, օգոստոս 31, 1996*)։

Փիթր Պլիւթ, Գոնկրէսմէն, ԱՄՆ։ – *Շատ կարեւոր է, որ Գոնկրէսի երկու թեւերով աշխարհին ցույց տանք, թէ պիտի չմոռնանք եւ թոյլ պիտի չտանք, որ աղավաղուի ստիկա նենգամիտ պատմաբաններու կողմէ, թէ պիտի չարտօնենք իրենց ստելու, որովհետեւ ցեղասպանութիւնը իսկապէս պատահեցաւ եւ պետք է վստահ ըլլանք, որ աշխարհը տեղեակ ըլլայ ատկէ։*

(*Ասպարէզ, մայիս 11, 1996*)։

Թոմս Տայն, ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման գործակալութեան պաշտօնեայ. – *Անցեալը ոգեկոչելը եւ հայութիւնը բնաջնջելու փորձերը խոր թաղուած են ներաշխարհիս մէջ։ Եւ իբրեւ հրեայ, կատեմ այն փաստը, որ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը սկսաւ հայերով, անոնցմէ անցնելով ու հասնելով նացիներուն կողմէ մէր ժողովրդին դէմ կատարուած արարքներուն։* (*Ասպարէզ, մայիս, 1996*)։

Ճան Էտուըրտ Փորթը, Գոնկրէսմէն. – *Թուրքերու կողմէ ցեղասպանութիւն գործադրուեցաւ հայ ժողովուրդին դէմ 1915-23 տարիներուն... Մէկուկէս միլիոն հոգի բնաջնջուեցաւ ցեղասպանութեան հետեւանքով եւ եթէ նոյնիսկ պահ մը միայն մենք մեզի արտօնենք մոռնալ ատիկա, պիտի շարունակէ կրկնուիլ։* (*Ասպարէզ, մայիս 11, 1996*)։

Ֆրէնք Փալոն, Գոնկրէսմէն. –*Գոնկրէսը այնպէսի օրէնսդիր մարմին մըն է, որ ոչ միայն կընդունի ցեղասպանութեան փաստին արձանագրութիւնը, այլ նաեւ կ՚անդրադառնայ Հայաստանի Հանրապետութեանը օժանդակելու եւ Հայաստան-Ամերիկա կապերու սերտացման անհրաժեշտութեան։* (*Ասպարէզ, մայիս 11, 1996*)։

Ռաճըր Սմիթ, «Ուիլեըմ Էնտ Մէյրի» Գոլեճի փրոֆեսոր, ԱՄՆ. –... *Ոչ ոք կրնայ բառերով, օրէնսդրութեամբ, ուսումնասիրութեամբ կամ այլապէս փոխել այն կեցուածքները, որոնք այս ահաւոր ուրացումին պատճառ դարձած են...*

Այս ուրացումը թոյնի ներգործութիւն կունենայ հայութեան վրայ...

Աշխարհի վրայ իւրաքանչիւր հայ դէռ կը տառապի այս վէրքերէն, որոնք ուրացումէ յառաջ կուգան։ (*Ասպարէզ, մայիս 11, 1996*)։

Փոլ Սայմըն, Դեմոկրատական. – *Մարդկութեան եւ ոչ միայն հայութեան համար, կարեւոր է արձանագրելը, որ երբ ցեղասպանութիւններ տեղի ունենան, պէտք չէ կրկնել այդ սխալները։ Հետեւաբար, արդեն իսկ*

չատոնց եկած է ժամանակը Գոնկրէսի համար, որպէսզի ճանչնայ ցեղասպանութիւնը։
(*Ասպարէզ, մայիս 11, 1996*)։

Տէյլ Քիլտի, Գոնկրէսմէն. *...-Մինչ զորակցած եմ բանաձեւին, որովհետեւ կը հաւատամ, որ կառավարութեան մը պարտականութիւնն է զարկ տալ, պաշտպանել եւ յառաջ մղել մարդկային արժանապատուութիւնը եւ հայկական ջարդերը ճակատային հարձակում մըն էին մարդկային արժանապատուութեան դէմ։* (*Ասարեզ, մայիս 11, 1996*)։

Ափոստոլ Քազլամանի, Յունաստանի խորհրդարանի նախագահ.

... Իսկապէս, ցաւալի է հաստատել, որ հայոց ցեղասպանութիւնէն 81 երկար տարիներ յետոյ՝ Թուրքիոյ պետութիւնը անպատիժ մնալով կը շարունակէ սիստեմաթիկ կերպով բռնաբարել մարդկային իրաւունքները եւ միջազգային իրաւանց ու բարոյական ընդունուած հասարակաց կանոնները։ Այսպէս, ամէ՛ն օր կը դիմէ բռնարարքներու. դրութիւն՝ որուն հաւատարիմ կը մնայ միշտ։ (*Ասպարէզ, ապրիլ 30, 1996*).

Պոպ Քար, Ավստրալիոյ NEW SOUTH WHALES նահանգի վարչապետ.

... - Սիտնիի մէջ ապրող հայ գաղութի զաւակներէն ես պայքարի եւ հերոսութեան բազմաթիվ պատմութիւններ լսած եմ իրենց ծնողներու մասին, թէ անոնք ինչպէս կարողացան վերապրիլ այդ զարհուրելի դէպքերէն, երբ ծրագրուած կերպով ազգովին իրենց պապենական հողերէն դուրս կը քշուէին։ Աշխարհը երբեք չէ մոռանայ հայկական ցեղասպանութիւնը, որ ամբողջ ազգի մը սպանդն էր։ Դէպքը ուրանալու միջոց գոյութիւն չունի։ Արդէն Եւրոխորհրդարանը 1987-ին քուարկեց հայկական ցեղասպանութեան վաւերականութիւնը ընդունող բանաձեւ մը։ (*Ասպարէզ, մայիս 2,* 1996)։

Դոկտ. Կոնրատ Ռայդէր,
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) ընդհանուր քարտուղար.

... - Հայաստանում անցկացրած մի քանի օրերին ես կարողացայ այցելել խորապես տպաւորիչ ազգային յուշարձանը (Միծեռնակաբերդ) եւ ծաղկեպսակ դնել ԵՀԽ-ի անունից՝ ի յարգանս ցեղասպանութեան զոհերի յիշատակի։ Կանգնելով յաւերժական կրակի առջեւ կամ թանգարանում ականատես լինելով բացահայտ փաստերին, ոչ ոք չի կարող սրտով ու մտքով խորապէս չյուզուել եւ չազդուել։

Այսօր ցեղասպանութեան ոգեկոչումը ազատ Հայաստանի մէջ մեզ մղում է նայելու աւելի անդին, քան այս երկրի ողբերգութեան ժառանգութիւնը։ (*Նոր Հայաստան, մայիս 2, 1996*)։

Էրվին Բոյին, Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի անդամ. *-... Հայաստանը ապրեց շատ դժուար 20-րդ դարը։ դրա սկզբում եղեռնն էր, ուր նահատակուեց նրա ժողովրդի մեծ մասը, եւ 2,5 տարի ազատ պետութիւն լինելուց հետոյ Հայաստանն ընկաւ լճացման մէջ, որը տեւեց 70 տարի։*

Անկախութիւնը պատերազմի եւ տնտեսական տառապանքների ստուերի տակ էր գտնւում եւ միայն այժմ՝ 20-րդ դարի վերջում, երկիրը նորից դանդաղ ոտքի է կանգնում։ (*Նոր Հայաստան, մայիս 2, 1996*)։

Քարոլայն Քոքս, Մեծ Բրիտանիայի Լորդերի Պալատի անդամ. *- Հայերը պայքարում են այն ամենի համար, որոնց իրենք հավատում են՝ գոյատեւում, հայրենիք, լեզու, ընտանիք եւ իրենց հնագոյն հոգեկան ժառանգութեան համար։ Ինքնիրենց պաշտպանելու համար պայքարել են անհաւատալի խիզախութեամբ։ Այդ մի պատմութիւն է, որը պետք է արձանագրվի պատմութեան գրքերում։* (*Հայ կյանք, դեկտեմբեր 22-28, 1994, էջ 52*)։

Հասան Մ. Եուսէֆ, Սուրիական «Հողի Եղբայրներ» ֆիլմաշարի հեղինակ, *- Ես անձնապես «Հողի եղբայրներ»-ուն մէջ քննութեան հարց դարձուցի Թուրքերուն ի գործ դրած 1915-ի հայկական ջարդը, որովհետեւ խորապես զգացած եմ, որ սուրիական անապատի տարածքին թափուած հայու անմեղ արիւնը՝ խառնուելով հայրենիքիս հողին,*

խառնուելով հարազատ երկրիս ընդերքին մէջ կուտակուած՝ նոյն դահիճին թափած արաբ ժողովրդի արիւնին հետ, առավել ե՛ւս կը հաստատէ այս հողի արիւնավառ պատմութիւնը։ (*Նոր Օր ապրիլ 24, 1996*)։

Հենրի Հէրիիսոն Ռիկս, ականատես, Խարբերդի ամերիկեան «Եփրատ» կոլեճի նախագահ. – *Տարբեր աղբիւրներից մենք տեղեկացանք, որ աքսորականները կոտորածի են ենթարկուում Խարբերդի հարաւ-արեւելեան ճանապարհի ամբողջ երկանքով։ Եվ այս հաղորդման ճշմարտութիւնը ստուգելու եվ իրենց աչքերով տեսնելու համար նշանակուեցին երկու ամերիկացիներ՝ հետեւելու աքսորականների թափորին...*

Այս երկու ամերիկացիները, որոնք ձիերով հետեւել էին թափորին, ասացին ինձ, որ մի օր նրանք տեսել էին ոչ պակաս քան 10.000 (տասը հազար) մարդկային անթաղ դիակներ։ Նրանք նկատել էին նաև, որ մէկ կամ երկու վայրերում փորձեր են եղել դիակների կոյտերը վառելու, որպէսզի վերացուի տվեալ շրջանի մթնոլորտի անտանելի ապականումը...

Հատուած «Ողբերգական Օրեր Հայաստանում» գրքից, (DAYS OF TRAGEDY IN ARMENIA), *Տէս Ասպարէզ, ապրիլ 24, 1996, էջ 20-21*)։

Ճոնաթըն Ռակմըն, անգլիացի լրագրող. – *Հայաստան փոքր եւ հին երկիր մըն է, հարուստ իր քրիստոնեական մշակոյթով, սակայն, այն ինչ որ պատահեցաւ 1915-ին, սեւ*

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
82-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ
ՄԵՐ ԴԱՏԸ ԴԵՌ ՆՈՐ Է ՍԿՍՎՈՒՄ

ամպի մը նման կախուած է հայերու հոգեբանութեան վրայ, որպէս չխաղաղեցուած ուրուական մը։ Ութսուն տարիէ ի վեր, թուքերը ներողութիւն չեն խնդրած իրենց ի գործ դրած ջարդերուն համար, մինչ Արեւմուտքի մէջ շատերը քիչ բան գիտեն եւ կամ ոչինչ գիտեն... (JONATHAN RUGMAN, MEMORY OF SLAUGHTER HAUNTS A NATION, -THE GUARDIAN- 8, 26, 95)։

Ռաղբրթ Ճորտըն, ամերիկեան լրագրող. – *Ամէն անգամ, երբ կը վերլիշեմ Հայաստան իմ ճանապարհորդութիւնս, ես ինձի հարց կուտամ, թէ արդեո՞ք ասկէ աւելի ծանր աղէտով տառապած է ուրիշ ոեւէ ժողովուրդ կամ թէ արդեո՞ք դարերու ընթացքին հալածուած ուրիշ ոեւէ ժողովուրդ յարատեւած է աւելի ազնուօրէն։ Հայերը ցրուեցան աշխարհի չորս կողմերը եւ բազմապատկուեցան։*

Խաղաղասէր, խելացի, կրօնասէր, ընտանեասէր այս ժողովուրդը, կազմեց կորիզը սքանչելի, հոգ չէ թէ քիչ ճանաչուած, պատմութեան մը։ Բայց ո՛չ իր ծննդավայրին մէջ։

(ROBERT PAUL JORDAN, THE PROUD ARMENIANS, <<NATIONAL GEOGRAPHIC>> JUNE, 1978)։

Մարք Ֆէրո, ֆրանսիացի գործիչ. – *Մէկուկէս միլիոն հայեր մեռան Թուրքիա 1915-ին, եթե կառչինք բառերու ճշգրիտ սահմանումին, հարցը կը վերաբերէր ոչ թէ տեւական ցեղասպանութեան մը, այլ զանգուածային բնաջնջման։ Ինչ որ չի բացառէր դէպքին ոճրային բնոյթը։*

Տեպորահ Ի.Լիփսթատ, Ռոբըրթ Ճեյ Լիֆթըն, ամերիկյան պատմաբաններ. – *Հայկական ցեղասպանութիւնը հիմնաւորուած է աշխարհի տարածքին պաշտօնական արխիւներու հազարաւոր փաստաթուղթերով, Օսմանեան Ռազմական Դատարանի արձանագրութիւններով, ուր տասնամեակ տեւած գիտական աշխա-*

տասիրութիւններով եւ այդ տարիներու իրադարձութիւններու մասին «Նիւ Եորք Թայմզ»-ի մանրագնին տեղեկագիրներով։ (NEW YORK TIMES, JUNE 2, 1996)։

Ֆիլիփ Մարստըն, անգլիացի գրող. - *...Մինչ լեռները կը պարպուէին հայերէ, սուրիական անապատները կը լեցուէին։ Կ. Պոլսէն հրաման եկած էր մաքրագործելու շրջանը։ Որդեգրուած էին ամէն տեսակի միջոցներ։ Գնդակահարումը դանդաղ էր։ Ոմանք կը քչուէին դեպի գետը։ Շատերը պարզապէս կը մեռնէին հիւանդութիւններէ, սովէ եւ ծարավէ։ Շատատիէն (քարայր) կ'ապահովէր իր սեփական բնական գործիքը։ Անոր անցքը շատ երկար եւ տարածուն էր։ Զինուորները հոս կը բերէին հայերը եւ հալածանքներով ներս կը հրէին։ Որքան բազմանային ներս ինկողները, այնքան առաջին նետուածները կը խրուէին անցքէն վար։ Ապա զինուորները մացառներ քաշեցին դէպի քարայրին մուտքը եւ կրակի տուին։* (THE CROSSING PLACE- «*Ճանապարհորդային ուսումնասիրութիւն» գրքից*)։

Ա. Ատոսիտես, յոյն ֆրանսահպատակ լրագրող. -*Ատանա քաղաքում հրոճարակ են դարձել 1190 տուն, 6 եկեղեցի եւ ամբողջ հայկական շուկան։ Մենք տեսանք, որ Տարսո-նում հրկիզել էին 800 տուն, Հասան-բեյլիքում՝ 416, Պախչէում՝ 115, Լապգիում՝ 120, Ինճիրլիքում՝ 145, Օսմանիեում՝ 200տուն։ Տեսանք, որ շատ ավաններում, գիւղերում եւ գիւղակներում ոչ մի անվնաս տուն չէր մնացել։ Հենց միայն ճեպել Պերեքեթի մարզում այրել-մոխրացել էին 915 բնակելի տուն, 6 եկեղեցի, 12 դպրոց, չհաշուած կրպակներն ու խանութները։* (A. ADOSSIDES, ARMÉNIENS ET JEUNES TURCS. LES MASSACRES DE CILLICIE, PARIS, 1910, P. 115 -116)։

Համտուլլահ Սուբիի Պէյ, թուրք գրականագետ եւ քաղաքական գործիչ. - *Ես այն մէկն եմ թուրք հայրենակիցներից, որը հայերի կրած դժբախտութիւնների համար վերին աստիճանի ազդուել, եւ նրանց տարած տառապանքների համար խորապես ցաւակցել է։* (Pars Tuğlaci, Ermeni Edebiyatından Seckiler, Istanbul, 1992, s. 89)

Թաներ Աքչամ, թուրք պատմաբան. - *Պրպտումների ընթացքում ես դէմ առայ երեւոյթի ամենահաւոր դրսեւորման՝ հայերի զանգուածային բնաջնջման փաստին ու որոշեցի խորանալ այդ երեւոյթի ուսումնասիրման բնագաւառում։ Իմ ուշադրութիւնն արդէն գրաւել էր թուրքական ազգային ինքնութեան ձեւաւորման գործում բռնութեան դերը։ Եկայ այն եզրակացութեան, որ հայերի ցեղասպանութիւնը ամիջական կապ ունի թուրքական ազգային ինքնութեան ձեւաւորման հետ եւ որոշեցի զբաղուել այդ խնդրի ուսումնասիրմամբ։* (*Նոր Օր, մայիս 6, 1995*)։

Ռուր Ֆինքրեթ Ատամիր, Գերմանիայի Պոհում (Bochum) համալսարանի դասախոս, պատմաբան, ծագումով թուրք. - *Երիտթուրքական ղեկավարները, օգտագործելով ռուսական կայսրութեան թաթար-մահմեդական մտաւորականութեան գաղափարախոսութիւնը, գործադրեցին մի մեծ ողբերգութիւն՝ կոտորելով եւ տեղահանելով Հայերին Թուրքիայից։ Այդ դեպքերը պետք է Նկատի առնվեն որպես ցեղասպանութիւն հայ ժողովրդի հանդէպ։* (Asbarez, oct, 1994)

Իշխան Սելճուկ, թուրք լրագրող. - *Մարդկային զգացումներու տէր ամէն մարդ վախով կը վերյիշէ Անատոլուի (իմա՝ Արեւմտեան Հայաստան;- Ա.Փ.) անցեալի ողբերգութիւնը եւ կը մտածէ անոր պատճառաբանութեան մասին...*

Մօտաւոր անցեալին, մեր տարածքաշրջանին մէջ ստեղծուած են բազմաթիւ սպանդներ։ Յոյները իրենց փափագով գաղթեցի՞ն Իսթանպուլէն։ Հայերը իրենց հաճոյքին համար

լքեցի՞ն այս գեղեցիկ երկիրը։ (Մասիս, օգոստոս 26, 1995)

Սելճուկ Թեկգիլ, թուրք մտաւորական. – *Ես երբեք հաւատք չեմ ընծայել եւ չեմ վստահել իմ երկրի պաշտոնական պատմութեան եւ գաղափարախոսութեան։ Եվ երբ ես հետազոտեցի եւ ուսումնասիրեցի արժանահաւատ եւ ճշմարտացի պատմաբաններին, ես դեմ առա արիւն սառեցնող ճշմարտութեան։ Անցնող դարում տեղի ունեցած հայերի մեծ ցեղասպանութիւնը սարսափելի էր։ Այո՛, իսկապէս մէկուկէս միլիոն անմեղ, բարձր զարգացում ունեցող մի ժողովուրդ՝ համեմատած քոչվոր-բարբարոս իրենց Ջարդարարների հետ, սպանդի ենթարկվեց Թռչնեղենի նման, Թուրքական գինուրների եւ ժողովուրդի կողմից, որոնց հետ ապրել էր դարերից ի վեր կողք կողքի։* (Las Vegas Review-journal, April 28, 1996)

Մուստաֆա Ջիֆթճի, թուրք մտավորական, – *Ի տարբերութիւն իմ հայրենակիցների մեծ մասին ես առանց դժվարութեան ընդունում եմ, որ Օսմանեան կայսրութեան վերջին տարիներին մեծագոյն անարդարութիւնը գործադրուեց հայերի նկատմամբ, երբ մեծ թվով հայեր բռնի տեղահանուեցին իրենց բնօրրանը հանդիսացող հայրենիքից, եւ որոնց գերակշռող մասը մահացաւ ճանապարհին։* (Տե՛ս «Who Gained The Most From Talaat`s Death» ARMENIAN LIFE, December 23, 1993, p.103)

Ելտա Կապեդեճի, Թուրքիայում մարդկային իրավունքը պաշտպանող մտավորական.– *Թուրքիայում հերքվում է հայերի ցեղասպանութիւնը եւ Թուրք նոր սերունդը հարկ եղածի պես տեղեակ չէ այդ մասին։ Նահանգային նախարարութիւնում գտնվող Թուրքական արխիվներից օգտուելը արգելուած է։ Ես փորձեցի, բայց իմ պահանջը մերժուեց։ Արխիվները բաց են միայն ընտրեալ այն մարդկանց համար, որոնց ուսումնասիրութիւնները համընկնում են Թուրքական կառավարութեան հայերի ցեղասպանութիւնը հերքող*

քարոզչութեան հետ։ (Murat Acemoğlu, M.D., «MINORITY RIGHTS DISCUSSION ON TURKISH TELEVISION», «THE ARMENIAN REPORTER INT`L», June 1 1996, p.2)։

Հեւրա-Քոմ, (Հրաչյա Քոչարի «ԿԱՐՈՏ» պատմվածքի թուրքերեն թարգմանութեան առաջաբանի հեղինակ). *–1915 Թուականին «Միութիւն եւ Առաջադիմութիւն» (Իթթիհատ վե Թերաքքի) կուսակցութեան կողմից կոտորվեցին մեկ միլիոնից աւելի հայեր։ 20-րդ դարի այս առաջին ցեղասպանութեան ընթացքում մոտավորապես 600.000 հայեր փրկուեցին մահից։ Նրանցից կէսը ապաստան գտավ այդ ժամանակվա Արեւելյան Հայաստան կոչուած երկրում, որտեղ հետագայում իշխանութեան գլուխ եկան պոլշեւիկները։* (Hrachya Kochar, Özlem, Istanbul, Birinci. Basım, Temmuz 1994)։

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՈՉ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՒԱՁՈՒՐԿ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ ԵՒ ԹԱՆՁԻՄԱԹԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ (19-ՐԴ ԴԱՐ)

19–րդ դարում Օսմանեան կայսրութիւնը շարունակում էր մնալ որպէս յետամնաց հողագործական երկիր՝ գիւղատնտեսական արտադրութեան ծայր աստիճան ցածր մակարդակով։ Աշխատաւոր գիւղացիութեան դրութիւնը չափազանց ծանր էր, յատկապէս տարեց–տարի աճող աշարի (տասանորդի) եւ այլ բազմապիսի գանձուող հարկերից։ Երկրում մեծ չափերի էր հասել կաշառակերութիւնը, չարաշահումները եւ յատկապէս ազգային խտրականութիւնն ու ճնշումները։ Իրականում, տուեալ ժամանակ կայսրութիւնում իշխում էր ժամանակի թուրք հասարակութեան ամենայետադիմական խաւը։ Բացարձակապէս բացակայում էր կեանքի եւ ունեցուածքի ապահովութիւնը։ Գիւղացու ծանր վիճակը բոլորովին չէր հետաքրքրում ոչ կենտրոնի եւ ոչ էլ գաւառների կառավարիչներին։ Սուլթանական պաշտօնեաները մտածում էին միայն այն մասին, թէ ինչպէս աւելի շատ դրամ շորթեն ժողովրդից, որպէսզի ձեռք բերեն չէրքէզ աղջիկներ, արաբական ձիեր, փարիզեան կառքեր եւ կառուցեն շքեղ ապարանքներ Վոսփորի ափերին։

Հարկ է նշել, որ ոչ մահմետական աշխատաւորութեան վիճակը աւելի ծանր էր, քանի որ նրանք յաւելեալ շահագործման էին ենթարկւում պետութեան հարկահաւաքների կողմից։ Իսկ քրիստոնեաների համար գոյութիւն ունէին բազմաթիւ հարկեր եւ տուրքեր, որոնց գանձումները կատարւում էին քմահաճ եղանակով։ Հարկատեսակների անհամամասնութիւնը, անօրինական գանձումները Թուրքիայի վարած տնտեսական քաղաքականութեան օրինաչափութիւնն էին։

Ահա մի քանի օրինակ ականատեսների վկայութիւններից.

1849 թ. Ֆրանսիայի դեսպանորդ Օպիկը հետեւեալ խօսքերով է բնութագրել բնակչութեան դրութիւնը, որը յատկանշական է նաեւ Օսմանեան լծի տակ տառապող միւս քրիստոնեայ հպատակներին։ «Երբ ես անցայ Տաւուրը, որպէսզի տեսնեմ եւ ուսումնասիրեմ Գուլկարիան, դառն ափսոսանքով նկատեցի կատարեալ աղքատութիւն, որը տիրում էր պետութեան անմիջական կառավարման տակ գտնուող այս երկրամասում։ Նորին գերազանցութեան սուլթանի ռայային վերարերող միջոցառումներից ոչ մէկը չի կիրառւում այստեղ։ Թուրքերը տանջում եւ նեղում են քրիստոնեաներին եւ հարկային բեռը աւելի վատթարացնելու համար նրանք ընտրում են յատկապէս կիրակի եւ տօնական օրերը, պարտադրելով քրիստոնեաներին կատարելու ամէն տեսակի աշխատապարտականներ (անկարիաներ)։ Ոչ մի ժամանակ ոչ մի քրիստոնեայ չի կարող իր դէմ կատարուած չարաշահումների համար բողոքել կառավարութեանը, քանի որ յանցագործութեան առկայութիւնը փաստելու համար նրան հարկաւոր է երկու մահմետականի վկայութիւնը...։ Գուլկարը աշխատում է, իսկ նրա տունը առանց վախի մտած մահմետականը կարող է յափշտակել նրա ամբողջ աշխատանքի արդիւնքը»։ (Տե՛ս Գուլկարիայի Պատմութիւն, հատ. Ա., Մոսկուա, 1954, էջ 255. ռուսերէն)։

Թուրքերի կիրառած դաժանութիւնը պատահական չէր, այլ բնայատուկ եւ տեւական։ Նրանց իրաւական սիստեմը իր էութեամբ ծայր աստիճան անարդար էր քրիստոնեայ հպատակների հանդէպ։ Մահմետականը կարող էր առեւանգել, թալանել, սպանել քրիստոնեային եւ ապահովաբար մնալ անպատիժ։ Իսկական իմաստով օրէնք գոյութիւն չունէր սուլթանական Թուրքիայում։

Իր ժամանակ իրաւաբան եւ պատմաբան՝ Ռոլֆն Ժեկմենը կ. Պոլսի հայկական պատրիարքարանի արխիւային փաստերը ուսումնասիրելուց յետոյ հետեւեալ երեք եզրակացութիւններն է արել Թուրքերի կատարած բռնութիւնների մասին։

1) Չարաշահումներ, որոնք գործադրուել են հարկերի նշանակման եւ գանձման ընթացքում։

2) Չարաշահումներ, կիրառուած կառավարական պաշտօնեաների կողմից. կանանց եւ փոքրահասակների բռնի մահմետականացում։

3) Բռնի հարկեր, թալան, երիտասարդ աղջիկների եւ կանանց առեւանգում, սպանութիւն։ Խոչընդոտներ եկեղեցու կառուցման, զանգերի օգտագործման, թաղման եւ այլ կրօնական ծիսակատարութիւնների կատարման խնդրում։

(Ռոլֆն–Ժեկմեն Մ.Կ., Հայաստան, հայերը եւ դաշնագրերը, Մոսկուա, 1897, էջ 24։ ռուսերէն)։

Պուլկարիայում հարկահաւաքների գործադրած չարաշահումների եւ զեղծումների մասին կարեւոր վկայութիւններ են բերուած Պուլկարիայի պատմութեան վերաբերող թուրքական փաստաթղթերում։ Այսպէս՝ 1850 թ. Ալի Ռիզա փաշան Վիտինի նահանգում բռնկած ապստամբութեան պատճառները հետաքննելուց յետոյ հետեւեալն է յայտնում կառավարութեանն ուղղուած իր զեկուցագրում.

«Ցիշեալ երեք (ապստամբած) շրջանների ամբողջ գիւղերի բնակչութիւնը վրդովուած եւ դժգոհ է հետեւեալ պատճառներով։ Գիւղական աղաներն ու վերակացուները տեւապէս ճնշում եւ ահաբեկում են բնակչութեանը։ Հաւաքագնորդները նշանակուածից աւելի ոչխարի հարկ եւ աշար են գանձում, գիւղ ժամանած պահնորդ խմբերը, ինչպէս նաեւ թափառող զինուորները եւ այլ պորտարոյծ տարրերը

ձգտում են անվնաս վերցնել ինչ որ ցանկանան, նոյնիսկ չվճարել այն խոտի ու գարու համար, որոնցով կերակրում են իրենց ձիերին, իսկ ոմանք էլ օրենքից դուրս հարկեր են հաւաքում բնակչութիւնից: Բացի դրանից, այդ մարդիկ այն տներում, որտեղ գիշերում են, ոտնձգութիւններ են կատարում կանանց պատուին: Ահա այս բոլոր պատճառներով բնակչութիւնը զրկուած է փատիշահի բարի կամեցողութիւնից...»: (Ա. Տ. Նովիչեւ, Թուրքիայի պատմութիւն, հատ. Գ. նոր շրջան, մաս երկրորդ, Լենինկրատ, 1973, էջ 170: Ռուսերէն):

Այս ամէնը հաւասարապէս գործադրուած էր կայսրութեան բոլոր ոչ մահմետական բնակչութեան նկատմամբ: Այն պետական պաշտօնեաները, որոնք նշանակուած էին կառավարելու հայկական վիլայէթներում (նահանգներում), իրենց զգում էին աւելի ազատ եւ սանձարձակ իրենց չարաշահումների մէջ, քանի որ նրանք հեռու էին մեծ պետութիւնների դիւանագէտների ուշադրութեան կենտրոնից: Կայսրութեան արեւելեան շրջանների կառավարիչների մեծ մասը զուրկ լինելով վարչական ղեկավարման ունակութիւնից, իր պաշտօնը օգտագործում էր միայն առաւել շատ կաշառք ու աւար ձեռք բերելու համար:

* * *

Քաղաքական, տնտեսական եւ դրամական ճգնաժամից դուրս գալու, կեղեքուած ժողովուրդների ազգային ազատագրական շարժումները կանխելու նկատառումներով Թուրքական կառավարութիւնը 1839 թ. Նոյեմբերի 3-ին սուլթանական պալատի Գիւլհանէ կոչուած պարտէզում (Ստամպուլ) հրապարակեց կայսերական հրովարտակը՝ «Հաթթը շերիֆը» (սրբազան գիր), որը յետագայում ընդհանուր անունով կոչուեց Թանզիմաթ (արաբերէն թանզիմ բառի յոգնակին. այստեղ օգտագործուել է բարեփոխումի իմաստով): Այս հրովարտակով կառավարութիւնը հիմնականում խոստանում էր ապահովել Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակների կեանքը, պատիւն ու ունեցուածքը, հարկերի արդարացի բաշխումը եւ գանձումը, կանոնաւորել զինուորական ծառայութեան ժամկէտը, դատական գործը, ժառանգութեան հարցերը, վերացնել կաշառակերութիւնը, չարաշահումները եւ այլն:

«Հաթթը շերիֆի» հեղինակը Մուստաֆա Ռեշիտ փաշան էր, եւրոպական կրթութեան տէր մի անձնաւորութիւն, որը իբրեւ դեսպան պաշտօնավարել էր Փարիզում եւ Լոնդոնում, եւ ապա ստանձնել Թուրքիայի արտաքին գործերի նախարարի պաշտօնը: Մուստաֆա Ռեշիտ փաշան եւ նրա կողմնակիցները այս հրովարտակով նախ եւ առաջ ձգտում էին շահել եւրոպական պետութիւնների վստահութիւնը, թոյլ չտալ նրանց միջամտելու Թուրքիայի ներքին գործերին եւ թուլացնել ներքաղաքական ճգնաժամը:

Դժբախտաբար, բարենորոգումի այս նախաձեռնութիւնը եւ նրա յետագայ ընթացքը ցոյց տուեց, որ այն խախուտ էր իր հիմքից, որովհետեւ նախ այն խորթ էր աւատատիրական, աստուածապետական երկրին եւ ընդհանրապէս մահմետական մտայնութեանը: Միւս կողմից ռեշիտականները, հանդիպելով յետադիմական պահպանողականների կատաղի դիմադրութեանը, հետեւողականօրէն չպայքարեցին մահմետականների եւ ոչ մահմետականների միջեւ հաւասարութիւն հաստատելու ինդրում:

19-րդ դարի յայտնի թուրք պատմագիր եւ քաղաքական գործիչ Ահմետ Ճեվտեթը իր նամակներից մէկում գրել է, որ «Թանզիմաթի հռչակման այդ օրերին մահմետականներից շատերը դառնօրէն ասում էին. մենք այսօր կորցրինք մեր պապերի եւ նախնիների արեան գնով ձեռք բերուած մեր ազգային սրբազան իրաւունքը: Մահմետական ժողովուրդը, որ իշխող ժողովուրդ էր, զրկուեց այդ սրբազան իրաւունքից: Մահմետականների համար այս օրը լացի ու սուգի օր է...»: (Tezakir-i Cevdet, 1-12, Ankara, 1953, s. 68)!

«Հաթթը շերիֆի» հրապարակումից յետոյ էլ, երբ փորձ էր արւում իրականացնել քաղաքացիական որեւէ ռեֆորմ, մոլեռանդ կրօնաւորները անմիջապէս մզկիթներում եւ մեդրեսեներում (դպրոցներում) սկսում էին պախարակել նախաձեռնողներին, քարոզներ կարդալ մահմետականութեան անձեռնմխելիութեան եւ քրիստոնեաների նկատմամբ նրանց ունեցած գերիշխանութեան մասին: Ռեշիտականները աշխատեցին երկրի իրական կեանքում տարածել արեւմտեան կանոններ՝ առանց դիպչելու մահմետական իրական կառուցուածքին:

«Հաթթը շերիֆով» բաւականին մեծ ազատութիւններ էին խոստացւում ժողովրդին, սակայն այն խիստ կասկածելի էր քրիստոնեաների աչքում, քանզի բոլորն էլ գիտէին, որ մի հրովարտակով, մի թղթի կտրով չէին կարող վերացնել այն ցանութիւններն ու հարստահարութիւնները, որոնք դոյութիւն են ունեցել դարեր շարունակ:

«Հաթթը շերիֆը» իր էութեամբ օրէնք չէր, այլ կայսերական մի հրովարտակ, որի հիմնական հարցերի շուրջը պատրաստուելու էին օրէնքներ: Իհարկէ, հրովարտակի հրապարակումից յետոյ Մուստաֆա Ռեշիտ փաշան անմիջապէս ձեռնամուխ եղաւ եւ պատրաստեց այդ օրէնքները, որոնք պետութեան կողմից վաւերացուելուց յետոյ հրապարակուեցին շատ քիչ տպաքանակով 1267 (1850-51) թուականին:

Այսպէս՝ 1840 թ. Մայիսին հաստատուեց քրէական օրէնքը: Նոյն թուականին բարեփոխութիւն կատարուեց նաեւ հարկերի գանձման սիստեմում: 1843 թ. մահմետական հպատակների համար հաստատուեց նոր կանոնադրութիւն զինուորական ծառայութեան մասին: 1847 թ. ստեղծուեցին առեւտրական դատարաններ, որտեղ ոչ մահմետականները առաջին անգամ հաւասար իրաւունքներով վկայութիւն էին տալու: Բարեփոխութիւններ եղան լուսաւորութեան, առեւտրի ասպարէզում, ստեղծուեցին նահանգային խորհուրդներ եւայլն:

1855 թ. Մայիսի 7-ին սուլթանական նոր հրովարտակով վերացուեց ոչ մահմետականների համար վաղուց ի վեր նշանակուած «խարաճը» եւ սահմանուեց մահմետականների հետ հաւասար զինուորական ծառայութեան իրաւունքը: Այս հրովարտակը մեծ դժգոհութիւն առաջացրեց

Թուրքիայի քրիստոնեայ հպատակների չրջանում, որոնք սարսափով լսեցին այդ լուրը եւ ամէն ջանք գործադրեցին այն արգելելու համար։ Խիստ դժգոհ էին նաեւ մահմեդականները։ Քրիստոնեաները դժգոհ էին նրա համար, որ զինուորագրուելով թուրքական բանակին, իրենց զէնքը ուղղելու էին քրիստոնեայ պետութիւնների եւ յատկապէս Ռուսաստանի դէմ, որի հետ կապում էին իրենց ազատագրման յոյսերը։ Իսկ մոլեռանդ մահմեդականները վախենում էին կորցնել իրենց գերիշխող դիրքը կայսրութիւնում։ Այս երկողմանի դժգոհութիւնները ստիպեցին Օսմանեան կայսրութեանը քրիստոնեաներից զօրք հաւաքագրելու խնդիրը յետաձգել անորոշ ժամանակով։ Փաստօրէն «խարաճը» փոխարինուեց ոչ մահմեդականներին զինուորական ծառայութիւններից ազատելու հարկով (bedel-i askeriye)։ Այսպիսով քրիստոնեաները առաջուայ նման մեկուսացուած էին զինուորական ծառայութիւնից։ Դեռ աւելին, ծառայութիւնից ազատուելու համար նշանակուած զինուորական հարկը աւելի ծանր էր, քան գլխահարկը, խարաճը։ Խարաճը,- գրում է Զիխաչովը,- վառագոյն դէպքում մարդագլուխ հանում էր 30-40 ղուրուշի, իսկ նոր հարկը՝ 300-400 ղուրուշի։ (Տե՛ս Պ.Ա. Զիխաչով, նամակներ Թուրքիայի մասին, Մոսկուա, 1960, էջ 40. ռուսերէն)։

Դժբախտաբար, այդ օրէնքների գործադրութեան ոչ անկեղծ ցանկութիւն կար, ոչ էլ դրանք կեանքի կոչելու յարմար եւ կարող պաշտօնեաներ։ «Օրէնքն իր իսկական իմաստով եւ օրէնքի գործադրութիւնն իր իրական նշանակութեամբ երբեք գոյութիւն չեն ունեցել Թուրքիայում. եւ այն հիմնարկութիւնները, ուր իբր թէ օրէնքը պէտք է գործադրուէր, հանդիսանում էին թուրք պաշտօնեաների համար ժամանակ անցկացնելու, թէյ, սուրճ խմելու, թզպեհ-համրիչ քաշելու, անճոռնի գրոյցներ անելու մի-մի զուարճավայր, մի-մի թեմպել-հանէ։ եւ ժողովրդական այն ներկայացուցչութիւնը, որ ժողովրդական շահերի պաշտպան, պահանջների եւ կարիքների թարգման պիտի հանդիսանար, ոչ միայն երեւութական, ձեւական էր, այլեւ խաղաղ, երկրագործ մասսան կողոպտող, կեղեքող պէյերի, էֆէնտիների մի ժողով էր դառնում»։ (Տե՛ս «Հողային Հարցը Թուրքահայաստանում»։ «Գործ», թիւ 4, 1917, էջ 62)։

Մի երկրի օրինաւորութեան ու արդարութեան չափը որոշւում է ոչ թէ գոյութիւն ունեցող օրէնքներով, այլ դրանց գործադրութեամբ։ Լեոյի կողմից կազմուած «Հայոց հարցի վաւերագրերը» ժողովածուի մի փաստաթղթում կարդում ենք հետեւեալը.

«Օսմանեան օրէնսգիրքը (Տիւսթուր) թէեւ ի պաշտօնէ գործադրելի հրատարակուած է, թող որ արդէն շատ մը պակասներ ունի իր մէջ, սակայն եւ միանգամայն կ. Պոլսէն մերթ ընդ մերթ եկած որեւէ հրամանագիր բաւական եղած է փոխել կամ ջնջել օրէնագիրքին այս կամ այն յօդուածները, մինչդեռ որ զարմանալի է, ուրիշ մէկ հրամանագիր ուրիշ անգամ նախորդացն հակառակը կը հրամայէ եւ այսպէս կը շարունակուի, որով մեր երկրին մէջ ոչ թէ օրէնքը կը տիրէ, այլ քմահաճ կամքը (խարէ-ի քեյֆիյէ»։ (Լեո. հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 137)։

Փաշաները, կապալառուները, վաշխառուները, հոգեւորականները եւ յետադիմական միւս տարրերը վիժեցրին բարենորոգումների կիրառումը։ Առաջուայ պէս գիւղացին հարկ էր տալիս թէ պետութեան հարկահաւաքին եւ թէ՛ կապալառուին։ Յետադիմականները երբեք չէին կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ իրաւական տեսակէտից կարող է հաւասարութիւն լինել մահմեդականի եւ կեաւուրի միջեւ։

1856 թ. Ղրիմի պատերազմից յետոյ Անգլիան եւ Ֆրանսիան, նկատի ունենալով, որ հաշտութեան բանակցութիւնների ընթացքում Ռուսաստանը կարող է հարց յարուցել Թուրքիայում ապրող քրիստոնեաների իրաւունքների պաշտպանութեան մասին, նախապէս ստիպեցին սուլթան Ապտուլ Մէճիտին, որպէսզի նա հրապարակի մի հրովարտակ Թուրքիայում ոչ մահմեդական ժողովուրդների վիճակը բարելաւելու վերաբերեալ։

Եւ այդպէս սուլթան Ապտուլ Մէճիտը, իբրեւ թէ կամովին, 1856 թ. Փետրուարի 18-ին ստորագրեց մի հրովարտակ, որը յայտնի է «Հաթթը Հիւմայուն» անունով։ Իր բովանդակութեամբ այս նոր հրամանագիրը մի նոր փաստաթուղթ չէր, այլ Գիւլհանէի «Հաթթը շէրիֆի» կրկնութիւնը՝ միայն աւելի ընդարձակ եւ մանրամասնուած։

Փաստերը վկայում են, որ «Հաթթը Հիւմայունի» խմբագրութեան գործում մեծ դեր են խաղացել Անգլիայի, Ֆրանսիայի եւ Աւստրիայի դեսպանները։ (Տե՛ս Կ. Թումայեան, պատմութիւն Արեւելեան խնդրոյ եւ առաջնորդ հայկական հարցի, Լոնտոն, 1905, էջ 498)։

Յետագայում այս հրովարտակը պաշտօնապէս հաստատուեց նաեւ Փարիզի հաշտութեան պայմանագրի 9-րդ յօդուածով։

Իրականում քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ Թուրքիայի, Անգլիայի եւ Ֆրանսիայի տածած այս հոգածութիւնը ոչ մի առնչութիւն չունէր նրանց ազգային շահերի պաշտպանութեան հետ։ Փարիզի հաշտութեան բանակցութիւններին մասնակցող իւրաքանչիւր եւրոպական պետութիւն հետապնդում էր մի նպատակ, այն է՝ մեկուսացնել Ռուսաստանին եւ ամրապնդել իր դիրքերը Մերձաւոր Արեւելքում։

Ահա թէ ինչպէս է գնահատել Պ. Ա. Զիխաչովը Փարիզի հաշտութեան պայմանագիրը. «վերջերս Փարիզում կնքուած պայմանագրի յօդուածներում դժուար է գտնել այնպիսի մի յօդուած, որը անկեղծօրէն ու բանիմացօրէն լուծէր, որեւիցէ հարց»։ (Պ.Ա. Զիխաչով, Մեծ պետութիւնները եւ Արեւելեան հարցը, Մոսկուա, 1970, էջ 173-174)։

Ինչպէս «Հաթթը շերիֆի», այնպէս էլ «Հաթթը Հիւմայունի» մէջ սուլթանը նորից խոստանում էր «ապահովել իր հպատակների երջանկութիւնը»։ «Հաթթը Հիւմայունի» նախաբանում ասուած խօսքերը,- գրում է Ռոլէն Ժեկմէնը,- նոյնքան փքուն ստեր էին, ինչպէս 1839 թ. «Հաթթը շերիֆի» եւ 1876 թ. Օսմանեան սահմանադրութեան խոստումները։ Սուտ են նաեւ նրա բոլոր օրէնսդրական եւ ֆինանսական փաստաթղթերը, որոնցով բարձրագոյն դուռը 50 տարիների ընթացքում փորձում է հանդարտեցնել իր հպատակներին եւ պարտատէրերին»։ (Ռոլէն Ժեկմէն, Հայաստանը, հայերը եւ դաշնագրերը, Մոսկուա, 1897, էջ 24։ Ռուսերէն)։

Իրօք, որ եթէ մեր ուշադրութիւնը բեւեռենք սուլթանական հրովարտակներից ստորեւ բերուած հատուածներին, որոնք առնչւում են հպատակների բարեկեցութեան եւ ընդհանրապէս ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների ապահովման, պարզ կը տեսնենք, որ իւրաքանչիւր հրովարտակ կրկնում է նախորդի միտքը եւ անվերջ խոստումներ անում այդ ուղղութեամբ «ազդեցիկ միջոցառումներ» ձեռնարկելու մասին։ Այնուհանդերձ իրավիճակը մնում էր միշտ նոյնը եւ այդ խոստումները յամառօրէն մնում էին թղթի վրայ։

Ահա մի հատուած 1839 թ. Գիւլհանէի հրովարտակից.

«Մենք անհրաժեշտ համարեցինք ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ եւ հրապարակել նոր օրէնքներ, որպէսզի բարելաւուի Օսմանեան երկրների կառավարումը։ Այդ օրէնքների հիմնական դրոյթներն են լինելու. 1) կեանքի, պատուի եւ ունեցուածքի ապահովումը. 2) հարկերի համահաւասար բաշխումը եւ գանձումը. 3) զօրակոչիկների ճիշդ հաւաքագրումը եւ ծառայութեան ժամկէտի ճշդումը»։ Düstür, Tertib-i evvel, cild I, Istanbul, 1289 (1872-73), s. 4-7) արաբատառ թուրքերէն)։

Հատուած 1856 թ. «Հաթթը Հիւմայունի» կայսերական հրովարտակից։

«Կեանքի, ունեցուածքի, ինչպէս նաեւ պատուի ապահովութեան վերաբերող այն երաշխաւորութիւնները, որոնք շնորհուեցին Գիւլհանէի Հաթթը շերիֆով եւ Թանզիմաթի շրջանում հրապարակուած օրէնքներով, առանց դաւանանքի եւ դասի խարութեան, այսօր կրկին վաւերացւում են եւ ամրացւում։ Եւ այսուհետեւ ձեռնարկելու են ազդեցիկ միջոցներ, որպէսզի դրանք կատարեալ ուժ ունենան»։ (Düstür, cild I, s. 7-14)։

Հատուած 1876 թ. սահմանադրութեան վերաբերող սուլթանական հրովարտակից.

«...Մեր պետութեան կառավարման ձեւը բոլորովին գոհացուցիչ չէ թէ երկրի ներսում եւ թէ արտաքին յարաբերութիւնների մէջ։ Ուստի մեր մեծագոյն ցանկութիւնն է վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսացել բոլոր մեր հպատակների առաջադիմութեան եւ զարգացման ճանապարհին»։ (Doustour-i Hamidié, Appendice à la Législation Ottomane publié, D. Nicolaides, 5-ème partie, Constantinople, 1878, p. 2-7)։

Իրականում «Հաթթը շերիֆից» մինչեւ 1876 թ. հրատարակուած օրէնքները խիստ թշնամութեամբ դիմաւորուեցին մոլեռանդ հոգեւորականները եւ յետադիմական տարրերը, նոյնիսկ ամբողջ մահմետական բնակչութիւնը, քանի որ քրիստոնեաների շնորհուած ամէն մի արտօնութիւն դաւաճանութիւն էր համարւում շարիաթին։ Եւ իրօք, շարիաթի հիմնական դրոյթները չէին կարող հաւասարութիւն դնել մահմետականի եւ ոչ մահմետականի միջեւ։ Չնայած, որ քրիստոնեան էլ միեւնոյն պետութեան հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկուէր եւ հարկատու լինէր մահմետականին։

Այն մերժեցումը, որը պիտի իրականացնէր Թանզիմաթը թուրքերի եւ քրիստոնեաների միջեւ, ոչ մի կերպ չիրականացաւ. իրականում Ռայայի իրաւունքները չվերականգնուեցին եւ նա առաջուայ նման մնաց ենթակայ

օսմանցիներին։ Երկու կողմերի միջեւ տեւական թշնամանքը շարունակուեց եւ մահմետականների մոլեռանդութիւնը երբեք չվերացաւ։ (Տե՛ս Ed. Engel Hardt. La Turquie et le Tanzimat, Paris, 1882, p. 111)։

1856 թ. «Հաթթը Հիւմայունի» կ. Պոլսում հրապարակուելուց մի քանի ամիս յետոյ, պաշտօնապէս ուղարկւում է Էրզրումի փաշային, որպէսզի վերջինս ժողովրդականացնի այն նահանգում։ Փաշան անմիջապէս գաղտնի ժողով է գումարում, որտեղ որոշում է կայացւում, որ այդ փաստաթուղթը չի կարող հրապարակուել, քանի որ դրանում խիստ վարկաբեկուած է Օսմանեան կառավարութեան արժանապատուութիւնը։ Այնուհետեւ նա կանչում է ժողովի երկու քրիստոնեայ անդամներին՝ հայ լուսաւորչական եւ հայ կաթոլիկ արքեպիսկոպոսներին, ծանօթացնում բովանդակութեանը եւ իւրաքանչիւրին տալիս է հրովարտակի մէկական պատճէնը, որպէսզի նրանք ծանօթացնեն նաեւ իրենց դաւանակիցներին։ Միեւնոյն ժամանակ փաշան աւելացնում է, որ ինքը պատասխանատու չի կարող լինել ոչ նրանց անձնական եւ ոչ էլ նրանց եկեղեցական համայնքի կեանքի համար։ Իհարկէ, երկու կրօնապետներն էլ դողով ու սարսափով, լուռ խոնարհւում են եւ հեռանում, որպէսզի անյապաղ թաքցնեն այդ վտանգաւոր փաստաթուղթը։ (Պ.Ա. Զիխաչով, նամակներ Թուրքիայի մասին, էջ 129)։

Իսկ Իզմիրի յոյն արքեպիսկոպոսը, երբ լսում է «Հաթթը Հիւմայունի» ընթերցումը եւ այնուհետեւ տեսնում, թէ ինչպէս են այն դնում մետաքսեայ ծրարի մէջ, բացականչում է. «Ազօթենք Աստծուն, որ այնտեղ էլ մնայ», վստահ լինելով, որ այն ոչ մի արժագանգ չի գտնի կայսրութեան մէջ, այլ ընդհակառակը կը խորացնի այն անդունդը, որը գոյութիւն ունի մահմետականների եւ քրիստոնեաների միջեւ։ (Charles Eliot, Turkey in Europe, London, 1908, p. 293)։

Թանզիմաթի շրջանում սուլթանական հրովարտակներով արգելուեց բռնութիւնների գործադրումը ոչ մահմետականների նկատմամբ, սակայն իրականում այն շարունակւում էր գոյատեւել։ Թանզիմաթի հրամանագրով ոչ մահմետականը իրաւունք ունէր զբաղեցնել պետական բարձր պաշտօններ թէ՛ քաղաքացիական եւ թէ՛ զինուորական ծառայութեան ասպարէզում, սակայն իրականում նրանք զբաղեցնում էին միայն ցածր պաշտօններ։ Դեռեւս հրովարտակի հրապարակումից յետոյ մի շարք թուրք պաշտօնեաներ, դիմելով Ֆուատ փաշային, հարց են տուել, «թէ այսուհետեւ այդ հրովարտակի պայմաններով Ռայայից եւս նախարարներ կարո՞ղ են նշանակուել արդեօք»։ Ֆուատ փաշան ցինիկօրէն պատասխանում է, որ Ռայայից ոչ թէ նախարարներ, այլ նոյնիսկ մէջլիսի անդամներ չեն կարող նշանակուել, քանի որ հրովարտակի մի տեղում մատնանշուած է, որ անհրաժեշտութեան դէպքում միայն քրիստոնեայ հպատակներից մի քանիսը կարող են հրաւիրուել մէջլիսի քննարկումներին։ Ահա այս կէտը մացուած է հրովարտակի մէջ նրա համար, որպէսզի սահմանափակուի նրանց անդամութիւնը մէջլիսում»։ (Տե՛ս Tezakir-i Cevdet, 1-12, Ankara, 1953, s. 71)։

Զեւական բնոյթ ունէր նաեւ դատարաններում քրիստոնեաների վկայութիւն տալը։ Նախ հոգեւոր դատարաններում (մահքեմէ) եւ վիլայէթների մէջլիսներում քրէական ծանր յանցագործութիւնների դէպքում քրիստոնեաների վկայութիւնը չէր կարող ընդունուել, քանի որ դատը ընթանում էր աստուածային օրէնքներով՝ շարիաթի հիման վրայ եւ քատիի (դատաւոր) ղեկավարութեամբ։ Քրիստոնեաների վկայութիւնը ընդունւում էր միայն խառը դատարաններում (Մէջլիս-ի թահքիք, մէջլիս-ի թիջարէթ), որոնք կազմուած էին մահմեականներից եւ քրիստոնեաներից։ Այստեղ էլ մահմեական անդամների գերակշռութեան հետեւանքով ուժի մէջ էին մտնում միայն նրանց ընդունած որոշումները։

Հարկ է նշել, որ Ղրիմի պատերազմից յետոյ 1856 թ. հրապարակուած կայսերական հրովարտակը մասամբ նպաստաւոր պայմաններ ստեղծեց ազգային փոքրամասնութիւնների հասարակական կեանքի աշխուժացման համար։ Հրովարտակը երաշխաւորում էր ոչ մահմեականների կրօնական պաշտամունքների եւ ներքին վարչութեան ազատութիւն։ 1862-63 թթ. հայ, յոյն եւ հրեայ համայնքները իրենց համար կազմեցին կանոնադրութիւններ, որոնք ուժի մէջ մտան նոյն թուականին՝ բարձրագոյն դրան կողմից պաշտօնապէս հաստատուելուց յետոյ։

Այս բոլորով հանդերձ, քրիստոնեաների եկեղեցիները գտնւում էին ողբալի վիճակում։

Փոքր Ասիայի խառը բնակչութիւն ունեցող շատ վայրերում քրիստոնեայ բնակիչները մոլեռանդ մահմեականների զայրոյթից խուսափելու համար գաղտնի կերպով էին կատարում իրենց կրօնական ծէսերը։ Փաստական շատ կարեւոր վկայութիւններ կան Պ. Զիխաչովի «Նամակներ Թուրքիայի մասին» խորագիրը կրող յուշագրութեան մէջ։ Հեղինակը 19-րդ դարի կէսերին երկար ժամանակ գտնուելով Թուրքիայում, ականատես է եղել քրիստոնեաների իրաւազուրկ եւ թշուառ վիճակին։ Նա հետաքրքիր վկայութիւններ է տալիս դաւանանքի խտրականութեան մասին։ Բերենք մի օրինակ. «Գիրեսունի եւ Տիրեպոլուի, ինչպէս նաեւ Տիրեպոլուի եւ Գիւմուշխանէի միջեւ գտնուող յետամնաց գիւղերի բնակչութիւնը, իրենից ներկայացնում էր բաւականին հետաքրքիր մի երեւոյթ։ Այդ գիւղերի ազգաբնակչութիւնը խառն է, բացէ ի բաց յարում է մահմեականութեանը եւ հասարակական վայրերում խօսում է միայն թուրքերէն։ Սակայն գաղտնի կերպով հետեւում է յունական արեւելեան եկեղեցու ծիսակատարութեանը։ Տանը խօսում է յունարէն, եւ իւրաքանչիւրը կրում է երկու անուն։ Այսպէս՝ եթէ նրանցից մէկը առաւօտեան դուրս է գալիս սպիտակ կամ կանաչ չալմայով եւ կրում է Ահմետ կամ Սելիմ անունները, երեկոյեան աղքատ խրճիթում կամ գաղտնի քարայրում միանում է իր դաւանակիցներին, որպէսզի թաքուն կատարի քրիստոնէական կրօնի ծիսակատարութիւնը քահանայի առաջնորդութեամբ, որը դրանից մի քանի ժամ առաջ արդէն

հանդէս էր եկել որպէս Մոլլա՝ մզկիթում։ (Պ. Զիխաչով, Նամակներ Թուրքիայի մասին, էջ 23)։

Բացառութեամբ Կ. Պոլսի եւ ծովափներում գտնուող երկու-երեք քաղաքների, որտեղ կային դեսպանութիւններ, քրիստոնեաներին չյաջողուեց երկրի միւս մեծ քաղաքներում թոյլտուութիւն ստանալ իրենց եկեղեցիների զանգերը օգտագործելու համար։ Գիրեսունում, որտեղ քրիստոնեաները աւելի շատ են, քան մահմեականները, Էրզրումում, Ատանայում, Քոնիայում, Թարսուսում, Թոկադում, Ամասիայում, մի խօսքով Փոքր Ասիայի մեծ քաղաքներում, փաշաները, վախենալով մահմեականների զայրոյթից, չէին համարձակւում քրիստոնեաներին, նման թոյլտուութիւն տալ, հակառակ Կ. Պոլսից կրկնուող հրամաններին, որոնցով ծանուցւում էր քրիստոնեաների եւ մահմեականների միջեւ սոցիալական եւ կրօնական ամէն մի անհաւասարութեան վերացման մասին։ (Պ. Զիխաչով, Նամակներ Թուրքիայի մասին, էջ 40)։

Ինչպէս վերը նշեցինք, 1856 թ. կայսերական հրովարտակը որոշ աշխուժութիւն առաջացրեց ու յուսադրեց խուլ վայրերի բնակչութեանը, սակայն իրականում այդ հրովարտակի դրոյթները չիրականացան։ Միայն այն վայրերում, որտեղ հայերը կամ յոյները թուով գերակշռում էին տեղի մահմեական բնակչութեանը, կարողացան օգտուել այդ հրամանագրից եւ եկեղեցական որոշ արտօնութիւններ ստանալ։ Եթէ մինչեւ այդ հրամանը որեւէ վանքի կամ եկեղեցու խարխլած մասերը նորոգելու համար պահանջւում էր սուլթանի հրամանը, կամ փաշայի ու քիւրտ խանի թոյլտուութիւնը, դարակէսից սկսած պատրիարքին էր վերապահւում հոգեւոր հիմնարկութիւնների, վանքաշինութեան ու եկեղեցաշինութեան գործերը կարգաւորելու իրաւունքը։ (Տե՛ս Հ. Ղազարեան, Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800-1870 թթ., Երեւան, 1967, էջ 245)։

Այսպիսով, փաստերը ցոյց են տալիս, որ քրիստոնեաների վիճակը բարելաւելու վերաբերեալ սուլթանական կառավարութեան կողմից ընդունուած բազմաթիւ օրէնքները մնացին թղթի վրայ եւ փաստօրէն չգործադրուեցին կեանքում։ Ընդհակառակը, կայսրութեան ոչ մահմեական բնակչութեան դրութիւնը գնալով աւելի վատթարացաւ։ Օսմանեան կայսրութեան ազգային փոքրամասնութիւններին չնորհուած հրամանագրերից առանձին սահմանափակումներով եւ խոչընդոտներով կեանքում կիրառուեցին միայն կրօնական համայնքների վերաբերեալ կանոնադրութիւնները, ինչպէս նաեւ քրիստոնեաբնակ առանձին նահանգներին տրուած ներքին ինքնավարութեան արտօնութիւնները (ինչպէս օր. Կրետէ կղզին, Լեռնալիբանանը, Սամոս կղզին, Աֆոնի լեռը եւայլն), իսկ հպատակների պատուի, անձի եւ գոյքի ապահովութեան վերաբերեալ հրամանագրերը եւ տրուած բազմաթիւ խոստումները երբեք չկիրառուեցին եւ մնացին թղթի վրայ։

Թանզիմաթի բարենորոգումները չկենսագործուելու խնդրում մեղաւոր էին նաեւ եւրոպական մեծ պետու-

թիւնները։ Նրանց բոլորովին չէր հետաքրքրում թուրքական բռնապետութիւնը վերացնելու եւ կեղեքուած ժողովուրդներին ազատագրելու հարցը։ Նրանք բարենորոգումներով չահագրգռուած էին լոկ նրա համար, որպէսզի պատրուակ ծառայեցնեն Թուրքիայի ներքին գործերին միջամտելու եւ Մերձաւոր Արեւելքում իրենց դիրքերը ամրապնդելու համար։

* * *

19-րդ դարում, իրենց տարածքային ամբողջականութիւնը պահպանելու համար, սուլթանական իշխանութիւնները ամենայն դաժանութեամբ ճնշում էին ազգային ազատագրական ամէն մի շարժում։ Իսկ որեւէ ապստամբութիւն ճնշելու համար, ինչպէս իրաւամբ նշել է Արկայլսկին, թուրքերը միայն մէկ գործելակերպ ունէին՝ անկանոն բանակ կազմելու համար զօրակոչւում էին երկրում գտնուող ամենազարհուրելի մարդասպանները, որոնք ի նշանաւորումն տարած յաղթանակի, անխնայ կոտորում էին տղամարդկանց, կանանց եւ երեխաներին։ (Հերցոգ Արկայլսկի, Անգլիայի պատասխանատուութիւնը Արեւելեան հարցում, Սանկտ Փեթերսպուրկ, 1908, էջ 55. ռուսերէն)։

Դեռեւս 19-րդ դարի առաջին քառորդում բռնկած սերպիական ապստամբութիւնները թուրքերը ճնշեցին ամենադաժան կոտորածներով։ Իսկ 1821 թուականին, ի պատասխան յունական ապստամբութեան, թուրքերը որոշեցին հաշուեյարդար տեսնել կ. Պոլսի յոյների հետ։ Կառավարութեան թոյլտուութեամբ զանգուածային ջարդ սկսուեց յոյների դէմ։ Անմեղօրէն զոհուեցին մօտ 10,000 յոյներ։ Նրանց թւում 84-ամեայ պատրիարքը՝ Գրիգորին (որին կախեցին պատրիարքարանի դրան առջեւ) եւ շատ կրօնաւորներ։ Յոյն բնակչութեան ջարդեր տեղի ունեցան նաեւ կայսրութեան այլ վայրերում՝ Կրետէում, Կիպրոսում, Ռոդոսում եւ այլն։ Իսկ 1825 թ. Սուլթան Մահմուտ 2-րդի կարգադրութեամբ Իպրահիմ փաշան դաժան հաշուեյարդար տեսաւ ոչ միայն յոյն ապստամբների, այլ նոյնիսկ ծերերի եւ երեխաների նկատմամբ, վառելով եւ ամայացնելով գիւղերն ու քաղաքները։

Պուլկարիայում ամենամեծ ապստամբութիւնը տեղի ունեցաւ 1850 թուականին՝ Վիտինի եւ Նիշայի նահանգներում։ Բարձրագոյն դուռը պատժիչ ջոկատներ ուղարկելով, արեան մէջ խեղդեց ապստամբութիւնը։ Անկանոն զօրքերը զարհուրելի գազանութիւններ գործեցին նաեւ խաղաղ բնակչութեան նկատմամբ։ Ժողովրդական յուզումներ տեղի ունեցան Պոսնիայում, Հերցեկովինայում եւ Ալպանիայում՝ տեղի աւատատէրերի անլուր ճնշումների դէմ։ Թուրքական լծի դէմ պայքարի դուրս եկան նաեւ կայսրութեան արեւելեան շրջանների կեղեքուած ժողովուրդները։ 19-րդ դարի կէսերին կրօնական հողի վրայ անվերջ ընդհանրումներ էին տեղի ունենում Լիբանանում։ 1862 թուականին հողային վէճերը ծագեցին Զէյթունում եւ այդ հիման վրայ ընդհանրումներ տեղի ունեցան ապստամբած հայերի եւ թուրքական ջոկատների միջեւ։ Մարաշի նահանգապետ Ազիզ փաշան տասը հազարանոց կանոնաւոր զօրքի

եւ բազմաթիւ պաշիպոզուկների գլուխն անցած, արշաւեց Զէյթունի վրայ, աւերելով տասնեակ գիւղեր եւ կոտորելով խաղաղ բնակչութեանը։ Այնուհանդերձ, Զէյթունի խրոխտ բնակչութիւնը կարողացաւ ինքնապաշտպանական կռիւներ մղել թուրքական զօրքերի դէմ։

Պուլկար քաղաքական գործիչ Զաքարիա Ստոյանովը, որը գործուն մասնակցութիւն է ունեցել թուրքական լծից Պուլկարիայի ազատագրման պայքարին, ականատեսի աչքով նկարագրել է Պուլկարիայում կատարուած թուրքական բարբարոսութիւնները։ Նա իր գրքում ընթերցողին ծանօթացնում է թուրքական դատարանի, բանտերի ծանր կացութեան, պատմում է աւազակների այնպիսի ոճիրների եւ հրէշաւոր յանցագործութիւնների մասին, որոնցից մարդ փչաքաղւում է։ «Դժուար էր այդ ժամանակ ապրել Թուրքիայում։ Ազատութեան նշոյլն անգամ չէր մնացել։ Մարդիկ իրար չէին վստահում։ չէին վստահում, որովհետեւ կախաղաններն ու գաշահոտ բանտերը սարսափեցնում էին բոլորին, եւ սպանում էին ամէն մի ազնիւ եւ գործունեայ մարդու» (Զաքարեիա Ստոյանով, Պուլկարական ապստամբութիւնների յիշատակարան, Մոսկուա, 1956, էջ 9. ռուսերէն)։ Ստոյանով իր գիրքը աւարտում է պուլկարական Պաթակ գիւղում կատարուած թուրքերի բարբարոսութեան նկարագրութեամբ։

«Մնկի եկէք, յարգելի ընթերցողներ, հանէք ձեր գլխարկները՝ մեր առաջ Պաթակի աւերածութիւններն են։ Կոչ եմ անում բոլոր ազնիւ եւ անկեղծ պուլկարներին, որոնք սիրում են իրենց հայրենիքը, ինձ հետ այցելելու այս պուլկարական սրբատեղին։ Մեր ազատագրութեան զոհասեղանն է այս, որը հազարաւոր նահատակների եւ սրբերի, հարիւրաւոր փոքր երեխաների, անթիւ անմեղ աղջիկների եւ պատանիների արիւնով է ներկուած...։ (Տե՛ս Զաքարիա Ստոյանով, նշուած աշխատ., էջ 668)։ 19-րդ դարի վերջին քառորդում թուրքական արիւնոտ վարչակարգին զոհ դարձան նաեւ հայերը։

Սուլթան Ապտուլ Համիտի գահակալութեան շրջանում ազգային հարցը ծայր աստիճան սրուեց եւ դարձաւ ոչ միայն ներքին, այլեւ միջազգային կարեւոր հարցերից մէկը։ Հետեւելով «բաժանիր՝ որ տիրես» վաղեմի սկզբունքներին, Ապտուլ Համիտը իր բազմազգ հպատակների միջեւ տեւապէս բորբոքում էր ազգային եւ կրօնական թշնամանք։

Խորամանկօրէն օգտագործելով հայկական հարցում մեծ տէրութիւնների միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները, Ապտուլ Համիտը իրագործեց Արեւմտեան Հայաստանը իր վաղեմի բնակչութիւնից դատարկելու յանցագործ ծրագիրը՝ տնտեսապէս քայքայելու, ֆիզիկապէս ոչնչացնելու եւ բռնի արտաքսելու ճանապարհով։

Արիւնարբու սուլթան Ապտուլ Համիտը եւ նրա պետական բարձրաստիճան գործիչները 1878 թուականի Պերլինի վեհաժողովից յետոյ ցինիկաբար յայտարարում էին, որ հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ է ոչնչացնել հայ ժողովրդին։ Հայերի բնաջնջման համիտեան քաղաքականութիւնը սկսուեց կիրառուել 19-րդ դարի 90-ական

թուականներից։ Յատկապէս 1894-96 թթ. երկու տարիների ընթացքում կոտորուեցին 300,000 հայեր, աւերակ դարձան հարիւրաւոր գիւղեր ու քաղաքներ, ամայացան ամբողջ շրջաններ։

Ապտուլ Համիտը իր 32 տարուայ «զուլումի» բռնապետութեան շրջանում,- ինչպէս իրաւամբ իր ժամանակին նշել է ռուս դիւանագէտ Ա. Մանտելշտամը,- ծայր աստիճան զարգացրեց այն բոլոր բացասական կողմերը, որոնք յատուկ են ընդհանրապէս թուրքական տիրապետութեանը, առանձնապէս դաժան հալածանք բոլոր հպատակների նկատմամբ, իսկ երբեմն էլ քրիստոնեաների ջարդը, ոգիտութեան եւ կրօնական մոլեռանդութեան պահպանումը ժողովրդի մէջ։ (Ա. Ն. Մանտելշտամ, Երիտասարդ թուրքերի պետութիւնը։ Ս. Էջմիածին, 1916, էջ 5)։

Իսկ ի՞նչ արեցին երիտթուրքերը ազգային հարցը լուծելու համար։ 1908 թ. իշխանութեան գալուց անցնելուց յետոյ նրանք ոչ միայն մոռացան մինչ այդ իրենց տուած խոստումները, այլեւ դարձան ժողովուրդների ազգային ազատագրական շարժման բացայայտ թշնամիներ։ Ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին այդ ազգերը թուրքացնելու կամ ոչնչացնելու ճանապարհը։

Եւ այդպէս Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից դաժանօրէն կազմակերպուեց արեւմտահայերի զանգուածային ջարդերը, որին ինչպէս յայտնի է զոհ գնացին մօտ մէկուկէս միլիոն անմեղ մարդիկ։ Տեղի ունեցաւ 20-րդ դարի մարդկութեան դէմ ուղղուած առաջին ցեղասպանութիւնը։

Ծանօթ.- Թանզիմաթի շրջանին վերաբերող փաստագրական նիւթերը՝ այդ թւում կայսերական հրովարտակները, հրահանգները, կանոնադրութիւնները եւ այլ օրէնքները թարգմանել ենք Düstür-i (օրէնքների ժողովածու) օսմաներէն բնագրերից, որոնք անտիպ վիճակում պահւում են մեր անձնական արխիւում, հետեւեալ խորագրով «Օսմանեան Կայսրութեան Ոչ Մահմետական Ազգային Փոքրամասնութիւններին վերաբերող Օրէնսդրական Նիւթեր» (1839-1915 թուականներ)։

ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՍԱՅԻՏ ՓԱՇԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սասունի եւ յարակից հայաբնակ նահանգներում, ինչպէս նաեւ Կ. Պոլսում տեղի ունեցած հայերի կոտորածների 100-ամեակի առթիւ 1994 թ. «ՆՈՐ ՕՐ» եռօրեայ թերթի հոկտեմբեր ամսուայ թիւերում լոյս ընծայեցինք թուրք պետական գործիչ՝ մեծ վեզիր՝ Քեամիլ փաշայի յուշագրութիւնից (արաբատառ թուրքերէն) այն նիւթերը, որոնք վերաբերում են 19-րդ դարի երկրորդ կէսից ծաւալուած հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին, ինչպէս նաեւ Հայկական Հարցի նկատմամբ Օսմանեան կայսրութեան եւ մեծ տէրութիւնների դիրքորոշման խնդրին։

Ստորեւ, մենք առաջին անգամ հայ ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում նաեւ տուեալ ժամանակաշրջանի մէկ այլ մեծ վեզիր Սայիտ փաշայի (Մեհմետ Շափուր Զելեպի, 1838-1914) յուշագրութիւնից առանձին հատուածների թարգմանութիւնը օսմաներէն բնագրից, որտեղ խօսւում է 1895 թուականի Սեպտեմբերին տեղի ունեցած Պապ-ը Ալիի ցոյցի եւ այլ հարցերի մասին։

Չնայած նրա թուրքամէտ դատողութիւններին եւ դէպքերի նկարագրման ընթացքում դրսեւորած կողմնապահութեան այնտեղ նոյնպէս կան ուշադրութեան արժանի նիւթեր։ Նման թարգմանութիւնները անհրաժեշտ են նաեւ այն հայեցակէտից, որ արդի թուրք պատմաբանները աղաւաղելով իրականութիւնը, ենթագրմտօրէն յայտարարում են, թէ իբր 19-րդ դարի վերջերին արեւմտահայերը ցեղասպանութիւն են կատարել թուրքերի նկատմամբ։

Սայիտ փաշայի յուշագրութեան ընթերցումը մեզ բերեց այն կարծիքի, որ նա աւելի զգուշութիւն է հանդէս բերել տեղի ունեցող այդ իրադարձութիւններին, քան Քեամիլ փաշան, որը հայկական հարցը լուծելու համար ամենայն մոլեռանդութեամբ եւ ցինիկօրէն յայտարարում էր *«ջնջել, վերացնել հայ ազգը մէկընդմիշտ»*։ Սայիտ փաշան առաւել կողմ է եղել բանակցութիւնների եւ դիւանագիտական միջոցներով լուծել Հայկական Հարցը։ Ինչպէս յուշագրութիւնից երեւում է, այդ հարցում որոշակի տարաձայնութիւններ են եղել նրա եւ արիւնոտ սուլթան Ապտուլ Համիտի միջեւ։ Այդ իսկ պատճառով Ապտուլ Համիտը յանախակի փոփոխութեան է ենթարկել մեծ վեզիրի պաշտօնակատարին, մէկ նշանակելով Քեամիլ փաշային, մէկ էլ Սայիդ փաշային։

Բերենք մի երկու օրինակ յուշագրութիւնից, որոնք առնչւում են Սայիտ փաշայի պաշտօնից հեռացուելու խնդրին.

«Հայերի պատահարը ի յայտ երեւան գալուց առաջ իմ դիրքը բաւականին ամուր էր: Այդ պատահարի առաջ գալը եւ շտապ չկանխելը, որոշ առումով թուլացրեց իմ դիրքը: Իսկ ռազմական նախարարութիւնը օժանդակ ուժեր չտրամադրելով, առաւել դժուարացրեց անդորրի վերահաստատումը: Միւս կողմից, հպատակների միջեւ առաջ եկած թշնամանքն ու բախումները լի էին վտանգներով: Հետեւաբար, անդորրը վերահաստատելու եւ իմ վրայից պատասխանատուութիւնը վերացնելու համար բաւականին դժուարութիւններ կրեցի եւ ձեռնարկեցի մի շարք միջոցառումներ: Հակառակ այդ բոլորին, առանձին շահախնդիր մարդիկ լուրեր էին տարածել քրիստոնեաների մօտ, որ ես իբր հաջալերել եմ մահմետականներին հայերի դէմ, իսկ մահմետականների մօտ էլ ասել են, թէ ես իբր հայերին չեմ պատժել իրենց արարքների համար»:

Ուշադրութեան արժանի է նաեւ Սայիտ փաշայի պաշտօնանկութիւնից յետոյ Սպտուլ Համիտի արտայայտած կարծիքը նրա մասին որը փոխանցուել է նրան Պալատի բարտուղարներից Ֆայիզ պէյի միջոցով:

«– Ես Սայիտ փաշայի հետ մինչեւ հիմա տեւապէս հաղորդութեամբ եմ վարուել: Նոյնիսկ նրան հասցրել եմ մինչեւ մեծ վեզիրութեան պաշտօնին: Մինչդեռ նա հայերին չպատժեց եւ մէջտեղ եկաւ բարեփոխութեան աղմուկը: Արդեօ՞ք իրեն ինչ ենք արել, որ պաշտօնանկութիւնից յետոյ բոլորովին մեզ մօտ չի գալիս: Չէ որ նահանգներում արիւն է հոսում: Բոլորովին չի մտածում, որ անհրաժեշտ է գալ, գլուխ գլխի տալ եւ մի ճար գտնել այս խնդրի շուրջ: Ես նրա հետ հաղորդութեամբ եմ վարուել, իսկ ինքը ճաշկերոյթի ժամանակ մօտս եկաւ կրծքի պատուոնշանների շարքից իմ Թուղրան հանելուց յետոյ: Նոյն օրն էլ հայերի պատրիարքը եկեղեցու դռան վրայից հանել էր նաեւ ցուցանակը»:

Ինչպէս նշեցինք վերեւում Սայիտ փաշան իր յուշագրութեան մէջ մանրամասն նկարագրում է 1895 թ. Սեպտեմբերին Կ. Պոլսում տեղի ունեցած հայկական ցոյցի (Պապ-ը Ալիի) մանրամասնութիւնները եւ այդ ցոյցի հետ կապուած հայ-թուրքական բախումները: Ցոյցը խաղաղ բնոյթ էր կրում: Այն կազմակերպուած էր Հնչակեան Կուսակցութեան կողմից, հայկական բարեռորոգումների խնդրում եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը գրաւելու նպատակով: Սայիտ փաշայի յուշերից պարզւում է, որ կառավարութիւնը նախօրոք իրազեկ էր այդ ցոյցի մասին եւ ուշի-ուշով միջոցառումներ էր ձեռնարկել այն խափանելու հարցում: Ակնյայտ է նաեւ, որ Սայիտ փաշան ձգտել է, որպէսզի զինուորական միջամտութիւն կատարուի հաւանական բախումները կանխելու համար: Հակառակ նրան, սուլթան Սպտուլ

Համիտը եւ ռազմական նախարարութիւնը դիտումնաւոր ձգձգել են այն, որպէսզի զինուած թուրք ամբոխը հաշուեյարդար տեսնի հայերի հետ:

Փաստերը ցոյց են տալիս, որ Սպտուլ Համիտը մի նոր հայկական ջարդ կազմակերպելու իր նենգ ծրագիրը գործադրել է հետեւեալ կերպ: Գաղտնի զինել է Սոֆթաներին (կրօնական ուսումնարանի սաներին), ինչպէս նաեւ մահմետական խուժանին եւ նրանց ուղարկել փողոց հայերի վրայ: Լիովին պարզւում է, որ այդ խուժանին մէջ եղել են նաեւ «ծպտեալ» զինուորներ: Այդ է վկայում Սայիտ փաշան, նշելով, որ *«նոյնիսկ հայերի վրայ յարձակուողների թւում եղել են զինուորներ եւ ուսանողներ»* (հատ. I, էջ 40):

Բնականաբար միջազգային հասարակութիւնը խստօրէն դատապարտեց Սպտուլ Համիտի նախաձեռնութեամբ կատարուած այդ յանցագործութիւնները եւ պարտադրեց իր կառավարութիւններին ազդու միջոցներ ձեռնարկել: Արդիւնքում Բարձրագոյն Դուռը վաւերացրեց (Հոկտեմբեր 8, 1895 թ.) «Մայիսեան բարեռորոգումների» ծրագիրը, որը բխում էր 1878 թ. Պերլինում կնքուած պայմանագրի հայերին վերաբերող 61-րդ յօդուածից: Այնուհանդերձ այն չգործադրուեց եւ ընդհակառակը առիթ տուեց նոր կոտորածների: Միայն Կ. Պոլսի կոտորածներին զոհ գնացին մօտ երկու հազար անմեղ հայեր: 1895 թ. Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներին զանգուածային կոտորածներ տեղի ունեցան հայաբնակ գաւառներում՝ Տրապիզոնում, Դերճանում, Բաբերտում, Երզնկայում, Քղիում, Զարանջակում, Բաղեշում, Ուրֆայում, կարինում, մալաթիայում, Խարբերդում, Դիարբեքիրում եւ այլուր:

Ընդհանուր արմամբ 1894-96 թթ. կոտորածներին զոհ գնացին 300.000 անմեղ հայեր:

Ստորեւ բերուած թարգմանութիւնը մենք ներկայացնում ենք որոշ կրճատումներով, որովհետեւ թէ շարադրանքում եւ թէ բերուած հեռագրերում եւ հաղորդագրութիւններում կան կրկնութիւններ: Վերջում տրուած են անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

1313 թ. Բեպի ամսահիրի երրորդ օրը (Սեպտեմբեր 28, 1895 թ.) Թուրքիան վաչայի (1) հետ միասին հրաման ելավ պարտադիր ժամը 11-ի մոտերը մեր պատանեները ընթացքում, այնտեղից դուրս էր գալիս ոստիկանու թեան նախարար՝ Նազիմ վաչան: Այդ օրը, գիշերուայ ժամերին Թուրքեան վաչայի հետ ներկայացայ ստամբանին (2) եւ ժամը 5-ի մոտերը վերադարձայ բնակարանս: Որոշ ժամանակ անց մի ծանուցագիր ստացայ (Պատասխան) գլխաւոր քարտուղարու թիւնից, որի բովանդակութիւնից պարզուում էր, որ ոստիկանու թեան նախարարի՝ ստամբանին ներկայացրած տեղեկագրի համաձայն 500 դիմուած հայեր Կիրակի կամ Երկուշաբթի օրը շարժուելու էին դէպի Բարձրագոյն Դուռ, որտեղ դիմուած դիմադրութիւն էին ցուցաբերելու, եթէ նրանց հանդէպ զէնք գործադրուեր ...: Ոստիկանու թեան նախարարից մի ծանուցագիր էլ ստացայ, ուր նշուում էր, որ վերոյիշեալ լուրը իբր տեղեկացուել էր մի անյայտ հայի կողմից վերաբերեալ դատարանի նախագահին ներկայացրած գրութիւնից: Մանուցագրում նշուում էր նաեւ, որ մի քանի օր առաջ ի յայտ էր եկել նման մի լուր, սակայն դրա հաստատի լինելու մասին տարակուսանք կար: Այդ ծանուցագրի բովանդակութիւնից ես եւս կասկածեցի վերոյիշեալ լուրի ճիշդ լինելու մասին: Ուստի մի գրութեամբ դիմեցի ոստիկանու թեան նախարարութիւն, պահանջելով մանրամասնին ստուգել այդ լուրը յայտնողի ինքնութիւնը եւ նրա հաղորդած գրութիւնը: Ոստիկանու թեան նախարարի ծանուցագրի մէջ կար այն միտքը, որ Կիրակի օրը, եթէ հայերին արգիլուեր եկեղեցի մուտք գործել, ապա, նրանք այդ արգելակումը պատրուակ դնելով կարող էին Մեռելոցի օրը խռովութիւն բարձրացնել:

Հետեւաբար՝ արգելք հանդիսանալը նպատակայարմար չէր համարուում: Իսկ եթէ հոծ բազմութեամբ շարժուելը իրական լիներ, սնալ դիմուրական հեծեալ մի դասակ էր նախապատրաստուելու նրանց ցրիւ տալու համար:

Այնուհետեւ շտապ կազմուեցին երկու հաղորդագրութիւններ, ուղղուած՝ հայ պատրիարքին (նկատի ունի Կ Պոլսոյ Հայոց Պատրիարք Մատթէոս Իզմիրլեանին (1845-1910) ծանոթ բարգմանչի, ԱՓ.), ինչպէս նաեւ հողեւոր եւ աշխարհիկ ժողովներին, իսկ մնացեալ ամբոխի դեկավարներին: Առաջինի մէջ նշուած էր, որ պատրիարքը հողեւոր եւ աշխարհիկ ժողովների անդամներից մէկական պատուիրակ վերցնելով դար Բարձրագոյն Դուռ եւ պարզաբաներ (հայերի) ցանկութիւնը: Իսկ միւսի մէջ դիմուած ամբոխին կատարուել էր հետեւեալ յայտարարութիւնը, որ «օրէնքի հիման վրան անմիջապէս ցրուեն, իսկ չցրուելու դէպքում ձեռնարկուելու էր օրինական միջոցներ...»:

Այնուհետեւ ոստիկանու թեան նախարարը մի քանի անգամ Բարձրագոյն Դուռ զգուշացնելով, որ հայ ամբոխը գտնուում է պարսկական դեսպանու թեան մօտակայքում, որ նրանց մի մասը մօտենում է Բարձրագոյն Դուռ, մի մասն էլ շարժուում է այլ վայրերով, որ շարունակում է ոստիկանու թեան հետ դիմուած բախումներ տեղի

ունենալ: Յայտնեց նաեւ, որ ոստիկանու թեան ուժը բաւարար չէ, եւ խնդրեց օժանդակ ուժեր ուղարկել: Սրա հիման վրայ, երբ ռազմական նախարարու թիւնից մի ջոկատ դիմուոր պահանջեցինք, մեր պահանջը կրկին չընդունուեց...

Շուտով տեղեկացանք, որ դիմուորական ուժի բացակայու թեան հետեւանքով տգէտ ամբոխը յարձակուել է (հայերի) վրայ, որ նոյնիսկ դաժանու թիւն գործադրողների թիւում եղել են դիմուորներ եւ ուսանողներ (3): Բնականաբար նման յանցագործներին պատժելու հարցը մտնում էր պետու թեան իրաւասու թեան մէջ: Ոչ մի անհատ մի այլ անհատի վրայ իրաւունք չունի բռնանալու: Ի վերջոյ յանցագործներին օրէնքի հիման վրայ պատժելու կարգադրութիւն եղաւ, ինչպէս նաեւ գրաւոր տեղեկացուեց ռազմական, ծովային նախարարու թիւններին, քաղաքապետարանին, ոստիկանու թեանը, որպէսզի ամէն կերպ արգիլեն դիմուորների եւ ուսանողների միջամտու թեանը, մատնանշելով, որ բռնու թիւն գործադրելու դէպքում, նրանք յանցագործ են ճանաչուելու ...:

Ամբոխը ցրուեց եւ բախումները վերացան: Գիշերուայ ժամը 2-ի մոտերը կատարուած ստուգումից պարզուեց, որ պատրիարքարանի եկեղեցիի մէջ 40-50 հոգուց բացի մարդ չի մնացել: Նրանք էլ պանդուխտ եւ անօթեւան լինելով, խոստացել էին յաջորդ օրը դուրս գալ եկեղեցուց:

Արիւնոտ սուլթան Ապտուլ Համիտը
Ֆրանսական «Աշխարհի Թանգարան» հանդէսի ամուսնաթերթը 1896 թ. թիւ 5, գործ՝ Նկարիչ Ռիպելի

Յերեկը ոստիկանու թեան նախարարի, իսկ այնու հետեւ երկու թիկնապահների միջոցով պահանջուեց, որպէսզի պատ-ուիրարքը ներկայանայ Բարձագոյն Դուռ: Սակայն, երբ նրանք վերադարձան պար-զուեց, որ նրանք պատրիարքին տեսել էին հիանալ եւ արիւն փոխելու վիճակում եւ ստացել էին այն պատասխանը, որ պատրիարքը յաջորդ Երեքշաբթի օրը կը ներկայանայ Բարձագոյն Դուռ...:

Խօսելով այս պատահարի պատճառների մասին, Արիկ եւ Նուրեան էֆէնդիները տուեցին այն բացատրու թիւնը, որ դրանք առաջ են եկել Ռուսաստանից եկած մօտ 15 հայերի դրդումով, որ պատրիարքը մատ չունի այդ գործում, որ Ռուսաստանից եկած այդ հայերի հանդէպ ոստիկանու թիւնը հանդէս է բերել անտարբեր վերաբերմունք: Ես չեմ հասկանում, թէ առանց պատրիարքի իմացու թեան կարող է՞ր արդեւք այդպիսի մի բան առաջ գալ: Իսկ եթէ նախապէս նա դիտեր այդ մասին, հապա ինչպէ՞ս է, որ այդ պատահարը տեղի ունեցաւ ...:

Սառրեւ մանրամասն սկիզբից կը բացատրեմ տուեալ պատահարի մասին իմ ձեռնարկած միջոցառումները, նկատի ունենալով, որ քարոզը բոլորովին այլ կերպ է նկարագրել տուեալ իրադարձութիւնը:

Գրնդրդիրի (4) առաջ, երբ ոստիկանութեան ծանուցագիրը ստացայ, իմ մօտ գտնուող Թիւրնապահիս կառարեցի հետեւեալ կարգադրութիւնը: «Շտապ գնա ոստիկանութիւն, տես տեսուչին եւ ասա նրան, որ ձեռք առնի բոլոր միջոցները, որպէսզի կանխի հայերի յարձակումը (5) Բարձրագոյն Դուռն վրայ եւ ասանց արիւն թափելու ցրի ամբոխը»:

... Ոստիկանութեան տեսուչին կարգադրուեց, որ ստորեւ բերուած հաղորդագրութիւնը ընթերցուի ամբոխի առաջ եւ այնուհետեւ յանձնուի պատուիրարան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԵՆ

Հայոց խոհեմազարդ պատրիարքին եւ ժողովրդին:

Հրամայում եմ անմիջապէս ցրել ամբոխը:

Պատրիարքը հոգեւոր եւ աշխարհիկ ժողովների անդամներից մէկական ներկայացուցիչ վերցնելով շտապ գայ Բարձրագոյն Դուռ եւ յայտնի իրենց ցանկութիւնների մասին: Կրկին հրամայում եմ, որ ամբոխը ցրուի:

Սոյն յայտագիրը հաղորդուում է վսեմաշուքեալ վեզիրի, արդարադատութեան եւ կրօնական գործերի նախարարների եւ բարձրապատիւ փաշաների որոշման հիման վրայ:

Ներքին գործերի նախարար ՐԻՖԱԱԹ

Գրուած Սեպտեմբեր 30, 1313 թ. (1895)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայոց պատրիարքարանի այժմեան հոգեւոր եւ աշխարհիկ անդամներին:

Ամբոխի ցրման համար ոստիկանութեան վսեմաշուք տեսուչը կառավարութեան անունից ուղարկուել էր պատրիարքարան: Պատրիարք էֆենտին առարկել էր վերոյիշեալ տեսուչի հետ տեսակցելը: Իսկ յետագայում ուղարկուել էր եպարքոսութեան պաշտօնեաներից՝ հազարապետ Խալիլ պէյը, սակայն ամբոխը նորից չէր ցրուել: Վերոյիշեալը վերադարձաւ միմիայն պատրիարքարանի պաշտօնեաներից մէկի տուած պատասխանի հիման վրայ: Այդ պատասխանով նրանք խոստացել էին ցրել ամբոխը, եւ խնդրել ոստիկանութեան տեսուչի միջնորդութիւնը ժամանակ տրամադրելու մասին, որպէսզի իրագործուի Բարձրագոյն Դրան պահանջը: Իր հերթին տեսուչը յանձն էր առել ամբոխի վրայ կրակ չբացել:

Այն անհատները, որոնք սուլթանական կառավարութեան օրէնքով արգելուած հասարակային շարժման մասնակցութիւն են ունեցել, պատրիարքարանի միջնորդութեամբ, պատեհ համարուեց աւելի մեղմ վերաբերմունք հանդէս բերել նրանց հանդէպ: Առանց զինուորական ուժի միջամտութեան ամբոխի ցրումը,

նշան է կարեկցանքի արտայայտութեան: Ամբոխային այդ շարժումը ոչ կառավարութեան ոչ էլ հայ համայնքին շահ բերող մի երեւոյթ չէ: Այնպէս որ այդ հաւաքը պէտք է համարել սահմանափակ թիւ ունեցող մարդկանց գործունէութեան արդիւնք: Հետեւաբար օրէնքի անունով միաձայն որոշուած է այս յայտագիրը ներկայացնելու պահից, մէկ ժամուայ ընթացքում ցրել ամբոխը:

Գրուած է 1313 թ. Բերի ուլ-ահիր ամսի 10-ին (Սեպտեմբեր 30, 1895 թ.):

Արտաքին գործերի նախարար՝ Թուրհան

Ներքին գործերի նախարար՝ ՐԻՖԱԱԹ

Արդարադատութեան եւ Կրօնական գործերի նախարար՝ ՐԻԶԱ

Մեծ վեզիր ՍԱՅԻՏ

Սոյն որոշումը, ցերեկուայ ժամը 8:15-ին յանձնելով եպարքոսութեան թիկնապահերից Խալիլ պէյին, յանձնարարուեց ներկայացնել Պատրիարքին:

Այսուհանդերձ Բարձրագոյն Դուռը հայերի նախայարձակ լինելու վտանգը աչքի առաջ ունենալով պահնորդ ոստիկաններին պատրաստ վիճակում մի սպայի գլխաւորութեամբ պահ էր տուել ոստիկանատանը: Հայերի յարձակման դէպքում նախ առաջարկուելու էր, որ նրանք հետ քաշուեն. կարգադրութիւնը չլսելու դէպքում հրաման էր տրուած զէնքի ուժով ետ մղել նրանց: Ցիշեալ սպան ասել էր, որ իր տրամադրութեան տակ կայ մօտ 50-60 զինուոր, որոնցից շատերը զէնք ունենալով հանդերձ փամփուշտ չունէին: Նա յայտնել էր նաեւ որ յարձակման դէպքում նրանք հայերին կը դիմաւորեն սվիններով:

Ահա այս ընթացքում սկսուեց լուր տարածուել, որ ցամաքային եւ ծովային զինուորները, կրօնական ուսումնարանի սաները եւ արհեստաւորները յարձակուել են հայերի վրայ: Ուսումնարանի սաների եւ արհեստաւորների կատարած դաժանութիւնները հաղթանակի կողմից հաստատուելուց յետոյ, նա շտապ զեկուցագրեր է ներկայացրել կրօնապէտին (շէյխ ուլ իսլամ) ռազմական եւ ծովային նախարարութիւններին, ոստիկանութեան պաշտօնատներին, որպէսզի օրինազանցները ենթարկուեն խիստ պատասխանատուութեան:

Այդ օրը զինուորական կանոնաւոր ուժերի ինչպէս նաեւ պահնորդ ոստիկանների միջամտութիւն չկատարելու հետեւանքով, հնարաւոր չեղաւ հայերին ցրել եւ ոչ էլ վերջ տալ վերոյիշեալ դաժանութիւններին: Իսկ Բարձրագոյն Դուռը, անհրաժեշտ ջանք թափեց այդ օրը, որպէսզի խրատելով եւ զէնքի սպառնալիքով վերջ տայ պատահարին: Վերոյիշեալ պաշտօնատների ղեկավարներին համապատասխան հրամանները տալով հանդերձ, պատրիարքութեանը կարգադրուեց, որպէսզի շտապ Բարձրագոյն Դուռ գան ազդեցիկ առաջնորդ Գարրիէլ էֆէնտին եւ հայ երեւելիներից Նուրեան էֆէնտին...:

ՆԱՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԹԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Հասանական յարձակման կապակցութեամբ ծանուցագրով պահանջուել էր մէկ վաշտ գինուոր ուղարկել Բարձրագոյն Դռան շրջակայքը:

Այսու հանդերձ, ինչպէս նախապէս յայտնել ենք, հայերի հաւաքը Սուլթան Համէտի, Գաստրդայի եւ Բարձրագոյն Դռան շրջակայքում արդէն ցրուած է: Այժմ զբաղուած ենք պատրիարքարանի ամբոխը ամբողջովին ցրելու գործով: Ուշադրութեամբ հետեւում ենք, որպէսզի տուեալ պատահարը Եւրոպական հարց դառնալու բնոյթը չընդունի: Անդորրի վերահաստատման մասին տեղեկացուել է դեսպանութիւններին: Մանրամասնութիւնները հաղորդուելու են տեղեկագրով:

Ներքին Գործերի Նախարար

Արտաքին գործերի Նախարար

Արդարադատութեան Նախարար

Մեծ Վեզիր

ԱՐԻԶԱ(6)

... Անգլիացի նոր դեսպան պրն. Գոշենի հետ տեղի ունեցած պաշտօնական տեսակցութեան ընթացքում խօսք բացուեց հայերով բնակեցուած վիլայէթների (նահանգ) դրութեան մասին: Ըստ նրան հասած տեղեկութիւնների, յիշեալ վիլայէթներում իբր ապահովութիւն ու անդորրը չմացել է եւ պաշտօնեաները չարաշահում են գործադրում փոքրամասնութիւն կազմող բնակչութեան նկատմամբ, թէ հայերը հարստահարւում են այդ պաշտօնեաների կողմից:

Անգլիական պետութեան ներկայ նպատակը եւ դիրքորոշումը այն է, որ պահպանուի Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը, ինչպէս նաեւ գործադրուի նորին մեծութիւն Փադիշահի կամքը:

«Անգլիան մտադիր չէ խառնուելու Օսմանեան կայսրութեան ներքին գործերին. միմիայն կարող է առաջարկել, որ Պերլինի պայմանագրի որոշումները գործադրուեն, եւ այդ գործում մասնակցութիւն ունենան նաեւ տուեալ պայմանագիրը ստորագրած միւս պետութիւնները: Փոքրամասնութիւն կազմող հպատակները եթէ մեծամասնութեան կողմից հարստահարուեն, ապա բնական է, որ Օսմանեան պետութիւնը դրանով առիթ է տալու, որպէսզի Եւրոպան իր ուշադրութիւնը բեւեռի գործադրուող այդ բռնութիւնների վրայ: Իսկ այդ հանգամանքը կարող է պետութիւնների միջեւ տարաձայնութիւններ առաջանալու պատճառ հանդիսանալ եւ հետեւանքն էլ կը լինի այն, որ Եւրոպայի անդորրը

կարող է վտանգի ենթարկուել: Ուստի անգլիական կառավարութիւնը ձգտում է Օսմանեան պետութեանը մղել բարենորոգումների գործադրման ուղու վրայ, որպէսզի կանխի սպառնացող վտանգը...:

Անգլիայի դեսպանը իր մտքերը եզրափակեց ասելով, «որ հնարաւորին չափ շուտ ասիական մայրաքաղաքում գործադրուի անհրաժեշտ բարեփոխութիւնները»: Այնուհետեւ խօսք եղաւ այն մասին, որ ոմանք ջանքեն գործադրում, որպէսզի Օսմանեան կայսրութիւնը հետաձգի այդ բարեփոխութիւնների իրագործումը, որ նրանց հիմնական նպատակն է օգտուել կայսրութեան այդ ճգնաժամային վիճակից: Եւ եթէ Օսմանեան կայսրութիւնը այդպիսի թելադրանքներին հետեւելով ձգձգի բարեփոխումների գործադրումը, ի վերջոյ կը կանգնի փակուղու առաջ:

Զրոյցի ընթացքում նա տեսապէս մատնանշում էր անգլիական կառավարութեան ցանկութիւնը՝ բարեփոխութիւններ գործադրելու խնդրում, նշելով, որ այդ բարեփոխութիւնները եթէ կապուած են Եւրոպայի խաղաղութեան ընդհանուր շահերի հետ, ապա՝ միւս կողմից առաւելին առնչւում են յատկապէս Օսմանեան կայսրութեան ապահովութեան շահերի հետ:

Նշուեց որ Օսմանեան կայսրութեան հանդէպ անգլիական պետութեան տածած անկեղծ զգացումները եւ նրա նախկին բարեկամութիւնը կը հարատեւի զրոյցի ընթացքում յայտնուած բարի ցանկութիւնների իրագործումով(7):

Ինչ վերաբերում է Անատոլիայի բարեփոխութիւնների հարցին իմ նախկին գրութիւնների մէջ (տե՛ս Զուլկատէ 17, 1296 (Հոկտեմբեր 3, 1879), Զուլկատէ 21, 1296 (Հոկտեմբեր 7, 1879) եւ Զիլհիճէ 18, 1296 (Դեկտեմբեր 3, 1879) թուականների գրութիւնները): Ես յայտնել էի, որ հայերով բնակեցուած վայրերում անհրաժեշտ բարեփոխումների կիրառումը բխում է Պերլինի պայմանագրի 61-րդ յօդուածից եւ այս առթիւ կատարուող անհրաժեշտ նախաձեռնութիւնները տեղեկացուելու են մեծ տէրութիւններին: Յիշեալ վայրերի անդորրը երաշխաւորելու համար շտապ անհրաժեշտութիւն էր զգացուում նոր վարչակարգ հաստատելու խնդիրը: Այնուհանդերձ, միայն այս վայրերում բարեփոխութիւններ կատարելը կարող է յուզել այլ վիլայէթների բնակչութեանը եւս, եւ նման արտօնութիւններից օգտուելու համար, բնականաբար նրանք եւս կը դիմեն օտար պետութիւնների օգնութեանը: Այս վտանգը կանխելու եւ թէ՛ Ասիական մասը անգլիական եւ ռուսական պետութիւնների միջեւ մրցակցութեան հրապարակ չդարձնելու համար, որը Օսմանեան կայսրութեան համար կեանքի հարց է, անհրաժեշտ է (այդ վիլայէթները) պահպանելու եւ ապահովելու նպատակով Ռումելիի շրջանից դուրս գտնուող վիլայէթներում այսօրուանից բարեփոխութիւններ անցկացնել:

Վերոյիշեալ գրութիւնների մէջ նշուած առաջարկութիւնները բնականաբար գործադրուելու են այնպէս, ինչպէս որ Նորին Մեծութիւն Փատիշահի կայսերական հրամանը կը թելադրի:

Գրուած է Ճումատ ալ- աուալ, 1297 (Ապրիլ 1880)

Ստորագրութիւն ՍԱՑԻՏ

(Մանավանդ Թիմոն Խարդմանչի, - Ա.Փ.: Հետաքրքրում Սայֆո փաշայի կողմից սուլթանին ուղղված հեռանկարի մի այլ գրառման մասին, (Մայիս 30, 1895 թ.) նշում է նաև Հեռանկարը):

... « Անգլիայի դեսպանի հետ տեղի ունեցած բարձր մակարդակի բանակցությունը, արձանագրուել եւ ստորագրուել է պալատի ներկայացուցիչ Միւնիր փաշայի կողմից եւ ի պահ է դրուել Պալատում: Բարձրագոյն Դռան կողմից Պալատ է հաղորդուել նաեւ, որ դեսպանների այժմեան խօսքի նիւթը ոչ թէ նախապէս նշուած 6 վիլայէթներն են, այլ Անատոլիայի բոլոր վիլայէթներում ամբողջութեամբ վերգրած մի նոր վարչակարգ ստեղծելու հարցը, որ այդ վարչակարգը դրուի հաղթահացիական եւ զինուորական հսկողութեան ներքոյ: Դեսպաններու կողմից ներկայացուած յուշագրի եւ այլ գրութիւնների մասին Բարձրագոյն Դուռը տուել է այն պատասխանը, որ ընդունուած որոշումները բաւարարելու են դեսպաններին...:

«ՀԱՄԻՏԻԷ» ՀԵԾԵԼԱԳՆԴԵՐԸ(8)

Լուրեր են տարածուած, որ «Համիտիէ» հեծելագնդերը տուրք վճարելուց ազատուած լինելով հանդերձ իրենց շահերի համար բռնութիւններ են գործադրում բնակչութեան հանդէպ:

Թէ վիլայէթի եւ թէ բնակչութեան կողմից հասած բողոքներից պարզւում է, որ Տիարպէքիրի շրջանում գտնուող «Համիտիէ» հեծելագնդի հրամանատար Մուսթաֆա փաշան, որը հանդիսանում է նաեւ աշիրէթի առաջնորդը, բառիս բուն իմաստով, զինուորական ձեւի մէջ մտած այս աշիրէթի մարդկանց դարձրել է բռնութիւն գործադրելու կատարեալ մի գործիք, իրականում խանգարելով այդ շրջանի բնակչութեան ապահովութիւնն ու անդորրը: Տիարպէքիրի նախկին նահանգապէտ Խալիտ էֆէնտին եւ նրա յաջորդը Ֆայիք փաշան շատ բաներ են գրել այն մասին, որ 4-րդ բանակի հրամանատար՝ Զէքի փաշան չափից աւելի է հովանաւորում այս Մուսթաֆա «փաշային»:

«Համիտիէ» հեծելագնդի առաջնորդներին, սպաներին եւ նոյնիսկ պարզ զինուորներին անհրաժեշտութեան դէպքում դատաքննութեան ենթարկելու իրաւունքը վերացուել է տեղական դատարանների համար:

Սրանց դատական գործերը իրր կարող էին բնել միմիայն զինուորական ատեանները, սակայն այս օրէնքն էլ մնացել է թղթի վրայ եւ անգործութեան մատնուել բանակի հրամանատարի եւ այլ առաջնորդների կողմից: Մինչդեռ, զինուորականների գործադրած բռնութիւնները, ինչպէս նաեւ սովորական ոճրագործութիւնները, ըստ օրէնքի, պէտք է հետաքննուեր պետական դատարանների կողմից:

Տիարպէքիրի վիլայէթում Մուսթաֆա փաշային օրէնքի հիման վրայ դատաքննութեան ենթարկելու եւ վերոյիշեալ դատական նոր օրէնքը վերացնելու համար նախարարների խորհրդի՝ սուլթանին ներկայացրած տեղեկագիրը ոչ մի արձագանգ չգտաւ:

Այնուհանդերձ, ի վերջոյ Մուսթաֆա փաշան ընկաւ իր զոհերից մէկի վրէժխնդրութեան սրով եւ աղէտն էլ աւարտուեց այդ ձեւով(9):

«ՀԱՄԻՏԻԷ» ՀԵԾԵԼԱԳՆԴԵՐԻ ԶՕՐԱԽԱՂԵՐԸ

Այս տարի (1895 թ.) «Համիտիէ» հեծելագնդերի զօրախաղերի եւ հեծեալների ծառայութեան մէջ գտնուելու ընթացքում նրանց ոճիկով եւ այլ անհրաժեշտ ծախսերով ապահովելու համար ռազմական նախարարութիւնը 35 հազար լիրա տրամադրելու գեկոյց էր ներկայացրել:

Ցաւտնի է, որ հեծելագնդերին ենթարկուող անձնիք կանոնաւոր զինուորական ծառայութեան մէջ չեն գտնուում: Սրանք հաւաքւում են առաջնորդի ցանկութեամբ, իսկ բացակաների տեղն էլ լրացւում է այլ հեծեալներով:

Այս հեծելագնդերի ստեղծումից ի վեր, առաջնորդները եւ սպաները երբէք զինուորական ուսուցում չէին ստացել: Սրանց իմացածը եղել է միմիայն ձիրիտի խաղը: Մինչդեռ, ինչպէս բացատրել էի իմ առաջին ծանուցագրի մէջ, այսօր, բոլոր պետութիւնների զինուորականութեան նման, եթէ զինուորը հարկ եղած զինավարժութիւնը չսովորի եւ մասնակցութիւն չունենայ ընդհանուր զօրախաղերին, ապա ոչ մի իմաստ չունի այդպիսիներին զինուոր կոչելու եւ նրանցից էլ օգուտ սպասելու:

Թէ՛ մայրաքաղաքում եւ թէ՛ դրսում գտնուող մեր զօրաբանակների զինուորները բոլորովին զուրկ են ուսուցումից եւ զինավարժութիւնից: Վինակը այսպիսին լինելով հանդերձ, ես չեմ հասկանում, թէ այս տարի ինչ դրդապատճառների հիման վրայ է, որ ցանկութիւն է առաջացել «Համիտիէ» հեծելագնդերի զօրախաղեր անցկացնել:

Հայերի աղէտից յետոյ Անատոլիայի դրութիւնը բաւականին նրբացել է եւ եթէ հրդերը իրենց այս տեղաշարժերով բնակչութեան եւ նրա ունեցուածքին մի նոր բռնութիւն գործադրեն, որը առաւել հաւանական է, - կարող է առաջ բերել մի նոր աղէտ:

Այս կապակցութեամբ, այդ զօրախաղերը այս տարի չանցկացնելու առթիւ մի գրութիւն ուղարկեցի վերոյիշեալ ռազմական նախարարութեանը:

Ռազմական նախարարութիւնը հաշուի չառաւ այս տեղեկագիրը եւ երկու անգամ պնդեց իր նախկին առաջարկի մասին: Սակայն Բարձրագոյն Դուռը իր դիրքորոշումը չփոխեց այս հարցում: Այսպիսով, այս տարի հետաձգուեց հրդերի զինավարժութիւնները:

ՊԻԹԼԻՍԻ ՀԱՅԵՐԸ

Պիթլիսի շրջանի մի շարք կազաների հայ բնակչութիւնից բաւական թուով մարդիկ, միանալով Մուշի մի շարք հայերի հետ, կազմել են մի թշնամական խումբ կառավարութեան դէմ եւ ամրացել անառիկ լեռներում գտնուող մի վանքում(10): Այս առթիւ Պիթլիսի վիլայէթից ստացուած հաղորդագրութիւնից յետոյ Պալատի հրամանով նրանց վրայ ուղարկուել էր զինուորական ուժ եւ թնդանօթներ:

Այսուհանդերձ, հպատակների հանդէպ հաշտեցման նախաձեռնութիւնը բռնութիւն գործադրելուց առաւել նախընտրելի համարելով, ես անհրաժեշտ ջանքեր գործադրեցի, որպէսզի վանքում ամրացած մարդկանց հնազանդեցնեմ եւ հակառակ Պալատի հրամանին, լուր ուղարկեցի Վիլայէթ, որպէսզի առանց Բարձրագոյն Դռան կարգադրութեան զէնք չօգտագործուի վանքում ամրացած հայերի դէմ:

Տուեալ վանքը որոշ ժամանակ մնաց պաշարման մէջ, սակայն պատրիարքարանի հետ տեղի ունեցած բանակցութիւններից յետոյ, Մուշի եպիսկոպոսը մեկնել է վանք եւ այնտեղ ամրացած հայերին դիմել խրատական խօսքերով: Այնուհետեւ հայերը վերջ տալով դիմադրութեանը, դուրս են եկել վանքից եւ վերադարձել իրենց բնակարանները:

Այդ դէպքից յետոյ, նրանց բռնքները հաշուի առնելով, բաւարարուեց նրանց խնդրանքը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

Said paşanın Hatıratı, Dersaadet, c.1, c2, 1328 (արաբատառ Թուրքերէն):

Այս Սայիտ փաշան պէտք չէ շփոթել Սայիտ Հալիմ փաշայի հետ, որը նոյնպէս մեծ վեզիր էր երիտթուրքերի օրոք եւ արեւմտահայերի կոտորածի յանցանքի համար ահարեկուեց Արշաւիր Շիրակեանի կողմից Հռոմում, 1921 թ. Դեկտեմբեր 6-ին:

Ապտուլ Համիտի գահակալութեան շրջանում Սայիտ փաշան եղել է ականաւոր քաղաքական գործիչներից մէկը եւ 9 անգամ նշանակուել է մեծ վեզիրի պաշտօնում: 1908 թ. ընդգրկուել է «Միութիւն եւ Առաջդիմութիւն» կուսակցութեան մէջ եւ 3 անգամ գլխաւորել է մեծիլիսը: Մահացել է 1914 թուականին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ. -

1. - Թուրքան փաշա, Օսմանեան կայսրութեան արտաքին գործերի նախարար:

2. - Նկատի ունի Օսմանեան կայսրութեան սուլթան Ապտուլ Համիտ Բ-ին (1876-1909 թթ.):

3. - Հասկանալի է, որ թուրք բարձրաստիճան պաշտօնեան՝ ինչպիսին Սայիտ փաշան է, չէր կարող հայերի նկատմամբ գործադրուող դաժանութիւնների մասին մանրամասն կանգ առնել: Բայց, որ հայերի վրայ յարձակուողների թում եղել են ծպտեալ զինուորներ եւ ուսանողներ, հաստատում է նախապէս ենթադրէն կազմակերպուած դաւադրութեան մասին:

4. - Ֆրընտրզլը, - բաղամաս Սրամպուլում:

5. - Սայիտ փաշայի այս միտքը չի համապատասխանում իրականութեան, քանի որ ցոյցը բացառապէս խաղաղ բնոյթ ունէր:

6. - Արիզա, - Սուլթանին ուղղուած խնդրագիր. այն գրուած է Սայիտ փաշայի կողմից Ապրիլ, 1880 թ.:

7. - Այս գրութեան մէջ Սայիտ փաշան կանգ է առել նաեւ Յունաստանի եւ Զերնոկորիայի հարցերի շուրջ:

8. - Said Pasanin hatirat: Istambul, C.2, S. 372. նկատի ունի սուլթան Ապտուլ Համիտի հայերի ազգային ազատագրական պայքարը ճնշելու համար քիւրտ ցեղախմբերից կազմակերպուած (իր անունով՝ «Համիտիէ») անկանոն զօրագնդերը:

9. - Մուսթաֆա փաշայի հաշուեհարդը կազմակերպեց Անդրանիկ փաշան:

10. - Խօսքը վերաբերում է 1901 թ. Մշոյ Ս. Առաքելոց վանքի պաշտպանական մարտերին, որին գլխաւորում էր Անդրանիկը:

ԳԱՂԱՓԱՐ ՇԱԲԱԹԵՐԹ Ա. Տարի, Թիւ 42

Շաբաթ, 15 Փետրուար, 1997

ԶԷՅԹՈՒՆԻ 1895–96 ԹԹ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ[1]

1995 թ. Օգոստոսին լրացաւ Զէյթունի 1895–96 թուականների մեծ հերոսամարտի 100–ամեայ փառաւոր յոբելեանը, որը ըստ արժանւոյն նշուեց թէ հայրենիքում եւ թէ սփիւռքահայ գաղթօջախներում, այդ թւում եւ հայահոծ քաղաք Լոս Անճելըսում «Գալիֆորնիոյ Զէյթունի Հայրենակցական Միութեան Վարչութեան» նախաձեռնութեամբ։ Հայաստանի ԳԱ ազգային Ակադեմիայում տեղի ունեցաւ Գիտաժողով, միեւնոյն ժամանակ կազմակերպուեցին ցուցահանդէսներ, զանազան հանդիսութիւններ եւ տօնակատարութիւններ։

Այս միջոցառումներին իր գործօն մասնակցութիւնն ունեցաւ Երեւանի «Զէյթուն» Պատմամշակութային Միութիւնը եւ Հայաստանի հայրենակցական միութիւնների խորհուրդը։

Իսկ այսօր հայրենի երկրից շատ հեռու այս օտար ափերում հաւաքուել ենք Զէյթունի «Հերոսամարտի 101–րդ տարելիցի առթիւ», կրկին անգամ մեր յարգանքի տուրքը մատուցելու հերոս զէյթունցիների անմահ յիշատակին, որոնք թուրքական բռնապետութեան դէմ ծաւալած իրենց աննկուն քաջագործութիւններով փառահեղ էջեր արձանագրեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութեան մէջ։

Ցաւոտի է, որ Զէյթունի հայ լեռնականները 17–րդ դարից սկսած բազմիցս պայքարի մէջ են եղել պահպանելու համար իրենց կիսանկախ արտօնեալ վիճակը օսմանեան կայսրութիւնում եւ թոյլ չեն տուել օտարների մուտքը իրենց սահմաններից ներս։ Հետագայ դարերին սուլթանական իշխանութիւնները երբեք չեն հաշտուել նման կարգավիճակի հետ եւ ձգտել են ընկճել լեռնագաւառի ըմբոստ բնակիչներին։ Յատկապէս Մարաշի կառավարիչները տեւապէս ջանացել են ասպատակել եւ իրենց ենթարկել գաւառը, բայց զէյթունցիները ամէն անգամ պատասխանել են ապստամբութեամբ եւ հերոսական ինքնապաշտպանութեամբ։

Միայն 1865 թ. սուլթան Ապդուլ Մէճիտին յաջողուեց վերջ տալ այդ կիսանկախութեան եւ նշանակել առաջին թուրք կառավարիչը Զէյթունում։ Այնուհանդերձ 1877–78 թուականների ռուս–թուրքական պատերազմի աւարտին, Ենիտունեան տոհմի Պապիկ իշխանի գլխաւորութեամբ զէյթունցիները կրկին ապստամբելով 3 տարի վերականգնեցին իրենց նախկին արտօնեալ վիճակը։ Սակայն, քաղաքին հսկող բարձունքում թուրքերը զօրանոց կառուցելով սկսեցին օրնիբուն հետեւել լեռնականներին։

Իսկ Զէյթունի 1895–96 թուականների ապստամբութիւնը տեղի ունեցաւ Ապդուլ Համիտեան բռնատիրութեան հայերի հալածանքների եւ զանգուածային կոտորածների պայմաններում։

Մի փոքր յետադարձ հայեացք գցելով, նշենք, որ Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային եւ կրօնական հալածանքները, կեանքի ու գոյքի անապահովութիւնը, հարկային ծանր գանձումներն ու դաւառային պաշտօնեաների չարաշահումներն աւելի մեծ չափերի հասան։

Արգելուեց «Հայաստան» բառի օգտագործումը, հայկական դպրոցներում հայոց պատմութեան դասաւանդումը։ Ոչնչացուեցին Վարդան Մամիկոնեան, «Մայր Հայաստան» նկարները։ Այդ օրերին Ա. Համիտը յայտարարում էր, որ քարտէզի վրայից պէտք է ջնջել Զէյթունը։

Առանձին թուրք պետական գործիչներ բացայայտ յայտարարում էին օսմանեան կայսրութիւնում հայ ազգը վերջնականապէս բնաջնջելու մասին։

1891 թ. Ապդուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրտերից կազմուած «Համիտիէ» անկանոն զօրագնդերը, որոնց գլխաւոր նպատակներից մէկն էր հալածել ու կոտորել հայ բնակչութեանը։

Միւս կողմից հայ ժողովուրդը նկատելով Պերլինի վեհաժողովից յետոյ, մեծ պետութիւնների անտարբեր վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ, իր փրկութեան համար բռնեց սեփական ուժերով պայքարելու ուղին։

Այդ օրերին հայ հասարակական գործիչ Գարեգին Սրվանձտեանձը գրում էր «Օտարէն պէտք չէ բան յուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստուիլ ու ցոյց տալ ազգաց, մենք ալ ազգ մի ենք...»։

Բուռն վերելք ապրեց Օսմանեան բռնակալութեան լծից հայ ժողովրդի ազատագրման շարժումը։ Աստիճանաբար սկսեցին ձեւաւորուել հայրենասիրական, ազատագրական գաղտնի խմբակներ ու կազմակերպութիւններ։ 1887 թ. Հնչակեան եւ 1890 թ. Դաշնակցութիւն կուսակցութիւնների ստեղծումով աննախադէպ պայքար սկսուեց հայ ժողովրդին զէնքի ուժով ազատագրելու ծրագրի իրականացմանը։

Տուեալ ժամանակ Ապդուլ Համիտի վարչակարգի հայահալած քաղաքականութեան դէմ ուղղուած ժողովրդական յուզումները լայն թափ ստացան յատկապէս Սասունում։ 1890–ական թուականներից սկսած սասունցիները ինքնապաշտպանական կռիւներ մղեցին թուրք բռնակալների դէմ եւ շէշտակի հակագրոհներով ետ շպրտեցին թուրքական զօրագնդերի յարձակումները։ Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինութեան դէմ չկարողացան մինչեւ վերջ դիմակայել եւ ազատագրական պայքարը հասցնել իր յաղթական աւարտին։ Հերոսական ինքնապաշտպանական կռիւներ տեղի ունեցան նաեւ Վանում, Մուշում, Ուրֆայում, Շապին Գարահիսարում, Զարսանջակում, Մալաթիայում եւ այլուր։

Թուրքական զօրքերի դէմ անհաւասար պայքարի դուրս եկաւ նաեւ Տաւրոսեան անառիկ լեռնաշխարհի Զէյթունի ազատատենչ հայ բնակչութիւնը։

Ահա այդ բարդ իրավիճակում, 1895 թ. ամռանը Զէյթունի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու նախաձեռնութեամբ Զէյթուն են ժամանում Հնչակեան կուսակցութեան գործիչներ՝ այդ թւում՝ Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսեանը), Ասպահը (Պետրոս Գմգմեան), Զելլաթը (Կարապետ Ղրփանոսեանը), Հրաչեան (Գրիգոր Ղարիբեան), Մլեհը (Աստուր Տամղաճեան)։ Բնականաբար, սրանց հետ գործակցում էին այլ հայդուկներ եւ անուանի գործիչներ եւս, ինչպէս օրինակ. Հաճընցի Զին Թորոսը, Մուշի նշանաւոր հայդուկ Մեսօ Շահենը, Միհրան Գայանը, Ասլանը (Մինաս Էլմակեան) Կարապետ Սուքիասեանը, Նշան Ղազարոսեանը եւ ուրիշներ։

Մի խօսքով Սուլթանական կառավարութեան ջարդարարական քաղաքականութեան դէմ պայքարելու, իրենց կեանքը, պատիւն ու հայրենի հողը պաշտպանելու համար զէնքը ձեռքերնին ոտքի կանգնեցին Զէյթունի բոլոր քաջամարտիկները։

Իսկ Զէյթունցիների շարժումը ղեկավարում էին Զէյթունցի իշխան Ղազար Շորվայանը, Արեգին Գիւղի տանուտէր՝ Խաչեր Կարապետեանը, Աւագակալի գիւղապետ Յարութիւն Գոճայեանը, Ս. Կարապետ Վանքի փոխ վանահայր Բարդուղիմեոս Վարդապետ Թագաճեանը եւ ուրիշներ։

1895 թ. Հոկտեմբերի 12-ին Արեգին գիւղի մօտ, Մութ Ձոր կոչուած վայրում ապստամբութեան ղեկավարները ժողով գումարելով որոշեցին «տնտեսական ու քաղաքական ազատութիւն ձեռք բերելու համար կենաց մահու պայքար մղել թրքական բռնակալութեան դէմ. երկու օր անց ապստամբական ուժերը շարժել դէպի Զէյթուն եւ գրաւել թրքական զօրանոցի վրայ»։

700-ի հասնող զէյթունցիների ջոկատը Հոկտեմբերի 15-ին լոյս 16-ի գիշերը մօտեցաւ զօրանոցի պարիսպներին։ Թուրքական զօրանոցի գրաւումը խիստ կարեւոր էր այն տեսակէտից, որ նախ ձեռք էին բերելու զինամթերք եւ երկրորդ բարձրանալու էր ապստամբների մարտական ոգին, որոնց թիւը համալրուելով հասաւ 2000-ի։

Մարաշից ժամանած թրքական զօրամասերը ամէն կերպ փորձում էին մօտենալ զօրանոցին բայց ի զուր։ Պաշարման ընթացքում Նազարէթի հօրեղբօր որդի Նշան Նորաշխարհեանը իր փոքրիկ ջոկատով գրաւել էր կառավարչատունը եւ կալանքի տակ առել թուրք բոլոր պաշտօնեաներին։ Գերուած գայմակամն ու քաղաքապահ ջոկատի հրամանատարը, զէյթունցի ղեկավարների պահանջով նամակով դիմեցին զօրանոցի պարետին՝ անձնատուր լինելու մասին, հակառակ դէպքում սպառնացին պայթեցնել զօրանոցը։ Եւ այդպէս Հոկտեմբերի 17-ի երեկոյեան պաշարուած կայազօրը անձնատուր եղաւ ապստամբներին։

Զօրանոցի վրայ բարձրացուեց ապստամբների կարմիր դրօշը, որի վրայ գրուած

էր՝ «Զէյթունի անկախ իշխանութիւն»։ Հոկտեմբերի 19-ին ստեղծուեց Զէյթունի յեղափոխական ժամանակաւոր կառավարութիւն, ինչպէս նաեւ զինուորական խորհուրդ։

Ապստամբութեան պաշտօնական ղեկավարութիւնը ստանձնել էր Աղասին, եւ բոլոր պաշտօնական գրութիւնները կրում էին նրա ստորագրութիւնը։ Սակայն ապստամբութեան իրական ղեկավարը, Նազարէթ Չաուշն էր, որը ռազմավարական փայլուն հմտութիւն ցուցաբերեց մարտերի ընթացքում։

Թուրքական զօրանոցի գրաւումը մեծ իրարանցում առաջացրեց Կ. Պոլսի, թուրքական իշխանութիւններին, որոնք անյապաղ միջոցների դիմեցին ճնշելու ապստամբութիւնը։

Մարաշից դէպի Զէյթուն շարժուեց զօրավար Ռէմզի փաշայի Արեւելեան կոչուած բանակը, իսկ Ատանայի կողմից Ալի Պէկի արեւմտեան զօրագունդը։ Այս երկու բանակում կային 30 հազարից աւելի զինուոր։ Պատրաստուելով առաջիկայ ահեղ մարտերին, զէյթունցիները միեւնոյն ժամանակ դիմումներ յղեցին եւրոպական հիւպատոսներին, ինչպէս նաեւ Կ. Պոլսի հայոց պատրիարքին։

Հայերին զինաթափելու եւ զօրանոցը յանձնելու ուղղութեամբ բանակցութիւնները մնացին անհետեւանք, քանի որ զէյթունցիները մերժեցին իրենց ղեկավարներին եւ թուրք գերիներին յանձնելու պահանջները եւ թուրքական բանակը անցաւ յարձակման։

Դեկտեմբերի 2-ին թուրքերը Ս. Փրկիչ Վանքի մերձակայ շրջանում յարձակուեցին զէյթունցիների պաշտպանութեան վրայ եւ անընդմէջ գրոհներից յետոյ, հրետանու կրակի տակ թուրքերին յաջողուեց գրաւել վանքը եւ հրդեհել զայն։ Այնուհետեւ շարունակուեց Զէյթունի 49 օրեայ հերոսամարտը։ Զէյթունցիները անձնազոհ կռուելով եւ իրենց հանդուգն մտայղացումներով եւ հնարամտութեամբ ամէն կերպ խափանում էին թշնամու առաջխաղացումը։ Ահա մի դրուագ զէյթունցիների ձեռնարկած հանդուգն մի սխրանքի մասին։ Դեկտեմբերի 21-ին թուրքական համազգեստ հագած ապստամբների փոքրիկ մի ջոկատ Եղիա Նորաշխարհեանի ղեկավարութեամբ գիշերով աննկատ բարձրանում է Պերզնկայի բարձունքները եւ այնտեղից գրոհով մխրճւում թուրքական զօրաբանակի շարքերը։ Յարձակուողներին չտարբերելով իւրայիններից, թուրքերը սկսում են անողոքաբար խողխողել միմեանց։

Յատկանշական է, որ մարտերի ընթացքում մեծ ու փոքր, յատկապէս զէյթունցի խիզախ կանայք լծուած էին պաշտպանական գործին։ Ովքեր կռուել չէին կարող, մեծ եռանդով սննդամթերք ու վառօդ էին մատակարարում կռուողներին։

Չնայած թշնամու լաւ սպառազինութեան եւ թնդանօթների հարուածներին, զէյթունցիները մեծ դժուարութեամբ եւ զգալի կորուստների գնով, կարողացան կանգնեցնել թուրք զինուորների ամէնօրեայ ու անընդմէջ գրոհները։

Զէյթունի հարցը շտապ կարգաւորելու խնդիրն անյետաձգելի էր դարձել Բ. Դուռն համար, քանի որ խիստ սրուել էր յարաբերութիւնները Ցունաստանի հետ եւ անհրաժեշտ էր 5-րդ բանակը կենտրոնացնել Ցունաստանի սահմանի մօտ։ Այս իրաւրութեան մէջ Բ. Դուռը անսալով Կ. Պոլսի Եւրոպական դեսպանների ու հայոց պատրիարքարանի միջնորդութեանը, իր համաձայնութիւնը յայտնեց, որպէսզի մեծ տէրութիւնների Հալէպի հիւպատոսները իրենց երկրների անունից միջնորդի դեր ստանձնեն Զէյթունի ապստամբների եւ թուրքական կարաւարութեան միջեւ։ Հրաման տրուեց նաեւ թուրքական բանակի հրամանատարութեան դադարեցնելու պատերազմական գործողութիւնները։

Ցունուարի վերջերին Հալէպից թուրքական բանակատեղի եկան ռուսական, անգլիական, ֆրանսիական եւ իտալական հիւպատոսները՝ Եակիմանսկին, Պարնհայմը, Պարթելեմին եւ Հենրեկօ Վիթթօն։ Գերմանական եւ աւստրիական հիւպատոսները չէին ժամանել։ Նրանց ներկայացնում էր Վիթթոն։

9 օր տեւած թէժ քննարկումներից յետոյ բանակցութիւնները աւարտուեցին եւ Ցունուարի 30-ին Զէյթունի ապստամբների, թուրքական կարաւարութեան եւ վեց տէրութիւնների ներկայացուցիչների միջեւ ստորագրուեց մի համաձայնագիր։ Ըստ որի ընդհանուր ներում էր շնորհւում բոլոր ապստամբներին, իսկ Հնչակեան դրսեկ գործիչներին արտօնւում էր պետական ծախսով հեռանալ արտասահման։ Փախստական գիւղացիներն ու աշխարհազօրայինները անարգել եւ անպատիժ պէտք է վերադառնային իրենց բնակավայրերը։ Զէյթունում նշանակուելու էր քրիստոնեայ կառավարիչ, ոստիկանական եւ կառավարչական պաշտօններում նախապատուութիւնը տրուելու էր զէյթունցիներին։ Գրաւուած զէնքերը պիտի վերադարձուէին, իսկ բանակը պիտի հեռանար, թողնելով միայն մէկ զօրամաս։ Ջեղեալ յայտարարուեցին նախկինից մնացած բոլոր ապառքները։

Նոյն օրը Զէյթունի եկեղեցիների զանգերի երկարատեւ զօղանջով ազդարարուեց ապստամբութեան յաղթական աւարտը։ Դժբախտաբար այս համաձայնագիրը, ինչպէս նաեւ բարենորոգումներին վերաբերող միւս ծրագրերը մնացին թղթի վրայ։ Խուճնդոտներ եղան նաեւ Հնչակեան գործիչների Եւրոպա մեկնելու խնդրի շուրջ։ Այնուամենայնիւ նրանց յաջողուեց ի վերջոյ Մերսինի նաւահանգստից մեկնել Եւրոպա։

Զէյթունցիները իրենց այդ ըմբոստ արարքով կասեցրին հայկական ջարդերը իրենց շրջանում եւ յատկապէս Ատանայում։ Իր ժամանակին Արշակ Չոպանեանը բարձր գնահատելով Զէյթունի իրաւարձութիւնները ասել է, որ «ամբողջ Հայաստանի աւերումը լուռ ու մունջ դիտող Եւրոպան միջամտեց Զէյթունի գործերին. քանզի լեռնականները զէնքով էին պաշտպանել ապրելու իրենց իրաւունքը» (Տես Անահիտ, 1899, թիւ 10)։

Եւ դա իրոք, որ այդպէս էր։ Ինչպէս գիտենք նոյն կարծիքի էր նաեւ Խրիմեան Հայրիկը եւ այլ հայ գործիչներ։ Նա դեռեւս նկատելով Պերլինի վեհաժողովում Եւրոպական պետութիւնների խարդաւանքները զէնքի կոչեց հայ ժողովրդին։ Թոյլ տուէք այստեղ իր իսկ խօսքերով բերել նրա պատկերաւոր խորհրդածութիւնները այդ մասին. «Պերլինի մէջ հոգեճաշ հարիսա կը ցրուէին, բոլոր հպատակ ազգերին, ինծի ղրկեցիք, որ հայերին ընկած մասը առնեմ բերեմ, ես ալ պտուկն առի ու վազեցի։ Բոլորը երկաթէ շերեփներով վերցրին եւ տարան իրենց բաժինը։

Դուք ինծի շերեփի տեղ թուղթ տուիք, Այդ թղթի կտորը որչափ որ խոթեցի տաք հարիսային մէջ, թուղթը թացացաւ, լխկեցաւ, մէջն ընկաւ, ես ալ պարապ թողի ետ եկայ. Մոռացայ առաջուց մի քանի հատ զէյթունցի տանէի հետս, անոնք շերեփ ունէին, կարելի է ամանին տակ են, քովերէն բան մը փրցուէին»։ (Հայ ժողովրդի Պատմութիւն, 6-րդ հատ. Երեւան, 1981, էջ 122-123)։

Ինչպէս եւս նշեցինք վերեւում, 1895-96 թթ. Զէյթունցիների մղած հերոսական ընդվզումը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի եւ անկախութեան ձգտման ամենացայտուն դրուագներից մէկն է։ Զէյթունի քաջամարտիկները հասան ոչ միայն բարոյական, այլեւ գործնական յաղթանակի, ստիպելով թուրքերին նստել հաշտութեան սեղանի շուրջ, ուազմադաշտում յաղթանակած հայ ապստամբների հետ։

Հայ ժողովուրդը բազմաթիւ հայրենասիրական երգեր հիւսեց հայրենիքի ազատութեան համար պայքարող այդ անձնազոհ քաջերի մասին։

Հետագայում, 1915 թ. զէյթունցիների ազատատենչ ոգին թեւածում էր Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերում՝ Մուսա Լեռից մինչեւ Վան, Շաբին Գարահիսարում, Ուրֆայում, Հաճընում, Եոզգաթում եւ այլուր ինքնապաշտպանական կռիւներում զէնքը ձեռքերին հերոսաբար մարտնչած հայ քաջերի սրտերում։ Այն ամենայն խորութեամբ թեւածեց նաեւ մեր օրերում Արցախի ազատագրութեան համար պայքարող ազատամարտիկների սրտերում։ Արցախցի զինուորը մարտի էր գնում զէյթունցիների, սասունցիների եւ միւսների մասին հիւսուած խրոխտ երգերը իրենց շուրթներին։

Դժբախտաբար այլ ելք ունեցաւ 1915 թ. Մեծ եղեռնի ընթացքում Զէյթունի հայ ազգաբնակչութեան ճակատագիրը, քանի որ այն չկարողացաւ պէտք եղածին պէս կազմակերպել իր ինքնապաշտպանութիւնը, տեղի տալով Կիլիկիայի Սահակ Կաթողիկոսի թուրքական զօրքերին չդիմադրելու յորդորներին։

Այնուհանդերձ ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան։ Զէյթունի լեռներում ապաստանած քաջամարտիկները պայքարեցին եւ ինքնապաշտպանական կռիւներ մղեցին, բայց ապարդիւն։

1915 թ. Մայիսին թուրքական զօրքերին յաջողուեց գրաւել Զէյթունը եւ հաշուեյարդար տեսնել տեղում մնացած հայ բնակչութեան հետ եւ բռնութեամբ տեղահանելով քշել Տէր Զօրի անապատները, իսկ Մայիսի 31-ին Սուլթան Մեհմետ Ռեշատի

յատուկ հրամանագրով Զէյթունի գաւառի անունը դարձաւ Սուլէյմանլը։ (Տես Düstür, Tertip-i Sani, C.1, Dersaadet, 1336, S. 615. արարատառ թուրքերէն, օրէնքների ժողովածու)։

1918 թ. Թուրքիայի պարտութիւնից յետոյ Ֆրանսիան գրաւեց Կիլիկիան։ Մօտ 1500 զէյթունցիներ վերադարձան իրենց բնակավայրը։ Սակայն 1921 թ. երբ Ֆրանսիան Կիլիկիան յանձնեց Թուրքերին Քեմալիստների ճնշման տակ Զէյթունը վերջնականապէս դատարկուեց հայերից։ Այդպէս արմատախիլ եղաւ նաեւ արծուաբոյն Զէյթունը։

Իսկ Մեծ Եղեռնից յետոյ Աշխարհով մէկ սփռուած հայ ժողովրդի բեկորները ի յիշատակ իրենց ծննդավայրի, իրենց կարօտագին հայրենիքի ու պատմական անցեալի յաւերժացման, կենցաղի, սովորութիւնների, բարիքների, մշակոյթի յարատեւման, ինչպէս նաեւ այն սուրբ գործին, որին «Հայապահպանութիւն» ենք ասում, այստեղ այնտեղ սկսեցին հիմնել հայրենակցական միութիւններ, որոնք ժամանակի ընթացքում ամրապնդուեցին եւ ընդարձակուեցին։ Հայաստանում նոյնիսկ առանձին թաղամասեր, շրջաններ սկսուեցին կոչուել հայրենի երկրի կորցրած քաղաքների, գիւղերի եւ մղուած հերոսամարտերի վայրերի անուանումներով։ Կառուցուեցին եւ կառուցւում են վեհ յուշարձաններ եւ կոթողներ իսկ 1946 թ. մի խումբ զէյթունցի հայրենադարձներ այդ թւում Փանոս Նորաշխարհեանը, Եղիա Ալաջաջեանը, Կարապետ Կիրակոսեանը, Մահակ Պոյամեանը, Տեվլէթ Գարանֆիլէանը դիմում են Երեւանի քաղաքային խորհուրդ, խնդրելով, իրենց մի հողատարածք յատկացնեն Երեւանում Նոր Զէյթուն աւանը հիմնելու համար։ Զէյթունցիների պահանջը ընդունւում է եւ ինչպէս գիտէք Երեւանի Հիւսիսային մասում հիմնադրուած է բոլորիս յայտնի Նոր Զէյթուն թաղամասը։ Հայի դառը ճակատագրի բերումով, 1977 թ. մի խումբ զէյթունցի հայրենասէրներ այս հեռաւոր ափերում հիմնում են Գալիֆորնիոյ Զէյթունի Հայրենակցական Միութեան վարչութիւնը։

Գոհունակութեամբ պէտք է նշել նաեւ, որ նորանկախ Հայաստանում, ի մի բերելով իրենց ուժն ու եռանդը 1993 թ. Օգոստոսի 23-ին, լիերաւ ու ազատ համագործակցութեան սկզբունքով Երեւանում հիմնեցին «Հայրենակցական Միութիւնների Խորհուրդ» իսկ հիմնադիրներն էին Զէյթունի, Այնթապի, Հայաստանի Եդեսահայերի, Մուսալեռի, Նոր Արաբկիրի, Նոր Կիւրինի, Սեբաստիայի, Վասպուրականի եւ վերածնուած Հաճընի հայրենակցական Միութիւնները։

Թերթելով Հայաստանի Հայրենակցական Միութիւնների Խորհրդի հրատարակած «Ընծրրան» հանդէսը, գոհունակութեամբ եւ հպարտութեամբ նկատում ենք թէ ինչպէս այսօր բոլոր հայրենակցական միութիւնները լծուած են նորանկախ Հայաստանի հանրապետութեան բարգաւաճման, նրա պետականութեան եւ տնտեսութեան զարգացման, ինչպէս նաեւ արցախեան գոյամարտին եւ անկախութեան թեւ ու թիկունք կանգնելու սուրբ գործին։

Ուրեմն փառք ու պատիւ բոլոր Հայրենակցական Միութիւններին։

Փառք ու պատիւ Զէյթունի բոլոր ժամանակաշրջաններում թուրքական բռնապետութեան դէմ զէնքը ձեռքերնին հերոսաբար պայքարած Զէյթունցի բոլոր քաջերին։

Կեցցէ համերաշխութիւնն ու միասնականութիւնը։

Գաղափար Շաբաթաթերթ Ա. Տարի, Թիւ 33։ Շաբաթ , 28 Դեկտեմբեր, 1996

---

1. Դեկտեմբեր 15, 1996-ին, Լոս Անճելըսի մէջ տեղի ունեցաւ Զէյթունի 1895-96-ի հերոսական ապստամբութեան 101-ամեակին նուիրուած հանդիսութիւն, ուր բանախօսեց Փրոֆ. Աւետիս Փափազեանը։

Թալէաթ, Ճեմալ, Էնվէր

1996 թ. Օգոստոսի 4ին Տաճիկխոտանի մայրաքաղաք Տուշանպէից Իսթանպուլ բերուեց Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի ռազմական նախարար՝ Էնվէր փաշայի աճիւնները եւ կառավարական բարձր մակարդակով եւ մեծ շուքով հողին յանձնուեց «Ապիտէի Հիւրրիյէթ» կոչուած դամբարանում: Նշենք, որ անցեալում նոյն պատուին եւ մեծարանքին են արժանացել նաեւ Իթթիհատական Թուրքիայի եռապետութեան միւս անդամները՝ ներքին գործերի նախարար Թալէաթ փաշան եւ ծովային նախարար Ճեմալ փաշան, երբ նրանց աճիւնները օտար երկրներից բերուելով ամփոփուեցին վերոյիշեալ դամբարանում:

Բնականաբար ելոյթ ունեցողները Էնվէրին բնութագրեցին որպէս Թուրքիայի մօտիկ անցեալի պատմութեան մէջ կարեւոր դեր խաղացած պետական գործչի: Իսկ այժմեան Թուրքիայի նախագահ Ս. Տեմիրելը Էնվէրին որակաւորեց որպէս հերոս, Թուրք ժողովրդի համար:

Հասկանալի է, որ ամէն մի երկիր, պետութիւն, կազմակերպութիւն կամ անհատ ազատ է եւ իրաւունք ունի իր հարազատի աճիւնները տեղափոխելու եւ ամփոփելու յարմարագոյն վայրում: Նոյնիսկ միջազգային օրէնքներով դիւրութիւններ են սահմանուած այդ ուղղութեամբ:

Բնականաբար աշխարհի հասարակութիւնը ինչ-որ չափով իրազեկ դարձաւ վերոյիշեալ ծիսակատարութեանը եւ կարծես կրկին անդրադառնալու անհրաժեշտութիւնը չկար տուեալ հարցին, եթէ մեր ուշադրութիւնը չգրաւէր Թուրքիայի նախագահ Ս. Տեմիրելի դամբանականում ասուած հետեւեալ խօսքերը.

«Էնվէր իր սխալներով ու բարեգործութիւններով (՞) մօտիկ անցեալի ամենակարեւոր դէմքերէն մէկն էր եւ այլեւ պատմութիւն է, որ պիտի քննէ անցեալի դէպքերը եւ իր վճիռը արձակէ ատոնց մասին»: (Տե՛ս, «Ասպարէզ», Օգոստոս 6, 1996):

Ուրեմն աշխատենք անդրադառնալ պատմութեան եւ կրկին անգամ բնութագրենք եւ լուսաբանենք, թէ որո՞նց աճիւնսերն են ամփոփուած այդ դամբարանում:

Այսպէս, յայտնի է, որ 1919 թ. Մարտի 8ի Սուլթան Մեհմէտ 6րդ Վահիտէտտինի յատուկ հրամանագրով 1) Օսմանեան կայսրութիւնը առաջին համաշխարհային պատերազմի մէջ ներքաշելու եւ 2) հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատուութեան ենթարկուեցին Երիտթուրքական կառավարութեան ղեկավարներն ու «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամները: Ռազմական արտակարգ ատեանի քննութեանը որպէս մեղադրեալ ներկայ էին 20 բարձրաստիճան եւ պետական գործիչներ: Իսկ առաւել մեծ յանցագործները դիմել էին փախուստի, նրանց թուում՝ Թալէաթը, Ճեմալը եւ Էնվէրը:

1919 թ. Յուլիսի 5ի դատավճռով, որը հիմնուած էր քաղաքացիական քրէական օրէնսգրքի 45րդ յօդուածի առաջին կէտի վրայ, որպէս ծանր յանցագործներ մի քանիսը դատապարտուեցին մահուան. նրանց թուում՝ Թալէաթը, Ճեմալը եւ Էնվէրը:

Նշենք նաեւ, որ մինչ դատավճիռը այդ մեղադրեալները զրկուեցին Թուրքիայի քաղաքացիութեան իրաւունքից, ունեցուածքի բռնազբաւումով, ինչպէս նաեւ՝ ռազմական տիտղոսներից, վտարուելով նաեւ զինուորական շարքերից. նրանց թուում՝ Թալէաթը, Ճեմալը եւ Էնվէրը: (Տե՛ս Takvim-i Vekayi, 27 Nisan 1335 (1919 թ.) թիւ 3540. 5 Temmuz, 1335, թիւ 3604 թուրքական պաշտօնական թերթի յաւելուած, արաբատառ թուրքերէնով):

Այժմ մի քանի խօսք վերոյիշեալ երկու մեղադրական կէտերի մասին: Իրօք, որ իրենց նախաձեռնութեամբ մտնելով պատերազմի մէջ, այս երրեակը պատճառ հանդիսացաւ մեծ թուով թուրքերի եւ Օսմանեան կայսրութեան այլ հպատակների մահուան՝ ինչպէս նաեւ նրանց նիւթական ունեցուածքի կորստեան:

Բանը նրանումն է, որ պատերազմի մէջ մտնելու հարցը նրանք անհրաժեշտ չհամարեցին քննարկել մէճլիսում: Այն վճռուեց Մեծ Վէզիր Սայիտ Հալիմ փաշայի ծովեզերեայ ապարանքում: Զնայած Մեծ Վէզիրը զգուշացրեց պատերազմին մասնակցելու վտանգաւոր ըլլալը, բայց չկարողացաւ համոզել նրանց: (Տե՛ս Takvim-i Vekayi, 5 Temmuz, 1335 (1919 թ.) թիւ 3604): Նշենք նաեւ, որ դեռեւս Վերսայլի հաշտութեան պայմանագրով (1919 թ.) Թալէաթի եւ իր գործընկերների նկատմամբ վճիռ կայացուեց, որպէս պատերազմի յանցագործների:

Իսկ ինչո՞ւ այդպէս եռանդագին մտան պատերազմի մէջ: Ահա թէ ի՞նչ է գրել Ճէմալ փաշան այդ մասին իր յուշագրութեան մէջ. «Մենք յոյս ունէինք, որ Համաշխարհային Պատերազմի կրակի միջից անցնելով, մեզ կը յաջողուի ազատուել մեր վրին փաթաթած շատ տհաճ պարտաւորութիւններից, որոնք միմիայն պատրուակ էին մեր ներքին գործերին միջամտելու համար» (Behcet Cemal, Cemal Paşa, Hatiralar, 1959, s. 359): Հասկանալի է, որ այստեղ Ճեմալ փաշան նկատի ունի Յունուար 26, 1914 թ. Թուրքական կառավարութեան կողմից ստորագրուած բանաձեւը, որի համաձայն բարենորոգումներ պիտի անցկացուէին Հայաբնակ 6 նահանգներում:

Իսկ երկրորդ կէտն էլ խիստ առնչուում է պատերազմի մէջ մտնելու հարցի հետ:

Վերոյիշեալ դատաքննութեան բոլոր արձանագրութիւններում, փաստագրական նիւթերի եւ ականատեսների վկայութեան հիման վրայ շարադրուած մեղադրական եզրակացութիւններում, դատավճիռներում մանրամասն խօսւում է նաեւ հայերի բռնագաղթի եւ կոտորածների մասին:

Թուրքական Երրորդ բանակի հրամանատար Վէհիպ փաշան իր վկայութեան մէջ նշում է, որ «Հայերի նկատմամբ կատարուած վայրագութիւններն ու կոտորածները, նրանց ունեցուածքի թալանն ու կողոպուտը որոշուած է եղել "Միութիւն եւ Առաջադիմութիւն" կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Եւ այդ կոտորածների, ինչպէս նաեւ բոլոր գազանութիւնների իրագործման համար, Պէհաէտտին Շաքիր պէյը Երրորդ բանակի շրջանում պատրաստում էր յատուկ մարդասպաններ եւ անձամբ ղեկավարում նրանց»: (Ermenilerin Katl ve imhasi ve mallarinin yağma ve gasbi Ittihat ve Terakki merkez-i umumisinin netice-i mukarratı olup üçüncü ordu mintakasında insan kasablarini tedarik ve amlaki idare ve istihdam eden Behaeddin Şakir beydir): Տե՛ս Takvimi-i Vekayi, 27 Nisan, 1335. No. 3540. (արաբատառ Թուրքերէնով):

Ինչպէս նկատեցինք, այս բոլորը կատարուել է 3րդ բանակի շրջակայքում: Իսկ ռազմական նախարարը Էնվէր փաշան էր:

Ում յայտնի չէ, որ Էնվէր փաշան տուեալ ժամանակ վարում էր համթուրքիզմի քաղաքականութիւն, ձգտելով բոլոր թրքալեզու ժողովուրդներին միացնել մէկ դրօշի տակ: Իսկ հայերը խանգարում էին այդ միաշրութեան: Ուրեմն հայերը պէտք է բնաջնջուէին: Եւ այս դաժան ծրագրի իրագործմանը նպաստեց պատերազմը: Հակառակ այս բոլորին, այսօր թուրք պատմաբանները, քաղաքական գործիչները, ինչպէս նաեւ նրանց ձայնակցող մի շարք օտար գիտնականներ աշխատում են սակարկութեան նժարի վրայ դնել հայերի ցեղասպանութիւնը: Նոյնիսկ, առանց հաշուի առնելու հայ ժողովրդի դահիճների մէկի՝ Թալէաթի հետեւեալ խոստովանութիւնը. «Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամէն ինչ եւ յաջողում է, աշխարհը ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար ինչ կատարեցի եւ ես գիտեմ, որ կը մեռնեմ դրա համար»: (Memoires of Halide Edip, New York, London, թ. 387):

Վերոյիշեալ դատաքննութեան մեղադրական եզրակացութեան մէջ պարզորոշ գրուած է, որ պատերազմի ընթացքում «չնայած ահաբեկման սլաքը հիմնականում ուղղուած էր հայերի դէմ, այնուհանդերձ տուժեցին նաեւ կայսրութեան այլ տարրերն ու մեծ թուով թուրքեր: (Տե՛ս, Takvim-i Vekayi,

27 Nisan 1335 (1919 թ.) No. 3540):

Այո՛, Էնվէրի ահիւնները հողին յանձնելու օրերին, հակառակ կառավարութեան դրսեւորած մեծարանքներին, գտնուեցին մարդիկ, որոնք համարձակօրէն ասացին ճշմարտութիւնը եւ հաստատեցին Էնվէրի ծաւալած վնասակար գործունէութիւնը իր ժողովրդի հանդէպ: Այսպէս «Հիւրրիյէթ» թերթի թղթակիցներից Օքթայ Էքսին գրեց, որ «մինչ որոշ անձեր յարգանք կը մատուցանեն Էնվէր փաշային, ես ոտքի պիտի կանգնիմ ի յիշատակ մեր 90,000 երիտասարդներուն, որոնք սառեցան Ալլահուէքպէր լեռներուն վրայ՝ զօրավարին հրահանգով»: («Ասպարէզ», Օգոստոս 6, 1996):

Այստեղ հարց է առաջանում: Այդ ինչպէ՞ս է պատահում, որ իր ժողովրդին եւ հպատակներին մարդկային ահաւոր կորուստներ եւ նիւթական հսկայական վնասներ պատճառած մարդիկ յետ մահու արժանանում ն նման մեծարանքի եւ պատուի: Աշխարհում հազիւ թէ գտնուի մի երկիր, որի ղեկավարները իրենց ժողովրդին այդքան վնաս հասցնելուց յետոյ հերոսանան: Ի՞նչ է, այս մասին չգիտեն այժմու Թուրքիայի ղեկավարներն ու պատմաբանները: Գիտեն, շատ լաւ գիտեն:

Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ հերոսացնում են Էնվէրին եւ միւսներին: Պատճառը միանշանակ է:

Այդ նրանք էին, որ ամբողջապէս հայաթափեցին Հայաստանը ամենավայրագ ձեւերով: Այդ նրանք էին, որ 20րդ դարի սկզբին գործադրեցին առաջին ցեղասպանութիւնը հայերի նկատմամբ եւ տիրացան պատմական Հայաստանի հողատարածքին եւ նուիրաբերեցին այն իրենց ժառանգներին:

Այնուհանդերձ, Էնվէրին եւ նրա նմաններին հերոսացնող այսօրուայ Թուրքիայի այրերը պէտք է լաւ իմանան որ «Միջազգային օրենքների համաձայն,- ինչպէս հաստատեց Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տուման ի անդամ Անտրէյ Նոյկինը 1995 թ. Մայիսի 3ին, Մոսկուայում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում, ցեղասպանութեան հետեւանքով նուաճուած հողատարածքները չեն կարող որեւէ երկրի օրինական մասը կազմել»:

Ահա, այս է պատմութիւնը. այս է պատմական ճշմարտութիւնը, որը հաստատւում է նաեւ թուրքական փաստաթղթերով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Հայկական Հանրագիտարանի Գլխաւոր Խմբագրութիւն,
Երեւան, 1996, 528 էջ

Գրախօսեց՝ Փրոֆ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Հայկական հարցի եւ Մեծ Եղեռնի վերաբերեալ առ այսօր կան բազմաթիւ լեզուներով ուսումնասիրութիւններ եւ վաւերագրական ժողովածուներ, թէ հայրենի եւ թէ օտար հեղինակների կողմից հրատարակուած, որտեղ ամենայն անաչառութեամբ տրուած են հայկական հարցի ծագման պատմութիւնը, մեծ տէրութիւնների շահագրգռուածութիւնը այդ խնդրում եւ դիւանագիտական դաւադիր գործարքները, ինչպէս նաեւ նրա ոլորտի մէջ մտնող հայերի ցեղասպանութեան ողբերգական հետեւանքները։

Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանութիւնը այսօր էլ շարունակւում է մնալ համաշխարհային պատմագրութեան, միջազգային հասարակայնութեան եւ առանձին պետութիւնների ուշադրութեան կենտրոնում։ Հրատարակւում են նորանոր հետազօտութիւններ եւ փաստագրական ժողովածուներ, որոնք նոր լոյս են սփռում եւ լիովին ապացուցում պատմական ճշմարտութիւնը հայերի արդար պահանջատիրութեան խնդրում։ Այսօր Լեռնային Ղարաբաղում ծաւալուած ազգային ազատագրական շարժումն ու մայր հայրենիքին վերամիաւորուելու նրա պահանջը, միջազգային ասպարէզում հարուցուած բոլոր խոչընդոտներով հանդերձ, նոյնպէս սպասում է իր արդար լուծման։

Այդ տեսակէտից խիստ կարեւոր ներդրում է կատարել Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւնը, հայ ընթերցողի ուշադրութեանը յանձնելով մի նոր, մեծածաւալ, գիտական բարձր մակարդակով կազմուած «Հայկական Հարցը» մէկ հատորով հանրագիտարանը։

Հէնց սկզբից նշենք, որ 10.000 տպաքանակով հանրագիտարանի այս արժէքաւոր հատորը հրատարակուել է Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հովանաւորութեամբ եւ ազգային բարերար Պրն. Արթիւր Մարտիրոսեանի մեկենասութեամբ։

Հաւանաբար շատերին յայտնի է, որ այն առաջին անգամ լոյս տեսաւ 100,000 տպաքանակով, 1991 թ. Երեւանում ռուսերէն լեզուով։ Այնպէս որ հայերէն այս հրատարակութեան մէջ հանրագիտարանի խմբագրական յանձնաժողովը հաշուի է առել ռուսերէն հրատարակութեան նկատմամբ կատարուած դիտողութիւններն ու ճշգրտումները։ Այն համալրուած է նաեւ մի շարք նոր նիւթերով եւ կենսագրական լրացումներով։

Հանրագիտարանը պարունակում է շուրջ 900 յօդուածներ, 25 քարտէզ, աւելի քան 400 լուսանկարներ, որտեղ մանրամասն խօսւում է հայկական հարցի վերաբերեալ միջազգային պայմանագրերի, փաստաթղթերի, խորհրդաժողովների, բանակցութիւնների, ինչպէս նաեւ հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի, հայդուկային շարժման, ինքնապաշտպանական կռիւների եւ ընդհանրապէս Մեծ Եղեռնի եւ հայերի ցեղասպանութեան նկատմամբ մեծ տէրութիւնների կառավարութիւնների դիրքորոշման, ճանաչման եւ դատապարտման մասին։

Հանրագիտարանում կենսագրական տեղեկութիւններ կան Հայաստանի եւ Սփիւռքի, ինչպէս նաեւ տարբեր երկրների պետական, քաղաքական, հասարակական գործիչների, պատմաբանների եւ գիտնականների մասին, որոնք գործնականում առնչուել, ուսումնասիրել եւ իրենց գնահատականն են տուել հայկական հարցի մասին։ Վերջում տրուած են, առարկայական ցուցիչ, անձնանունների, տեղանունների, ինչպէս նաեւ քարտէզների ցուցակ։

Մի խօսքով այն իր բնոյթով եւ մասնագիտական բարձր մակարդակով եզակի աշխատանք է եւ նման գործ հայ ընթերցողի սեղանին է դրւում առաջին անգամ։ Լիայոյս ենք, որ այս հանրագիտարանը լոյս կը տեսնի նաեւ անգլերէն կամ այլ օտար լեզուներով եւս։

Գոհունակութեամբ պիտի նշեմ, որ տողերիս հեղինակը եւս սոյն հանրագիտարանին ներկայացրել է մասնագիտական 14 յօդուածներ։ Այստեղ յատուկ նկատառումով առիթը պիտի օգտագործեմ եւ խօսեմ դրանցից միայն մէկի մասին։

1988 թ. Սեպտեմբերին, գիտական գործուղման ընթացքում ինձ յաջողուեց Սոֆիայում յայտնաբերել մի գրքոյկ, (60 էջից բաղկացած), որը վերաբերում էր 1894-96 թթ. Սասունում եւ ընդհանրապէս Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցած կոտորածների մասին։ Այն պատկանում էր պուլկար պատմաբան եւ հրապարակախօս՝ Տիմիդր Սփիրովի գրչին, գրուած ականատեսի աչքով եւ հրատարակուած շատ քիչ տպաքանակով 1897 թ. հետեւեալ խորագրով՝ «Հայերի սոսկալի ջարդը. Հայաստան եւ Սուլթան Ապտուլ Համիտ»։

Պուլկար գործընկերներիս օգնութեամբ կենսագրական տեղեկութիւններ հաւաքեցի հեղինակի մասին, որը յետագայում ներկայացրի հանրագիտարանի խմբագրութեանը (տե՛ս էջ 420)։

Այնուհետեւ պարզեցի, որ Տիմիդր Սփիրովի այս յոյժ կարեւոր գրքոյկը դուրս է մնացել տուեալ շրջանով զբաղուող հայ պատմաբանների տեսադաշտից։ Ուստի ձգտեցի այն

թարգմանել ամբողջութեամբ եւ հրատարակել Սասունի կոտորածների 100-ամեայ տարելիցի առիթով, բայց չյաջողուեց։ Ես կարողացայ միայն մի հատուած հրատարակել 1996 թ. Լոս Անճելըսում հրատարակուած «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» խորագրով իմ գրքում (տե՛ս էջ 65)։

Ահա այդ հատուածը.

«Հաւաստի աղբիւրներ վկայում են, որ Փոքր Ասիայի բոլոր հորիզոնականներում եւ ծովափնեայ քաղաքներում որտեղ հայեր կան ենթարկւում են կոտորածի, բռնաբարութեան եւ կողոպուտի։ Դեռեւս Իզմիրում, Ռոդոստոյում եւ այլ քաղաքներում հայերի նկատմամբ գործադրուած դաժանութիւնները չի կարելի համեմատել Կ. Պոլսում եղած դէպքերի հետ։ Դժբախտ հայ ժողովուրդ. 19-րդ դարի հրաշքում, ուր մենք ապրում ենք, ամօթ եւ անարգանք այս դարաշրջանին։ Ամօթ անհոգի Եւրոպային, այդ խայտառակ եւ ծաղրալի քաղաքակրթութեան, որին պէտք է ջնջել աշխարհի երեսից։ Ինչո՞ւ համար է այդ դաժան ճակատագիրը, ո՞ր ծանր յանցանքների համար է, որ ենթարկւում է ժողովուրդը այդ կեղեքումներին»։

Բնականաբար խունացած եւ դեղնած էջերով այս գրքոյկի հայերէն հրատարակութիւնը (եւ ոչ միայն այս) այսօր կարօտ է հայ հաւատաւոր մեկենասի կամ որեւէ հայրենասիրական կազմակերպութեան հովանաւորութեան։

Բնական է, որ հանրագիտարանի նկատմամբ ունենք նաեւ մի քանի դիտողութիւններ, որոնց հաշուի առնելը կարող է օգտակար լինել յետագայ հրատարակութիւնների համար։

Այսպէս՝ հանրագիտարանում ընդգրկուած են մի քանի հեղինակների կենսագրական տեղեկութիւններ, որոնք իրենց աշխատութիւններում հպանցիկ կերպով են անդրադարձել հայկական հարցին։ (Խօսքս բնաւ չի վերաբերում հայ մեծանուն գրողներին եւ բանաստեղծներին)։

Մինչդեռ, հանրագիտարանում իրենց ուրոյն տեղը պէտք է ունենային նաեւ ներքոյ յիշեալ պատմաբանները, որոնք ըստ երեւոյթին թիւրիմացաբար դուրս են մնացել այս հրատարակութիւնից։ Ահա նրանք.

Կ. Թումայեան. Պատմութիւն Արեւելեան խնդրոյ եւ Առաջնորդ Հայկական Հարցի, Լոնտոն, 1905։

Պետրոս Տօնապետեան. Ջայն Տառապելոց, (Այս է Արձան հայ տանջանաց), 1915-1918, Փարիզ, 1922։ Այս մեծածաւալ գրքում բերուած է պատմագիտական ընդարձակ մի ուսումնասիրութիւն հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան խնդրի շուրջ։ Ընդգրկուած են նաեւ բռնագաղթից եւ ջարդերից հրաշքով ազատուած տառապեալների 280 սրտամորմոք նամակները։

Լիպարիտ Ագատեան, Հայ Որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելըս, 1995։

Ամերիկահայ պատմաբան Արա Սարաֆեանը, որը վերջին տարիներին զբաղւում է եւ հրատարակում հայերի ցեղասպանութեան վերաբերող Ամերիկայի Միացեալ Նահանգների պաշտօնական փաստաթղթերը։

Ինչպէս վիտենք 1995 թ. մի շարք երկրների խորհրդարանները պաշտօնապէս ճանաչեցին Հայոց Մեծ Եղեռնը՝ Ապրիլ 24-ը ընդունելով ցեղասպանութեան ենթարկուած հայերի յիշատակի օր, որոնց մէջ ամենանշանակալիցը Ռուսաստանի Դաշնութեան Պետական Տումայի միաձայն ընդունած բանաձեւն էր, որը ժամանակի տեսանկիւնով հնարաւոր էր նաեւ ընդգրկել սոյն հանրագիտարանի մէջ։

Այսօր Թուրքիայում բազմաթիւ գրքեր են լոյս տեսնում հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ։ Բնականաբար ոչ բոլորն են իրենցից գիտական արժէք ներկայացնում։ Այնուհանդերձ դրանց մէջ կան այնպիսիները, որոնց կարելի էր ընդգրկել, քանի որ իրենց ուսումնասիրութիւններում մանրամասն անդրադարձել են հայկական հարցին։ Օրինակ. Էնվեր Զիա Կարալը, Եավուզ Էրճանը. նոյնպէս Ռուբ Ֆինքրեթ Ատամիրին, որը ծագումով թուրք պատմաբան է եւ Գերմանիայի Պոհումի համալսարանի դասախօս։ Յատկանշական է, որ նա հայկական կոտորածները որակաւորել է ցեղասպանութիւն հայ ժողովրդի հանդէպ։

Հանրագիտարանում (էջ 23) խօսւում է Ալեքսանտրէթի Սանճաքի մասին, բայց ոչ մի խօսք չի ասուած Ալիշան Պայրամեանի այդ թեմայի շուրջ կատարած արժէքաւոր աշխատութեան մասին։ Բանը նրանումն է, որ նա լինելով ականատես, լաւատեղեակ էր Ալեքսանտրէթի Սանճաքի շուրջ ծաւալուած անգլո-ֆրանսիական դիւանագիտական խաղերին եւ բազմալեզու աղբիւրների, արխիւային նիւթերի հիման վրայ ուսումնասիրել եւ յաջողութեամբ պաշտպանել էր իր գիտական աւարտաճառը Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայում հետեւեալ խորագրով. «Ալեքսանտրէթի Սանճաքի հարցը եւ միջազգային դիւանագիտութիւնը 1918-1939 թթ.»։ Յետագայում, 1994 թ. այն թարգմանուեց եւ հրատարակուեց Դամասկոսում արաբերէն լեզուով եւ լաւ գնահատանքի արժանացաւ արաբ մտաւորականութեան կողմից (տե՛ս Սվին Ջուլճեանի բովանդակալից գրախօսականը, «Ասպարէզ», Օգոստոս 19, 1995)։ Իսկ հայերէն օրինակը ներկայումս շարուած վիճակում գտնւում է Անթիլիասի տպարանում եւ մօտ օրերս լոյս կը տեսնի։

Եւ վերջապէս հանրագիտարանում իր արժանի տեղը պիտի ունենայ նաեւ մեր ժամանակի հայ գրականութեան տաղանդաւոր ներկայացուցիչ՝ Ստեփան Ալաջաջեանը, քանի որ իր ստեղծագործութիւններում յատուկ ուշադրութեան առարկայ է դարձել նաեւ հայկական հարցն ու Մեծ Եղեռնի ողբերգութիւնը։ Պատմական եւ թէ քաղաքական իրադարձութիւնների հիման վրայ շարադրուած նրա «Եղեգները Զխոնարհուեցին», «Զսպիտացած վէրք» երեք հատորեայ մեծարժէք գործերն (այդ թւում նրա հրապարակախօսային բովանդակալից ելոյթներն ու յօդուածները) ու միւս երկերը շարադրուած են փաստագրական նիւթերի հիման վրայ եւ ունեն վաւերագրական ճշգրտութիւն, քանի որ հեղինակը հնարաւորութիւն է ունեցել օգտագործելու Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի արխիւային հարուստ նիւթերը։

Հարկ ենք համարում նշելու նաեւ, որ հանրագիտարանի խմբագրական յանձնաժողովը եթէ ապագային անհրաժեշտ գտնի մեր մասին եւս կենսագրական տեղեկութիւններ հրատարակելու, ապա պէտք է նկատի ունենայ, որ հայ-թուրքական յարաբերութիւնների միջնադարի մասնագէտ լինելով հանդերձ, Աւետիս Փափազեանը, որպէս օսմանագէտ-պատմաբան ուսումնասիրել եւ հրատարակել է նաեւ հետեւեալ աշխատութիւնները։

1. Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի. Երեւան, 1988։ (Տես նաեւ անգլերէն եւ արաբերէն թարգմանութիւնները)։

2. Վաւերագրական նիւթեր Արեւմտահայերի մասին, հայկական ԽՍՀ Գիտութիւնների Ակադեմիա. գիտա-ինֆորմացիոն պիւլետեն թիւ 2 (56), Երեւան 1983։

3. Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, Լոս Անճելէս, 1996։

4. Եւ Լոս Անճելէսի հայ մամուլում 1993 թուականից հրատարակուած մեր գիտական բազմաթիւ յօդուածներն ու փաստագրական նիւթերը, որոնք ամփոփելով լոյս ընծայեցինք նաեւ առանձին գրքոյկներով։ Տե՛ս Հայկական հարցը եւ Մեծ Եղեռնը, մաս 1, մաս 2, մաս 3, Լոս Անճելէս, 1997։

Խօսքս ուզում եմ աւարտել Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի վերջերս արտասանած մի ճառի հետեւեալ իմաստալից արտայայտութեամբ. «Մենք սովորութիւն չունենք գնահատել մեր ժամանակակիցներին»։

Վերջում ոգում ենք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել ազգային անխոնջ բարերար՝ Ցարութիւն Սիմոնեանին, որը սիրայօժար մեզ տրամադրեց հանրագիտարանի հատորը, երբ տեղեկացաւ, որ մենք ցանկութիւն ունենք գրախօսելու այն։

ՆՈՐ ՕՐ• ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 22, 1997

ՆՈՐ ԿԵԱՆՔ, ԺԹ. ՏԱՐԻ, ԹԻՒ 18,

ԱՊՐԻԼ 10, 1997

ՀԱՅԵՐԷՆԻՑ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐ ԱՐԴԻ ԹՈՒՐՔԵՐԷՆՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, 1996, 96 Է.Ջ

Հեղինակ՝ ԽԱՉԻԿ ԱՄԻՐԵԱՆ

Գրախօսեց՝ ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Դեռ այնքան էլ շատ ժամանակ չի անցել այն օրուանից, երբ 1991 թ. Փարիզում հրատարակուեց նախկին պոլսահայ բանաստեղծ-խմբագիր, իսկ յետագայում ճանաչուած թուրքագէտ-բանասէր՝ Խաչիկ Ամիրեանի «Թուրքալեզու հայ աշուղներ» (Օսմանեան կայսրութիւն. 16–20-րդ դարեր) մեծարժէք աշխատութիւնը, որը լաւագոյնս ընդունուեց եւ գնահատուեց թէ հայրենի եւ թէ սփիւռքահայ ընթերցողների կողմից։ Եւ ահա օրերս Երեւանում լոյս տեսաւ նաեւ նրա «Հայերէնից փոխառեալ բառեր արդի թուրքերէնում» խիստ շահեկան հատորը, որը հանդիսանում է հեղինակի երկար տարիների քրտնաջան աշխատանքի եւ անխոնջ պրպտումների արդիւնքը։

Նշենք, որ գրքի հրատարակութիւնը նախաձեռնուել է Ստամպուլի «Արաս» հրատարակութեան կողմից եւ տպուել Երեւանի համալսարանի տպարանում։

Երկու խօսք հեղինակի մասին։ Խաչիկ Ամիրեանը շրջանաւարտ է Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետից։ 1963 թ. Ստամպուլից տեղափոխուել է Երեւան եւ մի առ ժամանակ աշխատել Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտում, իսկ այնուհետեւ (1970 թ.) աւագ դասախօսի պաշտօնով դասաւանդել է թուրքերէն եւ օսմաներէն լեզուներ Պետ. Համալսարանի արեւելագիտութեան ֆակուլտետում։ Իսկ մինչ այդ, 1931–1962 թուականներին եռանդուն աշխատակցել է պոլսահայ մամուլին, սփիւռքահայ պարբերականներին եւ հրատարակել աւելի քան 400 յօդուածներ։ Խաչիկ Ամիրեանի խմբագրութեամբ լոյս են տեսել նաեւ

Խաչիկ Ամիրեան-1954-ին

մի շարք քաղաքական-հասարակական, արուեստի եւ գրականութեան շաբաթաթերթեր, ամսագիր եւ տարեգիրք։ Ինչպէս օրինակ՝ «Ոլասիս», «Անիւ», «Ճառագայթ»։ Խաչիկ Ամիրեանը հեղինակ է նաեւ գիտական-բանասիրական բազմաթիւ աշխատասիրութիւնների։ Հայրենասիրական ոգով տոգորուած նրա բանաստեղծութիւններն ու պատմուածքները հրապարակուած են թէ սփիւռքում եւ թէ Երեւանում առանձին գրքերով։ Կատարել է նաեւ գիտական եւ գեղարուեստական թարգմանչական աշխատանքներ, որոնք արժանացել են մամուլի եւ գրասէր հասարակութեան լուրջ ուշադրութեանը։ Այսքանով բաւարարուենք, քանի որ այստեղ հնարաւոր չէ աւելի մանրամասն կանգ առնել այդ բոլորի վրայ։

Գրախօսուող գրքում Խաչիկ Ամիրեանը հանրագումարի բերելով ակադ. Հր. Աճառեանի եւ Էդ. Աղայեանի թուրքերէնում հայերէնից փոխառեալ բառերին վերաբերող ուսումնասիրութիւնները գիտնականի բարեխղճութեամբ հետազօտել եւ պատասխանել է իր իսկ կողմից առաջ քաշուած հետեւեալ հարցադրումներին։

ա) Լրացնել փոխառութիւնների քանակը։ բ) Ստուգել, թէ դրանց որ մասն է օգտագործւում այժմ թուրքերէն գրական լեզուում։ գ) Բառային փոխառութիւնների ճանապարհով պարզել հայկական մշակոյթի ազդեցութիւնը թուրքականի վրայ։ դ) Հնարաւորութեան սահմաններում ճշգրտել երկու լեզուներում ներկայումս առկայ փոխառութիւնների քանակը։

Այս աշխատանքը կատարելու համար Խաչիկ Ամիրեանը օգտագործել է արդի թուրք գրականութեան մօտ 80 աղբիւր։ Հետաքրքիր է նշել, որ թուրքական գրականութիւնից նրա հաւաքած փոխառեալ բառերի քանակը, եթէ 1985 թ. 223 է եղել, ապա յետագայ պրպտումների ընթացքում այն հասել է 254-ի։ Այդ բոլորը գրքում ներկայացուած են ըստ բնագաւառների եւ առանձին ենթավերնագիրներով։ Հարկ է նշել նաեւ, որ անկախ փոխառեալ բառերի քանակից, հայերն իրենց հողագործական, երգ-երաժշտութեան, արհեստագործական եւ այլ բնագաւառներից խոր ազդեցութիւն են թողել թուրքական մշակոյթի համանման բնագաւառների վրայ։ Գրքում փոխառնուած բառերը փաստւում են նաեւ թուրք հեղինակների երկերից քաղուածաբար բերուած հատուածներով։ Որպէսզի, պատկերացումը լինի կատարեալ, ստորեւ գրքից բերում ենք մի քանի օրինակներ ապուր > աբուր, գաթա > քեթէ, գութան-քութան, լաւաշ > լաւաշ, մօրուք > մօրուք բառերի մասին։ Աբուր > աբուր. օգտագործւում է «աբուր-ջուբուր» արտայայտութեան մէջ՝ խառնիխուռն կերուած բաներ, տեղի անտեղի խօսք՝ գործ, արարք իմաստներով։

"Çocuklara abur cubur yedirmekten sakınmalı" (Անհրաժեշտ է զգուշանալ երեխաներին ապուր-ջուրուր կերցնելուց։ (էջ 18)։

Գաթա > քեթէ. "kete : Ekşimiş veya ekşimemiş hamurdan yapilan bir çeşit çörek" (գաթան թթու կամ անթթու խմորով պատրաստուող մի տեսակ կարկանդակ է)։ (էջ 19)։

Գուբան > բուբան. «Nasıl kotan hopu toprağı yararak eveliğin kökünü ezer, çıkarır, beyliğin de öyle kökünü kazıp çıkarmak gerekir" (*ինչպէս որ գուբանի խոփը հողը ճեղքում է եւ աւելուկն իր արմատով տրորում, պոկում է, նոյնպէս անհրաժեշտ է բեյերի արմատը փորել, տեղից շպրտել*): (էջ 19): *Այս նախադասութեան որպէս ծանօթագրութիւն* Խաչիկ Ամիրեանը նշում է, որ թուրք հեղինակը օգտագործել է 3 հայերէն բառ, որից միայն «գուբան» բառն է գրական փոխառութիւն համարում: Լաւաշ > լաւաշ. "Erzurum ve Kars halk dilinde tandırda pişirilen ince ekmeğe Lavaş derler" (*Էրզրումի եւ Կարսի ժողովրդական լեզուում թոնրի մէջ եփուող բարակ հացին լաւաշ են ասում*): (էջ 21):

Մորուք > մորուք. Ծերունի, տարեց տղամարդ նշանակութեամբ: "Moruk sağ olsaydı bunu beş bine de, on bine de vermezdi" (*եթէ ծերուկը (մորուքը) ողջ լինէր, հինգ հազարի էլ, տաս հազարի էլ չէր վաճառի*): (էջ 25):

Խաչիկ Ամիրեանը կանգ է առել նաեւ արդի հայերէնում թուրքերէնից գրական փոխառութիւնների մասին: Մանրազնին ուսումնասիրելով եւ ստուգաբանելով թուրքերէնից փոխառեալ բառերը յանգում է այն եզրակացութեան, որ արդի գրական հայերէնում օգտագործուող բառերի թիւը եղել է 103, որոնցից Հր. Աճառեանի «Հայերէն Արմատական Բառարան»ից բերուած 90 բառերի միայն 26-ն են օգտագործւում արդի հայերէնում, իսկ Էդ. Աղայեանի «Արդի հայերէն բացատրական բառարան»ից 77-ը: Այդ բառերը բերուած են առանձին ցուցակներով (*տես էջ 73–83*):

Տողատակին ակնարկւում եւ առանձին օրինակներ են բերուած պատմա-բանասիրական եւ հայ գեղարուեստական գրականութեան մէջ օգտագործուած բառերից, որոնք առնչուել են Օսմանեան կայսրութեան վարչատարածքային, հարկային, կրօնական եւ ռազմա-աւատական կառուցուածքում օգտագործուած տերմինների հետ: Այդ բառերը երկար ժամանակ գործածութեան մէջ են եղել հայոց լեզուում, քանի որ պատմական Հայաստանի տարածքը 5–6 դար գտնուել է թուրքական տիրապետութեան ներքոյ: Օրինակ՝ վիլայէթ, սանջակ, խարաջ, աշար, քեաֆիր, բայրամ, մինարէթ եւ այլն:

Գրական փոխառութիւնների ստուգաբանութեան բաժնում հեղինակը մասնաւորապէս հետազօտել է եւ բերուած օրինակներով ապացուցել, որ այդ բառերը իրօք, որ հայերէնից թուրքերէն փոխառութիւններ են:

Գրքի վերջի գլխում հեղինակը աշխատել է առաջին անգամ ճշգել փոխառեալ բառերի հնչիւնափոխութեան եւ ստուգաբանման որոշ օրինաչափութիւններ: Նկատի ունենալով բազաձայն եւ ձայնաւոր տառերի հնչիւնափոխման որոշ օրէնքներ, ցոյց է տուել թէ ինչպիսի օրինաչափութիւններով են փոխ առնուել հայերէն բառերը՝ թուրքերէնում: Նշենք, որ մինչ այդ ոչ ոք չի զբաղուել այս հարցով:

Այս աշխատութիւնը խիստ կարեւոր է նաեւ այն տեսակէտից, որ այսօր թուրք լեզուաբաններն ու պատմաբանները խեղաթիւրելով փաստական ճշմարտութիւնները աշխատում են ուրանալ ոչ միայն թուրքերէնում հայերէն փոխառեալ բառերի փաստը, այլեւ հայկական մշակոյթի որեւէ ազդեցութիւն թուրքերէնի վրայ, նկատի ունենալով այն սխալ կարծիքը, որ հայերը իբր «կուլտուրապէս աւելի ցածր մակարդակի վրայ են եղել, քան թուրքերը» (տես էջ 6):

Եզրակացնելով նշենք, որ Խաչիկ Ամիրեանի այս հատորը լեզուագիտական եւ մշակութային փոխազդեցութիւնների տեսանկիւնից կարեւոր նշանակութիւն ունեցող հետազօտութիւն է եւ բնականաբար ըստ արժանւոյն կը գնահատուի եւ ուշադրութեան կարժանանայ բանասէրների, այդ ասպարէզում մասնագիտացող ուսանողների եւ ընդհանրապէս ընթերցող լայն հասարակութեան կողմից:

Իսկ մենք ջերմօրէն շնորհաւորում ենք հեղինակին այս շահեկան գրքի լոյս ընծայման կապակցութեամբ, բարեմաղթում քաջառողջութիւն եւ ստեղծագործական նոր յաջողութիւններ: Բանը նրանումն է, որ հակառակ իր ծերունազարդ տարիքին եւ առողջական վիճակին Խաչիկ Ամիրեանը օրաւուր շրջապատուած է մասնագիտական գրքերով, թերթերով եւ տեւապէս պրպտումների մէջ է: Իսկ իր հետաքրքրութեան ոլորտում մշտապէս հայ-թուրքական յարաբերութիւններին վերաբերող կնճռոտ հարցերն են...:

«ՆՈՐ ՕՐ» ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ՝ ՅԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ

1996 թուականին Ձեր անմիջական ջանքերով եւ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի Վարչութեան նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկ. Մարտիրոս եւ Ռիթա Իսկէնտէրեաններու մեկենասութեամբ լոյս տեսաւ իմ «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» հատորը, որը ըստ արժանւոյն գնահատուեց թէ հայրենիքում եւ թէ սփիւռքահայ գաղութներում։

Բնականաբար իւրաքանչիւր գրքի հրատարակումը աւելի է ոգեւորում հեղինակին եւ լիցք ու եռանդ է տալիս իր յետագայ աշխատանքներում նոր ուսումնասիրութիւններ գրելու եւ լոյս ընծայելու դժուարին գործում։

Այդպէս էլ եղաւ ինձ հետ։ Վերջերս ի մի բերելով 1994-96 թուականներին Լոս Անճելըսի հայկական մամուլում լոյս տեսած գիտական յօդուածները, ջանացի իմ համեստ ուժերով (թէկուզ եւ քիչ տպաքանակով) հրատարակել «Հայկական Հարցը եւ Մեծ Եղեռնը» խորագիրը կրող երկու մասից բաղկացած հատորները։ Կից ուղարկում եմ ձեզ, մաս առաջինից (74 էջ) եւ մաս երկրորդից (112 էջ) մէկական օրինակներ։ Միւս օրինակները մտադիր եմ ուղարկել պատմաբաններին, առանձին գրադարաններին եւ կազմակերպութիւններին։

Այս հատորների կարեւորութիւնը կայանում է նրանում, որ այնտեղ գիտական առանձին յօդուածներից բացի ընդգրկուած են նորայայտ փաստագրական նիւթեր եւ կատարուած են առաջին անգամ թարգմանութիւններ թուրք պետական եւ քաղաքական գործիչներ՝ մեծ վէզիր Քեամիլ Փաշայի եւ Ջելալ Նուրիի աշխատութիւններից, որոնք առնչւում են հայ-թուրքական յարաբերութիւններին եւ հայկական հարցին ընդհանրապէս։

Նշենք, որ մօտ ապագային հրատարակութեան ենք պատրաստում նաեւ մէկ այլ թուրք հանրայայտ պետական գործիչ՝ մեծ վէզիր Սայիտ Փաշայի (Մեհմէտ Շափուր Ջելեպիի) յուշագրութիւնից (արաբատառ թուրքերէն) հայկական հարցին վերաբերող առանձին հատուածների թարգմանութիւնը, առաջաբանով եւ ծանոթագրութիւններով։

Այդ նիւթերը նոր լոյս են սփռում Ապտուլ Համիտեան բռնատիրութեան եւ երիտթուրքերի կառավարութեան կողմից դաժանօրէն կազմակերպուած արեւմտահայերի զանգուածային տեղահանութիւնների եւ կոտորածների մասին։

Եւ այդպէս, երկու մասից բաղկացած այս հատորները պատրաստելուց յետոյ, իմ մօտ առաջացաւ հետեւեալ միտքը. իսկ ինչո՞ւ չչարունակել այն որպէս «Հայկական Հարցը եւ Մեծ Եղեռնը» անուանաթերթով մի մատենաշար եւ պարբերաբար հրատարակել տարին մէկ կամ երկու անգամ, բայց պաշտօնական տարազի տակ։ Բոլորովին չեմ կասկածում, որ այս մատենաշարին իրենց յօդուածներով կը մասնակցեն ոչ միայն հայրենիքի

եւ սփիւռքի մասնագէտներն ու պատմաբանները, այլ ընդհանրապէս ամբողջ հայ մտաւորականութիւնը, որը էական նպաստ կը բերի Հայ Դատի պաշտպանութեան եւ վերջնական յաղթանակի սուրբ գործին։ Հասկանալի է, որ այնտեղ տեղ կը գտնեն նաեւ հայերէն, անգլերէն եւ այլ լեզուներով յօդուածներ։

Մասնագիտական նման հանդէսի հրատարակութիւնը հրատապ է եւ այժմէական, եթէ նկատի ունենանք, որ թուրք պատմագրութիւնը, քաղաքական գործիչները ինչպէս են այսօր աղաւաղում եւ նենգափոխում հայ ժողովրդի պատմութիւնը, յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայերի հալածանքներն ու կոտորածները։

Ես, ամենայն սիրով կը լծուեմ այս մատենաշարի յարատեւման գործին, բայց միմիայն իմ ուժերով դժուար է եւ անհնար։ Ուստի որեւէ կազմակերպութիւն կամ հաստատութիւն պէտք է հովանաւորի այս մատենաշարը, որպէսզի այն լոյս տեսնի կանոնաւոր եւ պատշաճ մակարդակով։ Կարծում եմ, որ կը լինեն հաւատաւոր մարդիկ, որոնք կը ձայնակցեն եւ կը պաշտպանեն մեր այս առաջարկը։

Օգտագործելով առիթը նշեմ նաեւ հետեւեալի մասին. որպէս հայ-թուրքական յարաբերութիւններու միջնադարի մասնագէտ եւ օսմանեէրէնի գիտակ, վերջերս ամբողջացրի եւ հրատարակութեան համար պատրաստեցի խիստ կարեւոր մի աշխատութիւն՝ «Արեւմտահայութեան վիճակը ըստ 16-19-րդ դարերու թուրքական աղբիւրների» խորագրով։ Այն ունի հետազօտական եւ աղբիւրագիտական բնոյթ։ Առաջաբանում տրւում է թուրքական պատմական աղբիւրների եւ վաւերագրական նիւթերի վերլուծութիւնը, իսկ երեք գլուխներում յաջորդաբար խօսւում է Հայաստանին վերաբերող



պատմա-աշխարհագրական աղբիւրների, հայերի իրաւական վիճակի ու ազգային ճնշման դրսեւորումների, ինչպէս նաեւ հողատիրութեան եւ հողային կառուցուածքում գոյութիւն ունեցող ապօրինութիւնների ու չարաշահումների մասին։

Ցաւելուածում ընդգրկուած են հայ ժողովրդի պատմութեան եւ Կ. Պոլսի հայ համայնքին վերաբերող մի շարք թուրքական նորայայտ վաւերագրերի՝ այդ թուում կանոններ եւ կանոնագիրքերի, զանազան օրէնքների եւ կանոնագրութիւնների, սուլթանական հրամանագրերի, հրովարտակների, բերաթների, թաքրիրների եւ պաշտօնական այլ գրութիւնների թարգմանութիւնները (ընդամէնը 300 էջ)։ Կասկածից վեր է, որ այս աշխատանքը պատմագիտական եւ քաղաքական առումով խիստ կարեւոր նշանակութիւն ունի եւ հրատարակութեան հարցը նոյնպէս կարօտ է առանձին կազմակերպութեան կամ հաւատաւոր մեկենասի հովանաւորութեան։

Առայժմս այսքան, յուսանք եւ սպասենք լաւատեսութեամբ։

Ցարգանքներով
Աւետիս Փափազեան

Յ.Գ. Որպէսզի ընթերցողի համար պատկերացումը ամբողջական լինի, ստորեւ բերում եմ վերոյիշեալ երկու հատորների բովանդակութիւնը։

Մաս Առաջին

1. Երկու խօսք
2. Հայկական հարցը եւ Մեծ Եղեռնը
3. Թուրք պետական գործիչ Քեամիլ Փաշան Արեւմտեան Հայաստանի 19-րդ դարի վերջին քառորդի իրադարձութիւնների մասին
4. Օսմանիզմի գաղափարախօսութիւնը երիտթուրքական գործիչ Զելալ Նուրիի երկերում
5. 1915 թ. Մեծ Եղեռնի նախաշեմին Կ. Պոլսոյ հայ պատրիարքարանի կողմից Բարձրագոյն Դրանը յղուած պաշտօնական գրութեան մասին
6. Գրիգոր Զօհրապի հայոց եղեռնը կանխելու վերջին ճիգերը
7. Ձայն Տառապելոց

Մաս Երկրորդ

8. Ժամանակագրութիւն. Հայկական Հարցը եւ Մեծ Եղեռնը
9. Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցի յիշատակումը աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում
10. Հայերի ցեղասպանութիւնը եւ թուրք պատմագրութեան խեղաթիւրումները
11. Պատասխան Պեռնար Լեւիսին. «Ո՛չ թէ հայկական բռնագաղթ, այլ հայկական ցեղասպանութիւն»
12. Բռնագա՞ղթ թէ ցեղասպանութիւն
13. Բաց նամակ Le Monde օրաթերթի խմբագրութեան

14. Բաց նամակ թուրք պատմաբան Թանէր Աքչամին
15. Մտորումներ «Զաման» թերթի հարցազրոյցի մասին
16. Գրախօսութիւն Փրոֆ. Երուանդ Սարգսեանի «Դաւադիր ԳործարքՄ» գրքի մասին
17. Գրախօսութիւն թուրք պատմաբան Եավուզ Էրջանի «Հայերը դիմակազերծւում են» գրքի մասին
18. Գրախօսութիւն Եավուզ Էրջանի «Հայերը եւ Իրանը» գրքի մասին
19. Հայերի ցեղասպանութեան գլխաւոր յանցագործ Թալեաթ Փաշայի յուշագրութեան մասին
20. Նամակ «Նոր Օր» եռօրեայ թերթի խմբագիր յարգելի Պրն. Յակոբ Պօղոսեանին
21. Ե՞րբ ունենալու ենք մեր Օթթօ Ուուլֆերը
22. Երախտագիտութեան խօսք Անաթոլ Ֆրանսի յիշատակին
23. Անցեալի յուշերից
24. Հեղինակի մասին։

Ծ.Խ. Մեր յարգելի փրոֆեսէօրը այս նամակը կ'եզրափակէ «յուսանք եւ սպասենք լաւատեսութեամբ» բառերով։ Մենք եւս յոյսով եւ լաւատեսութեամբ կը սպասենք անծանօթ մի գուցէ եւ ծանօթ այն մեկենասին, որ պիտի գայ տէր կանգնելու այս գիրքերու հրատարակութեան ծախսերուն։

ԵՂԵՌՆԷՆ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐ

Ո՞Վ Է ԹԱԳՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ

ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Օրերս լոյս տեսաւ հայոց Մեծ Եղեռնին նուիրուած իմ գիրքը «Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում» խորագրով, որի առաջին էջում որպէս ձօն արձանագրուած է հետեւեալը.

«Նուիրում եմ հօրս, հասարակական անխոնջ գործիչ լուսահոգի Համբարձում Յակորի Փափազեանին եւ մօրս Մարի Փափազեանին. հօրեղբօրս՝ թրքական բանակի սպայ Աւետիս (Զաւուշ) Յակորի Փափազեանին, որը 1915 թ. իր ձիու վրայ դաւադրաբար սպանուեց թիկունքից նոյն թրքական բանակի հրամանատարութեան կողմից, ինչպէս նաեւ նոյնպէս դաւադրաբար եւ անողոքօրէն զանգուածային ձեւով գնդակահարուած թրքական բանակի հայ զինուորների, սպաների եւ բոլոր մեր անմեղ զոհերի պայծառ յիշատակին»:

Ինչպէս նկատեցիք, հօրեղբայրս՝ Աւետիս Զաւուշը եղել է թուրքական բանակի սպայ եւ իր առնականութեամբ եւ բարութեամբ լաւ

համբաւ էր ձեռք բերել իր շրջապատում: (Նշեմ, որ նրա յիշատակը պայծառ պահելու համար տողերիս հեղինակին կնքել են նրա անունով):

1915 թ. բռնի տեղահանութեան օրերին թուրքական ջոկատը, որի մէջ եղել է հօրեղբայրս, իջեւանել է ինչ-որ մի հայկական գիւղի մօտակայքում: Հրամանատարութիւնը ամէն գիշեր, թաքուն եւ ընտրովի գիւղի հայ աղջիկներին բերելով, բռնաբարել են, ենթարկել անարգանքի, իսկ դիմակայողներին նոյնիսկ սպաննել:

Այս բոլորը աննկատ չի մնում հօրեղբօրս աչքից: Ինչ որ ձեւով ինքը տեղեկանում է, որ յաջորդ օրուայ զոհերն են լինելու խեղճ ու կրակ երկու սիրասուն որբ քոյրեր՝ իրենց մօր հետ միասին: Հօրեղբայրս թաքուն կազմակերպում է ոչ միայն նրանց, այլ 16 ուրիշ կոյս հայ աղջիկների փախուստը: Գիշերը հրամանատարութեան պահանջով «որսի» գնացած զինուորները վերադառնում են դատարկաձեռն: Բնականաբար կասկածում են հօրեղբօրս վրայ եւ ասում. "Bu Avetis çauşun: işidir" (Սա Աւետիս Զաուշի արարքն է):

Յաջորդ օրը ձիու վրայ դաւադրաբար թիկունքից կրակում են հօրեղբօրս վրայ եւ սպաննում:

Մարիամ տատիկս երբ խմանում է իր զաւակի եղերական մահուան մասին, տեղն ու տեղը կորցնում է աչքի տեսողութիւնը եւ կարճ ժամանակամիջոցին չդիմանալով ծանր վշտին մահանում է: Հօրեղբօրս կինը Մարիցան զոհ է գնում աքսորի ճանապարհին:

Իրենց մինուճար՝ 5 տարեկան սիրասուն աղջնակը որբանալով, սկզբում յայտնւում է թուրքերի ձեռքին, իսկ յետոյ նրան վաճառում են երեխայ չունեցող արաբ մեծահարուստ մի ընտանիքի՝ Դամասկոսում:

Բարեբախտաբար կարճ ժամանակամիջոցում հայրս՝ Համբարձում Փափազեանը կարողանում է գտնել իր եղբօր միակ ժառանգի հետքերը:

Մի կողմից տեղի հայ առաջնորդարանի ներդրած եռանդուն միջնորդութեամբ, միւս կողմից հօրս թափած ջանքերի շնորհիւ (դատարան, կաշառք...) կարողանում են նրան ազատել: Այնուհետեւ, հայրս պահում եւ մեծացնում է իր եղբօր աղջկան մեր յարկի տակ, որպէս իր հարազատ զաւակը:

Յետագայում, 1930 թ., ճակատագրի բերումով նա ամուսնանում է ամերիկահայ, ծագումով Հաճընից մի հայրենասէր երիտասարդի՝ Յակոբ Մանուկեանի հետ եւ մշտական բնակութիւն հաստատում Միացեալ Նահանգներում:

Այսօր վերոյիշեալ այդ փոքրիկը, այսինքն իմ մեծ քոյրը՝ Թագուհի Մանուկեանը մօտ 85 տարեկան է եւ ապրում է բարեկեցիկ կեանքով Նիւ Եորքում իր զաւակների եւ թոռների համերաշխ շրջապատում:

Այո՛, 85 տարեկան, բայց հոգով-սրտով նուիրուած իր հայրենիքի բարգաւաճմանն ու բարօրութեանը:

Ինչպէս նկատեցիք քոյրս որբ է մեծացել եւ իր մաշկի վրայ լաւ է զգացել որբերի տառապանքն ու հոգսերը: Եւ ահա, այսօր այդ ծերունազարդ հասակում, իր տկար աչքերով եւ դողդողացող ձեռքերով՝ հիւսել է 80 հատ գոյնզգոյն տաք վզնոցներ (scarf) եւ Նիւ Եորքի Մ. Վարդան եկեղեցիի միջոցով ուղարկել Հայաստան, որպէսզի ցուրտ-ձմրան ընթացքում հայրենիքի որբացած հայորդիները պատսպարուեն եւ տաքանան...:

Այդ տարիքում այդքա՜ն ուժ ու եռանդ, հայրենիքի հանդէպ այդքա՜ն սէր ու նուիրուածութիւն...: Ուղղակի այս վայրկեանիս բառեր չեմ գտնում առաւել բարձր գնահատելու նրա այդ վեհանձն արարքը: Բայց, կարծում եմ դրա կարիքը չկայ, քանի որ Ուաշինկթընի Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը ըստ արժանւոյն, արդէն բարձր գնահատական է տուել նրան՝ յատուկ վկայագրով:

Ստորեւ ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում Ուաշինկթընի Հայաստանի Հանրապետութեան մամուլի քարտուղար՝ Պրն. Միքայէլ Բագրատունու ստորագրութիւնը կրող, անգլերէն շարադրուած այդ վկայագրի թարգմանութիւնը:

Սիրելի Տիկ.
Թագուհի Մանուկեան,
Ուաշինկթընի Հայաստանի դեսպանատան անունից կը ցանկանայինք յայտնել մեր անկեղծ երախտագիտութիւնը Հայաստանի նկատմամբ ձեր

ցուցաբերած նուիրուածութեան եւ վեհանձնութեան առթիւ:

Հայաստանի երեխաների համար 80 վզնոցներ հիւսելով, դուք արտայայտեցիք ձեր մեծագոյն բարութիւնն ու անձնուիրութիւնը: Ձեր վարմունքը լաւագոյն օրինակ է, թէ ի՞նչ կարող է անել անհատը այլոց օգնելու համար:

Մենք երախտապարտ ենք, որ դուք այդքան շատ կորով եւ ժամանակ էք վատնել այս ծրագրի համար: Ձեր արարքը յատկապէս պիտի գնահատուի այն երեխաների կողմից, որոնք պիտի ստանան այդ վզնոցները: Հայաստանը բաւականին տառապեց ցրտաշունչ ձմեռներից, թոյլ տաքացուող տներից եւ դպրոցներից. թէեւ վիճակը տարեց-տարի արդէն բարելաււում է: Ձեր հիանալի նուէրները պիտի ընդունուեն ամենայն սիրով:

Ես անձամբ կը ցանկանայի շնորհակալութիւն յայտնել ձեր ցուցադրած նման բարեգործութեան համար: Ձեր արարքով 80 հայ երեխաներ առաւել քիչ պիտի մտահոգուեն եւ հնարաւորութիւն պիտի ունենան կեանքը վայելելու առաւել ազատ:

Տիկ. Մանուկեան, Հայաստանի դժուարութիւնները մեղմացնելու համար ձեզ նման մարդկանց գործադրած պայքարով, ձեռք-ձեռքի տուած անձնական ջանքերով է գոյանում Միացեալ Նահանգների կառավարութեան մարդասիրական օգնութիւնը, որից Հայաստանը հիմնական ստացողներից երկրորդն է աշխարհում:

Կրկին շնորհակալութիւն եւ Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ:

«ԵՍ ԵՐԲԵՔ ՉԷԻ ՅԱՆԿԱՆԱՅ ՆՄԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՆԱԼ»

«Նաւասարդ» ամսագրի Մայիս 1996, թիւ 166-ի մէջ (էջ 17) մեր ուշադրութիւնը գրաւեց Սալբի Բագրատունու գրախօսականը իր վաղեմի ուսուցչի՝ Գառնիկ Բանեանի «Յուշեր Անթուրայի Որբանոցը» խորագիրը կրող գրքի մասին: Նշենք, որ հեղինակի յետմահու գիրքը հրատարակուել է 1992թ. Պէյրութ, Համազգայինի «Կոմիտաս» մասնաճիւղի վարչութեան կողմէ, Հրաչ Պաղտասարեանի մեկնաբանութեամբ:

Հասկանալի է, որ Գառնիկ Բանեանը իր յուշերում նկարագրել է Անթուրայի Թուրքական որբանոցում ապրած դառը օրերը, սովը, ծեծը, տառապանքն ու սարսափը, ամենօրեայ մահուան սպառնալիքը, և «Հայր Մեր»ը չրթունքներին տևապէս աղօթել է, որպէսզի չուտափոյթ ազատուի այդ դժոխք-որբանոցից:

Փաստերը խօսում են այն մասին, որ հայ երեխաները չդիմանալով որբանոցի ծանր պայմաններին, ճարահատեալ դիմել են փախուստի և պատըսպարուել մերձակայ անտառներում և քարայրներում:

Ընթերցելով Սալբի Բագրատունու վերոյիշեալ գրախօսականը, ես ակամայ մտաբերեցի, որ Թուրքագիտական իմ ուսումնասիրութիւնների ընթացքում հաւաքել էի նաև առանձին նիւթեր, որոնք առնչւում էին Մեծ Եղեռնի հայ որբերու հետ: Դրանցից մէկն էր Հալիտէ Էտիբը, որը Մեծ Եղեռնի ընթացքում մեծ դեր էր խաղացել հայ որբերին հաւաքելու և մահմետականացնելու գործում:

Իսկ ո՞վ է եղել նա:

Թուրք գրականագէտ և հասարակական գործիչ Հալիտէ Էտիբը (1884-1964) դարասկզբի Թուրքիայի մշակութային և քաղաքական կեանքում կարևոր դեր խաղացած առաջին կին գործիչն է եղել: Նրա հրապարակախօսական գործունէութիւնը սկսւում է 1908 թուականից յետոյ, երբ դառնում է «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեան գործունեայ քարոզիչներից մէկը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքական բանակում մասնակցել է «Կարմիր Մահիկ»-ի աշխատանքներին, իսկ այնուհետև ձեմալ փաշայի գլխաւորութեամբ, Սիրիայում ղեկավարել է որբանոցների կազմակերպման աշխատանքները: Հալիտէ Էտիբը հայկական Հարցի նկատմամբ ունեցել է անարդարացի դիրքորոշում: Ամերիկեան հասարակութեան շրջանում ի շահ Թուրքերի կարծիք ստեղծելու նպատակով 1920-ական թուականներից սկսած շրջագայել է ԱՄՆ-ի խոշորագոյն քաղաքներում, նենգաբար քարոզչութիւն անելով, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում իբրև թէ հայերն են բռնութիւն գործադրել Թուրքերի նկատմամբ: (Տես՝ Mevlan Zade Rifat, Turk inkilabinin iç yüzü, Halep, 1929, s.14, արաբատառ Թուրքերէն):

Ինչպէս նշեցինք, Հալիտէ Էտիբը Մեծ Եղեռնի ընթացքում կարևոր դեր է խաղացել հայ որբ երեխաներին մահմեդականացնելու և Թրքացնելու խնդրում: Չնայած նա իր աշխատութիւններում ձգտել է այն պատկերացումը ստեղծել, որ ինքը իբր թէ դէմ է եղել հայ երեխաների մահմեդականացման ծրագրին, սակայն ժամանակակիցների վկայութիւնները ցոյց են տալիս, որ «նա հայ որբերին հաւաքելով մահմեդականացնում էր»: (Տես՝ Մևլան Զատէ Ռիֆաթ, նշուած աշխ., էջ 145):

Կասկածից վեր է, որ հայ երեխաներին մահմեդականացնելով Թրքացնելը կատարւում էր յատուկ կառավարական որոշմամբ: Նոյնիսկ, ոչ միայն որբերին, այլև ծրագրուած է եղել Սիրիա տարագրուած հայութեանը մահմեդականացնել: Ահա թէ ինչ է գրել այդ մասին երիտթուրքական գործիչ Ֆալիհ Ռըֆկը Աթայը. «Հայերին դէպի Սիրիայի խորքերը տարագրումը պատնէշ էր ստեղծելու արաբ խիտ բնակչութեան դէմ: Ինչպէս ասենք չերքէզների, քրդերի և այլոց նման: Նոյնիսկ հայերին հող և տուն տալու պայմանով նրանց մահմեդականացնելու համար կազմուեց մի յանձնաժողով: Այս յանձնաժողովը մի անգամ հաւաքուեց իմ տանը, սակայն հետագայում գործնական արդիւնք չունեցաւ»: (Տես՝ Falih Rıfkı Atay, Zeytin dağı, Istanbul, 1957, s. 78):

Հալիտէ Էտիբի յուշագրութիւնը լոյս է տեսել անգլերէն լեզուով: (Տես՝ Memoires of Halide Edib,- New-York, London): Ստորև այդ գրքից թարգմանաբար հայ ընթերցողին ենք ներկայացնում մի հատուած, որը առնչւում է Անթուրայի որբանոցի հայ որբ երեխաների մահմեդականացման հարցի հետ:

***

... Նախքան Կ. Պոլիս մեկնելը, ձեմալ փաշան Նահիյէ Հանումին, Համտալլահ Սուպհիին և ինձ տարաւ Լիբանանի Անթուրայում գտնուող որբանոցը: Աւտոմեքենայում ես շատ հետաքրքիր զրոյց ունեցայ նրա հետ:

- Այս դժուարին օրերին,- ասացի ես,- դուք հնարաւորութեան սահմաններում լաւ վերաբերմունք ունեցաք հայերի նկատմամբ, իսկ ինչու՞ թոյլ տուիք, որ հայ երեխաները կոչուեն մահմեդական անուններով: Ստացւում է այնպէս, որ հայերը մահմեդականացւում են և պատմութիւնը դրա համար մի օր վրէժ կը լուծի թուրք ապագայ սերնդից:

- Դուք իդէալիստ էք,- պատասխանեց նա՝ տրտմութեամբ,- և բոլոր իդէալիստների նման կարիքն ունէք իրականութիւնը զգացումով ընկալելու: Դուք հաւատո՞մ էք, որ մի քանի հարիւր տղաների և աղջիկների մահմեդականացնելով ես իմ ազգին կարող եմ օգուտ բերել: Դուք արդէն Դամասկոսում տեսաք հայերի կողմից կառուցուած հայկական որբանոցները: Դրանցում այլևս ազատ տեղեր չկան: Բացի այդ, այլևս դրամ էլ չկայ, որպէսզի նոր հայկական որբանոցներ բացուեն: Նկատի ունեցիր, որ այս մահմեդական որբանոց է և դրանում միայն մահմեդական որբերը իրաւունք ունեն մտնելու: Ես այս որբանոցն եմ ուղարկում բոլոր անտէր երեխաներին, որոնք Սիրիա են անցնում այն շրջաններից, որտեղ տեղի ունեցաւ տուեալ ողբերգութիւնը: (Նկատի ունի հայերի բռնագաղթն ու կոտորածները,- Ա.Փ.): Թուրքերը և քրդերն ևս ունեն որբանոցներ: Սովահար թափառող երեխաներին ես ուղարկում եմ Անթուրա: Ես պէտք է որ նրանց մի կերպ կենդանի պահեմ: Ես չեմ կարող տեսնել նրանց մեռելները փողոցներում:

- Իսկ յետո՞յ, հարցրի ես:

- Դուք նկատի ունէք պատերազմից յետո՞յ,- հարցրեց նա: Պատերազմից յետոյ նրանք կը գնան իրենց ժողովրդի մօտ: Ես կարծում եմ նրանք այնքան էլ փոքր չեն, որ չհասկանան իրենց ազգութիւնը:

- Ես երբեք չէի ցանկանայ նման որբանոցի հետ գործ ունենալ:

Նա չարժեց իր գլուխը և ասաց,- դուք պէտք է գործ ունենաք: Եթէ դուք տեսնէք նրանց խեղճութիւնն ու տանջանքները, կ'աշխատէք նրանց հետ, նոյնիսկ առանց մտածելու նրանց անունի և կրօնի մասին: Դուք այնպէս էք խօսում, կարծէք ես ինչ որ անմարդկային բան եմ անում: Ես մահմեդական որբերի հացի բաժինը կիսում եմ նրանց հետ: Եթէ այդքան մեծ թուով հայ որբերին ես չպահէի, ապա այդ դրամը ես կը ծախսէի մահմեդական երեխաների վրայ: (Տես՝ էջ 428):

Բերուած հատուածում ձեմալ փաշան արդարանալու նենգ քայլերի է դիմում և ձգտում է այն թիւր պատկերացումը ստեղծել, որ իբր ինքը մարդասիրական վերաբերմունք է ցոյց տալիս հայ որբ երեխաներին: Իրականում այդ բոլորը կեղծ են և մտացածին: Հայ որբ երեխաներին մահմեդականացնելը, նրանց անունները փոխելն ու թուրքացնելը իր հիմքում ունէր մէկ նպատակ՝ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականութիւն:

Նոյնիսկ որբանոցի այդ դաժան կացութիւնը նկատելով, Հալիտէ Էտիբի նման մոլեռանդ թրքուհին անգամ չի թաքցնում իր նողկանքը այդ չարամիտ երևոյթի հանդէպ, ասելով, որ «*ինքը երբեք չէր ցանկանայ նման որբանոցի հետ գործ ունենալ*»:

Իսկ ու՞մ յայտնի չէ, որ ձեմալ փաշան հայ ժողովրդի բռնի տեղահանման ու կոտորածների խնդրում ունեցել է խորամանկ, քողարկուած, երեսպաշտ դիրքորոշում, ձգտելով բացայայտօրէն խեղաթիւրել իրականութիւնը:

Ջ. Կիրակոսեանը հանրագումարի բերելով ձեմալ

փաշայի նենգ էութիւնը, իր «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայութիւնը» գրքում գրել է՝ «Ճեմալ փաշան ամէն կերպ ձգտում էր թաքցնել իր մեղսակցութիւնը, խօսում էր հայերի «Գիւղատնտեսական կոլոնիաներ» ստեղծելու մասին, սպառնալից հրամաններով արգելում էր լուսանկարել հայ տարագիրների դժոխային կեանքի պատկերները, սուտ տուեալներ հաղորդում արտասահմանեան լրագրողներին» (տես՝ էջ 329):

ՆԱԽԱՍԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ թիւ 170-171
Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1996, էջ49-50

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻ ՄԱՄՈՒԼԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում եւ նախօրէին տեղի ունեցած արեւմտահայութեան զանգուածային բռնի տեղահանութիւններն ու կոտորածները անմիջական իրենց արձագանգն են գտել եւ դատապարտուել տուեալ ժամանակուայ համաշխարհային մամուլում:

Հակառակ այսօրուայ թուրքական ուրացումներին այդ թերթերում եւ ամսագրերում բերուած վկայութիւնները լիովին հաստատում են 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած հայերի առաջին ցեղասպանութիւնը:

Փաստերը ցոյց են տալիս, որ զանգուածային բռնագաղթն ու ջարդերը Արեւմտեան Հայաստանի բաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման ծրագիրը նախօրօք մշակուած եւ որոշուած էր «Իթթիհատ վէ Թերաքքի» (Միութիւն եւ Առաջադիմութիւն) կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութեանը ի սպառ բնաջնջելու նանապարհը:

Մի յօդուածի սահմաններում հնարաւոր չէ կանգ առնել տուեալ ժամանակուայ մամուլում հրապարակուած բազմաթիւ յօդուածների եւ փաստագրական նիւթերի վրայ:

Այնպէս որ ստորեւ տալիս ենք մի քանի քաղուածքներ այդ հրապարակումներից, որոնք անմիջական եւ հաւաստի պատկերացում են տալիս արեւմտահայութան նկատմամբ կատարուած ցեղասպանութեան մասին:

* * *

«Այսպիսով, հայկական հարցի էութիւնը ներկայումս կայանում է ոչ թէ նրանում, որ երեք շաբաթուայ ընթացքում տեղի են ունեցել 70 բռնաբարութիւն եւ սպանութիւն, այլ նրանով, որ մեր հաւատակից քրիստոնեաների անձնական անձեռնմխելիութեան դէմ կատարուող այդ յանցափորձերը տեղի են ունենում կենտրոնական երիտթուրքական կառավարութեան բարեհաճ թոյլտուութեամբ եւ գիտութեամբ» («Նովոյէ Վրեմեայ» Մայիս 22, 1913 Սան Փեթերպուրկ: Ռուսերէն):

* * *

«Ներկայումս այնպիսի սարսափելի մի գործ է կատարւում, որի համեմատութեամբ նսեմանում է այն ամէնը, ինչ մարդկութիւնը տեսնում է ահարդէն մէկ տարի շարունակ. տեղի է ունենում մի ամբողջ ժողովրդի բիրտ եւ կանոնաւոր ոչնչացում: Այս իրադարձութիւնը, գուցէ եւ, աննախադէպ է համաշխարհային պատմութեան մէջ: Ապտուլ Համիտի օրոք հայերի կոտորածը սահմանափակւում էր որոշ տեղանքով: Այսօր խօսք է գնում ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին՝ Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքում, ամենուրեք, որտեղ էլ որ ապրելիս

→

լինեն նրա ներկայացուցիչները»: (Journal de Genève, September, No. 9, 1915)!

* * *

«...Ատրիանապոլսի բոլոր հայերը՝ մօտ 1600 հոգի, ձերբակալուել են, տղամարդիկ անյապաղ աքսորուել են փոքր Ասիա, իսկ կանայք ու երեխաները երկու օր պահուել են բանտում՝ ենթարկուելով բանտապանների կոպիտ յարձակումներին: Նրանցից ոմանց յետագայում նստեցրել են առագաստանաւերը, որպէսզի տեղափոխուեն փոքր Ասիա: Երկու նաւակներ սուզուել են Ռոտոստոյի մօտ եւ դրանցում եղածների մեծ մասը խեղդուել է»: (The Times, December 21, 1915)!

* * *

«...Թուրքերն սկսեցին (Էրզրումի հայերի) թալանել, բռնաբարել կանանց, սպանել երեխաներին, եւ ի վերջոյ դժբախտները գլխովին ընկղմեցին: Դիակները նետում էին գետերը եւ, ինչպէս հաղորդում են ականատեսները, դիակների կոյտից ջուրը կանգ էր առնում: Ամբողջ տեղի ունեցածը անհնար է նկարագրել: Կարելի է ենթադրել, որ ամէն ինչ կազմակերպուել էր խստիւ ծրագրով, եւ տուեալներ կան կարծելու, որ այդ ծրագիրը յուշել էին գերմանացիները: (Արմեանսկի Վեսթնիկ, թիւ 7, 1916, ռուսերէն):

(Մանօթագրութիւն, հեղինակի,- Ա.Փ.,- Այստեղ տեղին է նշել, որ հայերի ցեղասպանութեան գլխաւոր յանցագործ՝ Թալեաթը երբ 1917 թ. նշանակուեց Օսմանեան կայսրութեան մեծ վէզիրի պաշտօնում Գերմանիայի քայքերը նրան շնորհեց կարմիր արծուի առաջին կարգի շքանշան):

* * *

«Հայ երեխաներին ծովն էին նետել շան լակոտների պէս, մեծահասակ հայերին դուրս էին հանել քաղաքի սահմաններից եւ խումբ-խումբ գնդակահարել. ջահել աղջիկներին վաճառել էին հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցուածքը վաճառքի համար աճուրդի էր հանուել Տրապիզոնի տաճարում...» (Le Temps, 7-V-1916)!

* * *

«...Թուրքերը մի առանձին յամառութեամբ ու վայրագութեամբ են աւերում հայկական եկեղեցիները: Եւ այդպէս է ամենուրեք: Մուշում փրկուել է միայն մէկ եկեղեցի եւ դա էլ այն պատճառով, որ նրանում տեղաւորուած էր Թուրքերի ալիւրի պահեստը: Սրբապատկերները ամենուր եւ միշտ ապականուած են ու պղծուած ամենանողկալի, ամենաքարբարոսական ձեւով: Թուրքն ասես ուզում է աշխարհի երեսից ջնջել այն ամէնը, ինչ հայկական է»: (Գաւգազկոյէ Սլովօ, Յունուար 22, 1917, թիւ 18, ռուսերէն):

* * *

«(Տրապիզոնում) թուրքերը գնդակահարեցին, ջրամոյն արեցին կամ ողջակիզեցին ոչ միայն յետ մնացած ռուս զինուորներին, որոնց ճանկել էին իրենց առաջխաղացման ընթացքում, այլեւ խոշտանգում էին իրենց ձեռքն ընկած հայերին։

Տրապիզոնում հայ երեխաներին լցրեցին պարկերը, բերանները կապեցին ու նետեցին ծով։ (L'Asie Française, Janvier - April, Paris, 1918, No. 172, p. 23)!

* * *

«Աշխարհ գիտէ եւ սա է ճշմարտութիւնը, որ հայերի կոտորածները կազմակերպուեցին կեդրոնական կոմիտէի հրամաններով։ Այդ հրամանները հաղորդուեցին առանձին պատուիրակների միջոցով եւ գործադրուեցին աւազակների ձեռքով իր իսկ կենտրոնական կոմիտէի հսկողութեամբ»։ (La Renaissance, December 15, 1918, No. 7)!

* * *

«Եթէ խաղաղութեան շարժումը պայքարում է այն բանի համար, որպէսզի վաղեմութեան ժամկէտ չլինի մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւնների համար, ապա դա արւում է այն հաշուով, որպէսզի ապագայում սարսափի այդ ակտերը չկարողանան անգամ ծնուել որոշ խելագարների ուղեղներում։ Այդ գործը արդար է եւ այն պէտք է յաղթանակի։ Ահա թէ ինչո՞ւ ենք մենք լիշում հայերի ջարդի մասին»։ (L'Humanité, 23 Avril, 1965)!

The Genocide of Armenians According to the Documents of the Trial of the Young Turks

Eighty years ago the first case of Genocide in the 20th century took place.

On April 24, 1915 more than 600 Armenian intellectuals—doctors, poets, teachers, politicians and others—of the Armenian community in Constatinople were arrested, exiled and executed. This tragic event was only the beginning of a cruel policy of deportation and massacre of the Armenian nation in the Ottoman Empire.

The Armenian Genocide was accompanied by a massive program of deportation. The survivors of this horror were forced to march into Syrian deserts and during the march many of them lost their lives due to exhaustion, torture, starvation and disease.

In fact, the deportation was mostly the execution of Western Armenians. As the United States ambassador in Istanbul Henry Morgenthau confirmed; "The real purpose of the deportation was robbery and destruction; it really represented a new method of massacre. When the Turkish authorities gave the orders for these deportations, they were merely giving the death warrant to a whole race; they understood this well, and, in their conversations with me, they made no particular attempt to conceal the fact." (H. Morgenthau, Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 309).

Merciless mass deportations and massacres of Armenians from towns and villages in Western Armenia, as well as from localities with Armenian populations in Asia Minor had entirely nothing to do with measures being taken for military reasons, as the question of annihilating the Armenian people had been worked out and settled beforehand by the Central Committee of the "Ittihad ve Terakki" (Union and Progress) Party. To solve the Armenian problem they had chosen the total extermination of Western Armenians. The war presented a suitable occasion for them to annihilate Armenians once and for all, as well as to settle accounts with other peoples so that the Empire became purely Turkish.

Soon the news of mass deportations and atrocious massacres of Western Armenians spread all over the world, stirring up a violent wrath and protest everywhere. Representatives of progressive mankind and organizations condemned the policy of barbarous genocide carried out by the Young Turks and demanded putting an immediate end to it, to return the deported Armenians to their homes. On May 24, 1915, the governments of Great Britain, France and Russia jointly warned the Sublime Porte that they regarded persecutions and massacre of Armenians in Turkey as an appalling action against humanity and civilization, and its

perpetrators would be held strictly responsible. Unfortunately, this initiative likewise did not have any results. The Young Turk government continued widely and mercilessly to carry out its adopted policy, the victims of which became more than one and a half million Armenians.

When World War I came to an end, broad masses of people all over the world demanded the Turkish criminals to bear responsibility for organizing the slaughter of Western Armenians. Outstanding political figures, men of science and cultural workers of different nationalities in condemning articles and publications, raised their voice of protest.

Yielding to this strong wave of protest and aspiring to detach itself from the discredited Young Turk government, the new cabinet formed just after the Moudros Armistice of 1918, with the leadership of Ahmed Isset Pasha, adopted a resolution to institute legal proceedings against the Young Turk government leaders, as well as members of the Central Committee of the Union and Progress Party for drawing the Ottoman Empire into war and organizing the deportation and massacre of Armenians. Subsequently, upon a decree of December 16, 1918, inquiry courts were formed (whose chairman was Mazhar Bey, the former Vali of Ankara), which began to collect accusatory evidence concerning the massacre of Western Armenians: cryptographed telegrams, official documents, instructions and orders, as well as eye-witness accounts. Provinces in the Ottoman Empire were divided into ten investigatory districts with prosecutors, examining judges and secretaries for each. At the same time, the press promoted extensive work to reveal the criminals and bring them to trial.

A number of Young Turk ministers and party leaders, district executive secretaries, commissioners, governors, servicemen and other officials were arrested. However, the immediate initiators and organizers of Armenian massacres had time to flee, taking refuge in Germany.

The first, second and third court martials were formed in Istanbul on January 8, 1919. Though the law made provisions to try criminals at sites where the crimes had been committed on February 5, 1919, the extraordinary court martial of Istanbul, at its first session on the criminals of the Yozghat deportation and massacre, adopted a special resolution to try the accused in Istanbul.

On March 8, 1919, by a special edict of Sultan Mehmed VI Vahideddin (1918-1922), the Young Turk party leaders and ministers were submitted to investigation at the extraordinary court martial of Istanbul.

The trial of the Young Turk government leaders and members of the Central Committee of the Union and Progress Party began in Istanbul, on April 28, 1919 and went on intermittently until June 26. During the six sessions that took place in May, those subjected to examination were basically the members of the Central Committee of the Union and Progress Party, Grand Vezir Said Halim Pasha and several ministers. But under inexplicable circumstances, on May 28, seventy-seven persons were exiled by the English headquarters from prison to Malta, and the trial ceased. It recommenced in June with new accusatory testimonies. At the seven sessions of the process in June, state officials Huseyin Hashim Bey, the Minister for Communications, Rifat Bey, the Senate President, also (Shaikhul Islams), Esed, Hayri and Musa Kiazim

effendis, the ecclesiastic leaders of the country came up for trial. The sentence was passed on July 5, 1919. During these trials eleven party figures and statesmen of high standing were accused by default, and twenty present at the proceedings.

According to the trial procedure, Major-General Mustafa Nazim Pasha, Chairman of the Committee, first certified the identity of the accused, also the presence of their advocates. At the same time he declared that at extraordinary court martials the law did not make provisions for the presence of advocates during the trial for the defense of those accused. Then Shefik Bey, the judicial secretary, read the bill of indictment. At the same time, on the basis of item 372 of the criminal code, the chief prosecutor Mustafa Nazmi Pasha expressed approval to try those absent by default. In view of the advocates' objections both at the beginning and during the course of the trial, that "judicial questions connected with ministers and other high-ranking state officials are subject to discussions at the Supreme Court, not at extraordinary court martials," Mustafa Nazim Pasha pointed out in his speech that crimes specified in the bill of indictment had occurred not by virtue of office, but by their becoming participants in the crimes carried out by the Central Committee of the Party and its plenums.

Documents—cryptographed telegrams and letters brought in the first and successive accusatory acts, testify that deportations and massacres of Western Armenians had not been military or disciplinary measures of limited local character; they were aforethought and implemented absolutely on the initiative of the Party Central Committee, on the instructions and secret orders of a special center. In the bills of indictment and during investigatory sessions, the main stress was put upon the massacre of Western Armenians.

Lieutenant-General Vehip Pasha, the former commander of the Third Army at the Caucasian front, stated in his testimony at the trial that the question of exterminating Armenians and plundering their property was resolved by the Central Committee of the Union and Progress Party, and that Behaeddin Shakir Bey was the organizer and leader of blood-thirsty bands, around the Third Army.

That the "Teshkilat-i Mahsuse" or special organization which executed the massacre of Western Armenians, and put into operation on a special resolution of the Central Committee of the Union and Progress Party members, was submitted to examination at the second, fifth and sixth sessions of the trial. The trial revealed that Midhat Shukri Bey, the Chief President of the Central Committee of the Party and its members; Dr. Behaeddin Shakir, Dr. Nazim, Riza Bey, Atif Bey—the deputy for Ankara, Shukri Bey—Minister of Education, Halil—President of the Chamber of Deputies, Aziz Bey—the Security Supervisor, and Djevad the commandant of Istanbul, participated in the criminal activity of "Teshkilat-i Mahsuse," Talaat, Minister of the Interior, being the head of these criminals.

Two secret organizations worked under the name of "Teshkilat-i Mahsuse," one military, set up on the order of the War Ministry, with Suleiman Askeri Bey as leader. With the purpose of breeding strife against Russia among the Caucasian Moslems, this organization had the task of recruiting people familiar with the territory of the Caucasus and speaking languages of the native populations, and sending them secretly in groups over the border.

The Ministry of the Interior had immediate disposal of the second "Teshkilat-i Mahsuse," which implemented the deportation and massacre of Western Armenians, with Behaeddin Shakir at the head.

Investigation materials ascertain that important documents concerning the Central Committee of the Union and Progress Party and "Teshkilat-i Mahsuse" were for the most part destroyed. Mainly, Dr. Nazim was guilty of this and had carried off the party archives to conceal the dealings and the perpetrated crimes of the Committee. However, with all prudence (instructions were often given verbally) a fair amount of telegrams, letters and written material fell into the hands of the extraordinary court martial that indisputably confirmed the collaboration among the central committee of the Union and Progress Party, the Ministry of Interior and "Teshkilat-i Mahsuse" during the deportation and massacre of Armenians and showed the intense activity of district executive secretaries in recruiting criminals for "Teshkilat-i Mahsuse."

The court found the officials guilty of being well informed about massacres and other violences, and not taking any practical step to avert them. On the contrary, their abstention promoted to the continuation of the tragedy. For instance, Sheikh-ul Islam Musa Kiazim Effendi, who could have had a great influence in hampering the ferocious acts as an ecclesiastic leader, did not take any essential step.

In a sentence passed on July 5, 1919, stress was put upon the details of massacres of Western Armenians and plunder of their property, facts were pointed out about violations of the constitution by the Youg Turk party central committee and government leaders. One of the important pieces of evidence was the question of participation in World War I, without a Medjlis resolution, as well as abuses and speculation in trade and especially in provisional matters.

According to the first point under item 45 of the civil criminal code, the court pronounced a death sentence for Talaat, Enver, Djemal and Nazim, and by the second point under item 45 and the last point under item 55, Djavid, Mustafa Sheref and Musa Kiazim were condemned to exile for 15 years.

Trial sessions of the Union and Progress Party district executive secretaries and other officials took place on June 21, 23 and 28, 1919. The sentence was pronounced very late, on January 8, 1920, by the committee of the first extraordinary court martial in Istanbul. Thirty-six persons were prosecuted according to data in the bills of indictment and the sentence.

In the bill of indictment of June 19, 1919, it was pointed out that district executive secretaries, in the course of their activity, upon verbal and written secret orders received from the Party Central Committee and the government, had illegally intervened in government matters and participated in the crimes committed by Talaat Pasha and his associates.

During the examination of executive secretaries the main stress was likewise placed on the question of deportation and massacres of Western Armenians, plunder of their property. To alleviate their guilt, the executive secretary of Edirne and other defendants tried to find ways to justify themselves, that deportation was carried out according to the law and governmental orders Mustafa Nazim Pasha, the committee chairman, refuting their false testimony,

revealed that deportation was a mere pretext to execute the extermination of Armenians.

In the sentence passed on January 8, 1920, it is noted that some of the executive secretaries and commissioners mentioned above contributed to the initiative of the Central Committee and organized the massacre of Armenians and plunder of their property by means of murderers and other criminals recruited in their branches.

During the above-mentioned trials, the extraordinary court martial in Istanbul also made a thorough investigation of the immediate executors of deportation and massacres in the provinces. By default for their perpetrated grave crimes, the court also condemned to death a number of executive secretaries and others to imprisonment for ten or more years.

The records and resolutions of the proceedings were issued in small circulation in the supplements of the Turkish official newspaper "Takvim-i Vekayi" (in Arabic script). All the title pages had the following heading "THE RECORD OF THE TRIAL AT EXTRAORDINARY COURT MARTIAL FORMED UPON HIS MAJESTY PADISHAH'S IMPERIAL ORDER OF MARCH 8, 1335 (1919)."

Materials of the trial of the Central Committee of Union and Progress Party members, the Young Turk government leaders, party district executive secretaries and officials that are connected with the deportation and massacres of Western Armenians are fully translated into Armenian and were published with commentaries and introduction by me in 1988 for the first time. (The book has been translated and published in the English and Arabic languages as well).

Trial materials give a definite view of the organization and execution of the deportation and massacres of Western Armenians. However, the process did not, in fact, solve and could not solve the retribution for the blood of one-and-a-half million martyred Armenians, and the recompensation of material losses of property abandoned which reached billions. The Armenian people were deprived of their homeland, western Armenia.

Judges, of course not in all cases, demonstrated necessary consistency. Many of them, being connected with the Young Turks, were often inclined not to delve deep into the accomplished facts, and not to adopt strict restrictions. Derelictions were made in the course of the trial. For instance, the process over district executive secretaries took place in June 1919, while sentence procrastinating was confirmed in January 1920. If there did not arise any doubt in condemning to death defendants brought to trial by default, unwarranted forbearance was shown in inflicting punishment upon those present.

Facts show that Ittihadists had set up insidious traps to prevent the natural course of the trial. They especially endeavored to influence members of the court martial, to alleviate the guilt of the accused. It must be noted that the policy of persecuting and annihilating the debris of western Armenians, continued during the period of Kemalist nationalism during 1919-1922. Turkish armies organized new massacres in western and eastern Armenia, as well as in some parts of Turkey during which 250,000 Armenians were martyred.

Unfortunately Turkey, after all these years, refuses to acknowledge these terrible

deeds. In our days, Turkish ruling circles and historians continue to persistently reject the Genocide of western Armenians, and on the whole, and aim at falsifying the history of the Armenians people by various means and anti-academic publications..

Not long ago, Turkish Prime Minister Tansu Ciller, during an interview with an "Azk" reporter even announced that "The Armenians did not undergo a Genocide in any way. So, Turkey and the Turks cannot be blamed for something that did not happen." (See "Nor Or," August 6, 1994).

It's strange but obvious. Nowadays, some scholars like Bernard Lewis and others, are trying to propagate a version that 'the Turkish documents prove a policy of deportation, but not extermination." Bernard Lewis also stated, "There exists no serious proof of a decision and a plan by the Ottoman government trying to exterminate the Armenian people."

All these arguments are profoundly wrong and have nothing to do with reality. The whole world knew how the bloody Sultan Abdul Hamid and his successors, the Young Turks, committed a policy of Genocide to resolve the Armenian question, and how they took advantage of World War I as an opportunity to exterminate completely the Armenian population in the Ottoman Empire.

Not withstanding the ill-mentioned attempts of Bernard Lewis and Turkish falsifications, world opinion condemned and condemns the crime committed against the Armenian people. Naturally, after the end of the War, the trial of the Young Turk leaders was a great occurrence from the point of view of revealing the persecutions and genocide of western Armenians for all mankind.

ASBAREZ DAILY SATURDAY, APRIL 22, 1995

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 82-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ...էջ 1
2. ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Պրն.ՊԻԼ ՔԼԻՆԹԸՆԻՆ..... 9
3. ԲԱՑ ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Պրն. ՊՈՐԻՍ ԵԼՑԻՆԻՆ..15
4. ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.....20
5. ՈՉ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՐԱՎԱՋՈՒՐԿ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ ԵՒ ԹԱՆՋԻՄԱԹԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ /19-ՐԴ դար/.....32
6. ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՍԱՑԻՏ ՓԱՇԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....45
7. ԶԵՅԹՈՒՆԻ 1895-96 թթ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՆՐԱ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ 58
8. ԹԱԼԷԱԹ, ՃԵՄԱԼ, ԷՆՎԷՐ.....66
9. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ..70
10. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԽԱՉԻԿ ԱՄԻՐԵԱՆԻ ՀԱՅԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐ ԱՐԴԻ ԹՈՒՐՔԵՐԷՆՈՒՄ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ.....75
11. ՆՈՐ ՕՐ ԵՌՕՐԵԱՑ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՅԱՐԳԵԼԻ Պրն. ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ.....80

12. ԵՂԵՌՆԷՆ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐ. ՈՎ Է ԹԱԳՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ.....84
13. ԵՍ ԵՐԲԵՔ ՉԷԻ ՑԱՆԿԱՆԱՑ ՆՄԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՆԱԼ.....88
14. ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.....93
15. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ /անգլերեն/.....97